Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ստեղծագործ. Հ.

Հրատարակված արդյունքներ, որոնք ստացվել են հետազոտության ընթացքում ինքնուրույն գիտական նպատակներով:

Լեռ
1243

1999

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ԱՒԱՆԴԵԱԼ Ի ՁԵՒ ՀԱՐՅՄԱՆ

ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ

Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՅԱԿԱՆ

ՄԱՆԿԱՆՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԸՌԱՔԵԼԱԿԱՆ ԸԹՈՒՈՅ ՍՈ ՅԱԿՈՂԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

—1870—

Լեռ
1243

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ԱՒԱՆԴԵԱԼ Ի ՋԵՒ ՀԱՐՅՄԱՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ

Ի ՊԵՏՍ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՆՑ

ԱՀԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՅՈՎՍԷՓ Ս. ՄԱԼԻՋԵԱՆ ԴԱՄԱՏՈՒ
ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ռուսումնական ժողովոյ չաւերացեալ

815

ԳՐԱԴԱՐԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

-1870-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ի ԳԱ. ՍՍՀ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԷՈՐԳԷԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

[illegible]

ՇԱՐԱԶԱՅՔՆ

Թէդէս մինչեւ ցարդ Ի դէտս դրդրոցաց բարոյական գաւառագրքեր դակաս եղած չեն, եւ հետեւապէս բաւական օգուտ ընծայած են ազգային ուսանողաց, սակայն ես աչ ուսուցչական դաշտամանս նկատմամբ՝ թէ՛ իմ եւ թէ՛ դատեալի պաշտօնակցացս Սանուց ծնողաբար Սիրոյ նուէր մը մատուցանելու, մանաւանդ ազգային գաստիարակութեան փոքրիկ ծառայութիւն մը ընելու նպատակաւ՝ սոյն ՍԻՐՈՅ ՀՐԱՀԱՆԳԸ դատաստեղ փափագեցայ, յուսալով որ մեծագանձ ճոխութեան արժէքաւոր դիտի ընդունուի յիշեալ Ուսանողաց կողմանէ. զանազի իրենց նպատակ այս ընծայս չէ թէ իմ մտացածին խմբագրութիւնս է, այլ Աստուածային հոգեշունչ Պատգամաց շտեմարան մ՝ է, որոց անգին արժէքը բարձր ճանաչելով Աբբայ Մարգարէն՝ կ՝ըսէր:

«Բարի են ինձ օրէնք բերանոյ քո՝ քան ցիւաղարս ոսկւոյ եւ արծաթոյ: Ցնծացայ ես՝ ի բանս քո որպէս այն՝ որ գտանէ աւար բազում: Որպէս զի քաղցր են՝ ի քիմս իմ բանք քո քան ցմեղր բերանոյ իմոյ: Ճրագ են բանք քո ոտից իմոց, եւ շոյտ տան շաւղաց իմոց. Սաղմ. ՃԺԸ. 72, 162, 103, 105»:

Որովհետեւ Օրինաց մէջ Առաջին դատաւորքան Աստուածսիրութիւնն է, եւ Երկրորդն Ընկերասիրութիւնը, ինչոր նոյն նպատակաւ Սիրոյ Հրահանգիս բովանդակութիւնն աչ Աստուածսիրութեան եւ Ընկերասիրութեան վրայ ամփոփեցինք:

Եւ թէդէս Առաջին հրահանգին մէջ Աստուածասիրութիւնը, եւ Երկրորդին մէջ Ընկերասիրութիւնն ուսանեցինք, սակայն մարդկային Ընկերութեան քանի մի մերձաւորագոյն եւ կարեւորագոյն ճիւղերուն թուոյն համեմատ Ընկերասիրութենէ ետքն ուրիշ ութ հրահանգներ աչ աւելցուցինք, որոնք ընդ ամենն եղան տասն հրահանգ:

Պաշտամանս համեմատ սա օգտակար խորհուրդն աշ կատարեմ գրոցաց մէջ Հայկաբանութեան դարադոց Հայերենասէր Ընանոցաց, որ սոյն գրասգրքիս մէջ դարձունակեա բոշոր Աստուածաշունչ դատգամաց ջրաց Քերականական ջարժութիւն մ՝ աշ կրնան ընել դատուեշի Դասատուաց առաջնորդութեամբ. այսինքն այն գրաբառ հատուածները թարգմանեշով եւ շուծեշով, Սիրոյ հրահանգին հետ Հայերէն շեղուին մէջ աշ ըստ իմիք ջարժութիւն մ՝ ըրած կ՝ըշշան:

Որով եթէ իմ այս ծառայութիւնս կրկնակի շահաւետ ըշշայ Աշգային գեղաշարժ մանկանց, ցայն ինձի մեծ ջարձատրութիւն դիտի համարիմ, իսկ գործոյս մէջ գտնուած անխուսափելի թերութիւնները, կատարեշոց ներոցամտութեան կը յանձնեմ:

Յ. Ս. Մ.

Հբ. 1247
41243

«Սիրեացես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն մտաց քոց: Այս է մեծն եւ առաջին պատուիրան:
Երկրորդն նման ասին, Սիրեացես զընկեր քո իբրեւ զանձն քո:
Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք եւ մարգարէք կախեալ կան. Մատթ. ԻԲ. 37»:

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ԱՌԱՋԻՆ

Աստուածսիրութիւն

Սէրը՝ սիրելի առարկայի մը վրայ ուղղեցած բաղձանքներնուս հանդիսան է. և որովհետեւ երջանկութեան հասնելու փափաք մը կայ մարդուս բնութեանը մէջ, և երջանկացուցիչ պատճառն ալ ԲԱՐԻՆ է, վասն որոյ սիրոյ առարկան ԲԱՐԻՆ է. այսինքն այն՝ զոր մտօք կ'ըմբռնենք, թէ բարի է։

Բայց պէտք է գիտնամք՝ թէ ո՞րն է իսկապէս սիրելի բարին. վասն զի մարդիկ գըրեթէ ընդհանրապէս՝ շատ անգամ զգայական բաղձանաց թելադրութեամբ կ'ընտրեն զբարին, վասն որոյ բազմատեսակ բաղձանաց համեմատ՝ բարիներն ալ բազմատեսակ են, բայց չէ թէ ամէնն ալ ճշմարտապէս բարի են։

Այս կարծեցեալ բարիներուն մէջէն գի-
նին՝ արբեցողին համար պատուական բարի
է. ագահը ոսկւոյ և արծաթոյ սիրահարն է.
հեշտասէրը մոլեկան ախտերը կը պաշտէ,
և մարդոցմէ ոմանք իրենց խանդաբեալ ա-
խորժակօք այնչափ վրիպած են այս ընտրողու-
թեան մէջ, որ մինչեւ անգամ սոխը սխտորն
իրենց ախորժելի, և շաքարը դղուելի է. որոյ
ապացոյցն յայտնի կ'երեւի հիւանդներուն
կամ յղիներուն վրայ. զի անոյշը լեղի, և ա-
նուտելին՝ ուտելի կը թուի իրենց քմայ։

Ուրեմն այսքան սուտ բարիներուն մէջ
ճշմարիտ բարին որն ըլլալը որոշելու համար
պէտք է որ առողջ խորհրդով և ուղիղ դա-
տողութեամբ աչքէ անցուցնենք այն ամէն
բարիները, և անոնց մէջ միայն մէկ ճշմա-
րիտ բարի մը փնտռենք. վասն զի ինչպէս որ
խնդրոյ մը վրայով եղած զանազան կարծիք-
ներուն՝ միայն մէկ հատը ճշմարիտ կրնայ
ըլլալ, և ոչ թէ մէկ քանիները, այսպէս ալ
բոլոր այն կարծեցեալ բարիներէն վեր և
ճշմարիտ՝ միայն մէկ բարի մը կրնայ ըլլալ,
և կայ. և այն է՝ դերագոյն և ըստ ինքեան
ԲԱՐԻՆ. որ է ԱՍՏՈՒԱԾ (1)։

(1) Չիք ոք բարի, բայց մի Աստուած։ Մարկ. ԺԸ. 18։

Այս ուրեմն քանզի այսու դիտողու-
թեամբ՝ մեր երանական վախճանը միայն այն
դերագոյն բարին կրնայ ըլլալ՝ որ է ԱՍՏՈՒ-
ԱԾ, և մեր այս սուրբ բաղձանքն ուրիշ բա-
նով մը չկրնար յագենալ և հանգչիլ, բայց մի-
այն Աստուծով, վասն որոյ ամէն բարիներէն
առաւել պարտիմք զԱՍՏՈՒԱԾ սիրել։

Բայց որովհետեւ մեք ինքնին կարող չէ-
ինք ճանաչել զայն Դերագոյն Բարին՝ եւ
սիրել զնա, վասն որոյ նոյն ինքն ամենաբա-
րին Աստուած՝ որ մենէ աւելի կը սիրէ ըզ-
մեզ, դիտելով՝ որ իրմէ զատ ուրիշ երանա-
ցուցիչ վախճան մը չկայ մեզի համար, պա-
տուիրեց որ սիրեմք զինքը (1)։

Հարցո՞ւն. Որպիսի՞ սէր կը պահանջէ մե-
նէ Աստուած։

Պատասխանի. Կ'ուզէ՝ որ մեր բոլոր կարո-
ղութիւններով սիրեմք զինքը (2)։

Հ. Ի՞նչ պատճառաւ ամէն պատուիրան-
ներէն առաջ դրուած է Սիրեսցես զՏէր Ա-
ստուած քո։

Պ. Այն է՝ որ երկու կամքերն իրարու

(1) Սիրեսցես զՏէր Աստուած քո։ Բ. Օրէն. Յ.Ա. 1։
(2) Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց։ Մատթ. ԻԲ. 37։

հետ կը միացընէ. Աստուած ալ ուզելով որ մեր կամքը իրենին հետ միացնէ, հարկ համարեցաւ ամէն պարտաւորութիւններէ առաջ Սէր պահանջել մենէ. և ահա այս պատճառաւ պատուիրանաց կարգին մէջ Սէրը առաջին է. և այս է Դրաքելոյն ըսածը թէ (1)։

Հ. Ի՞նչպէս կ'ըլլայ 'է սո՞ւրբ սրտէ սիրելը։

Պ. Այն որ զԱստուած սիրել կ'ուզէ, ըզգուշանալու է որ ուրիշ ցանկութիւն մը չունենայ սրտին մէջ. վասն զի աշխարհասէր մարդն՝ Աստուծոյ սէրը չկրնար ունենալ սրտին մէջ (2)։

Հ. Ի՞նչ է 'ի մտաց բարեաց սիրելը։

Պ. Սիրոյ հետ Յոյս ալ պէտք է, և առանց յուսոյ կատարեալ չէ Սէրը. վասն զի հաստատ գիտնալու ենք, թէ Սէրն զմեզ առ Աստուած կը մերձեցընէ, և Աստուծոյ հետ մի հոգի կընէ (3)։

Ուրեմն պէտք է որ անընդհատ յուսով և վստահութեամբ ըսենք (4)։

(1) Գլուխ պատուիրանին սէր է՝ 'ի սուրբ սրտէ, և 'ի մտաց բարեաց, և յանկեղծաւոր հաւատոց։ Ա. Տիմ. Ա. 5։

(2) Եթէ ոք սիրէ զաշխարհս, ոչ է 'ի նմա սէր հօր. զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ և ցանկութիւն հաչաց և ամբարտաւանութիւն աստի կենացս, որ ոչ է առ 'ի հօրէ՝ այլ յաշխարհէ՛ աստի է։ Ա. Յովհ. Բ. 16։

(3) Որ մերձենայ 'ի Տէր՝ մի հոգի է։ Ա. Կորնթ. Զ. 17։

(4) Ինձ մերձենալ առ Աստուած՝ բարի է։ Սաղմ. ՀԲ. 28։

Հ. Ի՞նչ է յանկեղծաւոր հաւատոյ սիրելը։

Պ. Որովհետեւ Սիրոյ դաշինքն անկեղծ հաւատարմութիւն կը պահանջէ, ուրեմն պէտք է որ հաւատարիմ մնամք սիրոյ ուխտերնուս վրայ, և յարատեւեմք Աստուածասիրութեան մէջ. վասն զի այն որ երբեմն կը սիրէ, և երբեմն կը ցրտանայ. անհաւատարիմ կը համարուի Աստուծոյ առջեւը. վասն որոյ այնպիսիները կը յանդիմանէ Աստուած՝ Նոյի մարգարէին բերնովը (1)։

Հ. Թէ որ Աստուած մեզի պատուիրած չըլլար, մեք զմեզ պարտաւոր պիտի ճանաչէինք սիրել զինքը։

Պ. Այո՝ բնական իրաւունքը կը պահանջէ, որ ամէն մէկ մարդ իր բոլոր կարողութեամբ սիրէ զԱստուած, որ միայն անկէ ունեցաւ ինք զինքը բոլորովին։

Այլ թէ որ մարդ՝ բնականապէս կը սիրէ իւր ծնողքը, որոնք զինքը յաշխարհ բերելու պատճառ եղած են ծնողութեամբ, 'ի հարկէ ծայրագոյն իմն իրաւամբ զԱստուած սիրելու է, որ իւր հոգին ու մարմինը այն ստեղծեց յոչընչէ (2)։

(1) Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն։ Եսայ. ԻԹ. 15։

(2) Այսպէս Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, և փը-

Հ. Մեղի ըրած բարերարութեանցը փոխարէն պարտիմք սիրել զԱստուած։

Պ. Այդ՝ սեր չէր ըլլար, այլ սիրոյ վաճառականութիւն կ'ըլլար, ինչպէս որ կեղծաւոր մարդիկ կեղծ սիրով մէկզմէկ կը սիրեն ակնկալութեան մը համար. վասն զի այդպիսի սիրով՝ սիրելն չէս սիրեր, այլ անոր մէկ ունեցածը կը սիրես։

Բայց որովհետեւ Աստուած ճրիապէս սիրեց զմեզ երանելի ընելու համար, հարկ է որ մեք ալ մեր սերը իբրեւ վճարք չհամարիմք իւր բարերարութեանցը՝ որ անվճարելի են, այլ Դաւթի հետ աղաղակեմք (1)։

Հ. Սէրը ուրիշ առաքինութեանց հետ ինչպէս կը բաղդատի։

Պ. Պօղոս առաքեալ Հաւատքէն և Յոյսէն մեծ կը համարի Սէրը (2)։

Հ. Ի՞նչ կողմանէ մեծ կը համարի Սէրը։

Պ. Աստուծոյ կողմանէ նկատելով այնքան մեծ է Սիրոյ զօրութիւնը, որ զԱստուած յերկնից յերկիր իջեցուց, Տէրը ծառայ

էաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղեւ մարդն հոգի կենդանի։ Ծնն. Բ. 7։

(1) Զի՞նչ տայց արիտուր Տեառն ընդ ամենայնի զոր և եւ ինձ։ Սաղմ. ճԺԵ. 5։

(2) Բայց արդ մնան Հաւատք՝ Յոյս՝ Սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա Սէր է։ Ա. Կորնթ. ԺԳ. 13։

ըրաւ, սիւնի կապեց, խաչի վրայ բեւեռեց . . . . . (1)։

Իսկ մարդոյ կողմանէ նկատելով՝ սքանչելի է Սիրոյ մեծութիւնը. այնպէս որ՝ մեղաւորին բոլոր մեղքերը կ'ոչնչացընէ (2)։

Եւ առօր ապացոյցը կը տեսնենք այն ղղջացեալ կնոջ վրայ, որ աչքին արտասուօքը թրջեց Յիսուսի ոտքերը, ու մաղերովը սրբեց, և անուշահոտ իւղով օծեց. որուն համար ըսաւ՝ Տէրն մեր (3)։

Հ. Քանի՞ շարժառիթներ զմեզ Աստուածսիրութեան կ'առաջնորդեն։

Պ. Երեք։

Հ. Ո՞րն է առաջին շարժառիթը։

Պ. Աստուծոյ անբաւ երախտիքներն են զորոնք յիշելով միշտ՝ կը պարտաւորիմք երախտագէտ մնօք սիրել զԱստուած. և ընդհակառակն՝ կը ցրտանանք Աստուածսիրութենէ, երբ որ չեմք յիշեր թէ (4)։

Եւ երբ որ չեմք խորհիր՝ թէ (5)։

(1) Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈՐդին իւր միածին ետ։ Յովհ. Գ. 16։

(2) Սէր ծածկէ զբազմութիւն մեղաց։ Առակ. Ժ. 12։

(3) Թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց։ Դուկ. Է. 47։

(4) Ամենայն տուրբ բարիք և ամենայն պարգեւք կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի Հօրէն լուսոյ։ Յակ. Ա. 17։

(5) Նովաւ կեամք և շարժիմք և եմք։ Գործ. ԺԷ. 28։

Հ. Ո՞րն է երկրորդ շարժառիթը։

Պ. Ընթիւ Սուրբերուն հիանալի Աստուածսիրութիւնն է, որոնք Աստուածային սիրով վառուած՝ գրեթէ մուցան իրենց մարդ պէս ըլլալը, և ամէն տեսակ նեղութեանց՝ անարգանաց՝ և չարչարանաց մատնեցին ինք զինքնին, չի վախցան հղօր աշխարհակալներու ահաւոր սպառնալիքներէն, յօժարութեամբ և մեծ սիրով երկնցուցին իրենց պարծանոցը անոնց սուրերուն ներքեւ, ձանձրացուցին արիւնահեղ բռնաւորները, և զարմացուցին բոլոր աշխարհ. ընտրեցին Աստուծոյ սիրոյն համար մեռնիլը, քանթէ առանց Աստուծոյ կենդանի մնալը (1)։

Իսկ հաւատացելոց սիրտը Աստուածսիրութեան յորդորելու համար, սուրբ Եկեղեցին՝ Սրբոց գերմարդկային Աստուածսիրութիւնն այսպէս կը հանդիսացնէ (2)

(1) . . . . . կէսք կոշկոնձեցան . . . . . կէսք զտանջանաց և զգանից զիւրձ առին՝ զկապանաց և զբանտից։ Քարկոծեցան՝ աղոցեցան՝ փորձեցան՝ սպանմամբ սրոյ մեռան. շրջեցան լեռչկ մաշկօք և մորթովք այծենեաց, կարօտեալք՝ նեղեալք՝ չարչարեալք . . . . . յանապատի մոլորեալք և 'ի լերինս և յայրս և 'ի փոսսս երկրի։ Եբր. ԺԱ. 35—38։

(2) Մարկացեալք զմարդկային տկարութեան զգեստս, հաւատոյ վառեալ զգեստուք, յաղթեալք հակառակամարտիցն 'ի պատերազմի։ Մկրտեալք ընդ Քրիստոսի հեղմամբ

Ըստ չափեմք մեր Աստուածսիրութիւնը այն երանեալ Սրբոց Աստուածասիրութեանը հետ, և թէ որ անոնց պէս չենք կրնար մեռնիլ քաջութեամբ, գոնէ անոնց պէս ապրելու փափագով պաղատիմք առ Աստուած, թէ (1)։

Հ. Ո՞րն է երրորդ շարժառիթը։

Պ. Շրջանութեան փափագն է. որ բնականապէս միշտ կը մնածենք որտերնուս մէջ վասն զի չիկայ մարդ մը՝ որ թշուառ ըլլալու փափագի, այլ բոլոր մարդիկ անյագ բաղձանք մը ունին երջանիկ ըլլալու։

Երդ՝ Ճշմարիտ Աստուածապաշտը գիտնալով՝ որ երջանկութեան հասնելու միջոցն Աստուածսիրութիւնն է, և զինքը երջանկացընող առաջին և վերջին վախճանը միայն Աստուած է, կը ցանկայ և կը փափագի զԱստուած ձեռք բերելու, և անոր մերձենալու, և անոր հետ մի հոգի ըլլալու (2)։

Վասն զի ինչպէս որ ծարաւութիւնը ըլլալու կ'ստիպէ ջուր ըմպելու, նոյնպէս երա-

արեան 'ի մահ։ Հարպոն։

(1) Շնորհեա մեզ Տէր՝ ըստ օրինակի նոցա կեալ։ Ժամագիրք։

(2) Ա. Կորնթ. Զ. 17։

նութեան ծարաւութիւնն ալ (այսինքն փա-
փաքն) զմեզ կը շարժէ՝ որ զԱստուած վա-
յելելիք, և անով իբր մեր առաջին և վեր-
ջին վախճանով զմայլիմք։

Դաւիթ այս ծարաւութիւնը կրելով
իւր հոգւոյն մէջ՝ կը հառաչէր առ Աստ-
ուած (1)։

Հ. Ի՞նչ ճանապարհաւ երանութեան կը
հասնիմք։

Պ. Երանութեան հասնելու ճանապար-
հը մէկ հատիկ է, և այն ալ մեր Փրկիչ Յի-
սուս Քրիստոսն է, ինչպէս որ իւր ամենա-
սուրբ բերանովը յայտնած է. Թէ (2)։

Ուրեմն ով որ կը խոտորի այս անմոլար
ճանապարհէն խաւարը կը մնայ։

Լսէ դարձեալ՝ զոր կ'ըսէ (3)։

Հ. Աստուածասիրութիւնը ինչ ազդե-
ցութիւն կրնէ մեր սրտերուն վրայ։

(1) Ծարաւեայ առ քեզ հոգի իմ. քանի՞ պատիկ եւս և մարմին իմ։ Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ քեզ Աստուած։ Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած՝ հզօր և կենդանի. ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ։ Սաղմ. ԿԲ. 2։ ԽԱ. 2—3։

(2) Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք։ Յովհ. ԺԴ. 6։

(3) Ես եմ լոյս աշխարհի, որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար ոչ դնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց։ Յովհ. Ը. 12։

Պ. Աստուածասիրին սիրտը կ'արիանայ
ուրիշ ամէն տեսակ առաքինութեանց մէջ
ալ. այնպէս որ՝ Աստուածային Սիրով վառ-
ուած սիրտ մը՝ մի՛ չվախնար մեծամեծ վը-
տանգներէ, և Քրիստոսաբար Աստուածը
պէս կը համարձակի ըսելու (1)։

Հ. Սէրն այս ազդեցութիւնը անձնա-
սէր, աշխարհասէր մարդոց վրայ ալ կրնա՞
ներդործել։

Պ. Սահը ամէն բանի կը յաղթէ, ամէն
բան կը քակէ. կը կործանէ, կ'աւրէ. ինչպէս
որ հոգին մարմինէն կը բաժանէ՝ աշխարհէս
կը զատէ, այսպէս ալ առ Աստուած սիրոյ
կայծը՝ հերիք է որ անգամ մը բռնկի մեր
պաղած սրտերուն մէջ, ալ անկէ ետքը իբր
թէ բարոյապէս կը մեռցնէ զմեզ աշխարհի
և կը բաժանէ աշխարհէ և աշխարհասիրու-
թենէ։

Ասոր վրայ առնելով Սողոմոն՝ կ'ըսէ իւր
Երգոց երգոյն մէջ (2)։

(1) Ո՞վ մեկնեսցէ զմեզ զ'ի սիրոյն Քրիստոսի, զնեղութիւն թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտք, թէ սուր։ Հռովմ. Ը. 35։

(2) Հզօր է իբրեւ զմահ Սէր։ Երգ. Ը. 6։

Հ. Կարելի՞ չէ՞ որ հակառակ զօրութիւն մը յաղթէ ու թուլցնէ այս սէրը։

Պ. Բմենեւին մէկ բռնութիւն մը չկրնար տկարացնել այն հզօր Սէրը՝ երբոր ճշմարտապէս միացած է Աստուածասիրին կամքը Աստուծոյ կամացը հետ։

Այս ճշմարտութեան յայտնի ապացոյցն այն է, թէ սրբան Սուրբեր Աստուածային Սիրով զօրացած՝ կարող եղան սոսկալի տանջանաց դէմ դնելու, և մինչեւ իսպառ անյողդողդ մնալով իրենց հաւատոյն մէջ՝ զարմանալի արիութեամբ մահը յանձն առին, եւ չտկարացան, չթուլցան, չյաղթուեցան, այն հզօր բռնաւորներուն կատաղութենէն։

Լսէ՛ Աղօթն ընտրութեան ինչ կը բարբառի իրաւացի պարծանօք (1)։

Հ. Աստուածսիրութիւնը ինչ ներդործութիւն պէտք է ընէ մեր մեղասէր բնութեան վրայ։

(1) Քանզի հաստատեալ եմ, թէ ոչ մահ և ոչ կեանք՝ ոչ հրեշտակք և ոչ իշխանութիւնք՝ և ոչ որ կան՝ և ոչ հանդերձեալքն՝ և ոչ զօրութիւնք՝ և ոչ բարձրութիւն՝ և ոչ խորութիւն՝ և ոչ այլ ինչ արարած՝ կարեն մեկնել զմեզ 'ի Սիրոյ անտի Աստուծոյ, որ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։ Հռովմ. Ը. 38։

Պ. Ճշմարիտ Աստուածսիրութիւնը պէտք է որ մեղաց ատելութիւն պատճառէ 'ի մեզ։ Այս խրատը կուտայ մեզի նաեւ Աստուածասէր մարգարէն (1)։

Հ. Աստուած սիրելով միանգամայն աշխարհս ալ կրնանք սիրել։

Պ. Աշխարհի սէրը բացարձակապէս արգիլուած է այն ամենուն, որոնք որ Քրիստոսի աշակերտեալ են (2)։

Վասն զի աշխարհասիրութիւնը նշան է անաստուածասիրութեան (3)։

Վերջապէս աշխարհասէրն ինքզինքը թշնամի կ'ընէ Աստուծոյ (4)։

Հ. Ո՞ր կերպ սիրելն արգիլուած է։

Պ. Չպիտի սիրեմք Աստուծոյ հետ, այլ Աստուծոյ համար։ զի թէ որ Աստուծոյ հետ ուրիշ բաներ ալ սիրեմք, ըսել է՝ որ՝ քիչ կը սիրեմք զԱստուած։ վասն զի շատ առարկաներու բաժնուած սէրն, հարկաւ ամբողջ և

(1) Ոյք սիրէք զՏէր, ատեցէք զչարութիւն։ Սաղմ. ՂԶ. 11։

(2) Մի՛ սիրէք զաշխարհ, և մի՛ որ ինչ յաշխարհի է։ Ա. Յովհ. Բ. 15։

(3) Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է 'ի նմա սէր Հօրն։ Ա. Յովհ. Բ. 16։

(4) Սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Աստուած։ զի որ որ կամիցի սիրել զաշխարհս, թշնամի առնէ զանձն իւր Աստուծոյ։ Յակ. Դ. 4։

կատարեալ չքլար, այլ մանաւորեալ սէր կ'ըլայ, և հեռեւապէս տկար և դաղջ։

Վասն որոյ ճշմարտապէս սիրողն այնպէս բորբոքած կ'ըլայ սիրով, որ իւր սիրելիէն զատ ուրիշ մէկը չկրնար միտքը բերել։

Ըրդ՝ թէ որ մարմնաւոր սիրոյ համար հարկ է զի (1)։

Ուրեմն որչափ եւս առաւել հարկ է ամէն բան թողուլ վասն սիրոյն Քրիստոսի որ կ'ըսէ (2)։

Հ. Իրաւունք է որ՝ սիրողն սիրուելու է իւր սիրելիէն. ուրեմն թէ որ մէք զԱստուած կը սիրեմք, նա ալ զմեզ կը սիրէ՞։

Պ. Յիմար կամ ամբարիշտ է այն անձը, որ Աստուծոյ մարդասիրութեանը վրայ կը թերահաւատի՝ երբ որ գիտէ ալ. թէ (3)։

(1) Թողէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ։ ծննդ. բ. 24։

(2) Որ սիրէ զհայր կամ զմայր առաւելքան զիս, ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուսար կամ զդուսար առաւելքան զիս. չէ ինձ արժանի։ Մատթ. ժ. 37։ Եթէ ոք գայ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր՝ և զմայր՝ և զկին՝ և զորդիս՝ և զեղբարս՝ և զքոյր՝ նաեւ զանձն եւս իւր. ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Ղուկ. ժդ. 26։ Ամենայն ոք 'ի ձենջ՝ որ ոչ հրաժարեսցի յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Ղուկ. ժդ. 55։

(3) Անդնակս սիրեաց Աստուած զաշխարհս. Մինչեւ զՈրդին իւր զմիածին եւս։

Ընկէ աւելի գերօրինակ Սէր կ'ըլայ։

Վասն որոյ անտարակոյս հաւատալու եմք. որ եթէ մէք զինքը սիրեմք, անշուշտ ինքն ալ զմեզ կը սիրէ (1)։

Հ. Մեր սիրոյն փոխադարձ կըսիրէ ըզմեզ Աստուած։

Պ. Մէք զինքը չսիրած՝ առաջ ինք սիրեց զմեզ (2)։

Հ. Մէք այնչափ կրնամք սիրել զԱստուած՝ որչափ որ կը սիրէ զմեզ Աստուած։

Պ. Աստուած անսահման էակ ըլլալով՝ իւր սէրն ալ անհուն, անսահման և անչափ է. իսկ մարդուս թէ կեանքը և թէ կարողութիւնը չափի ներքեւ ու սահմանաւոր ըլլալուն համար՝ չկրնար անչափապէս և մշանջենապէս սիրել, այլ կենացը հետ իւր սէրն ալ կը լմննայ օր մը. (թէպէտ անմահ հոգին մարմինէն զատուելէն ետքը՝ նոր և յաւիտենական սէր մը կ'սկսի 'ի հանդերձեալն)։ Այս պատճառաւ մեր առ Աստուած սէրը շատ տկար է համեմատութիւն մարդասիրութեան Աստուծոյ, որովհետեւ սահմանա-

(1) Որ սիրէ զիս, սիրեսցի 'ի Հօրէ իմմէ, և ես սիրեցից զնա։ Յովհ. ժդ. 21։

(2) Մէք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ։ ա. Յովհ. դ. 19։

ւոր կարողութեան արդիւնքն ալ սահմանաւոր կ'ըլլայ։ Այս ճշմարտութիւնը մարդապէն Դաւիթ ալ կը հաստատէ ըսելով (1)։

Բայց եղան այնպիսի Սուրբեր և Կուսանք՝ որ իրենց կոպարին տանելուն չափ տանջանքներու դիմանալէն ետքը, անցան իրենց մարդկային կոպարը, և դերմարդկային արիութեամբ զոհեցին իրենց կեանքը Աստուծոյ սիրոյն համար, և իրենց սահմանաւոր կարողութեան պակասը իրենց աւրինովը լրացուցին՝ Թիթառան պէս Աստուածային Սիրոյ բոցոյն մէջ նետուելով։

Հ. Աստուած իւր Որդին ինչ նպատակաւ տուաւ աշխարհի։

Պ. Որպէս զի յաւիտենական Արդարութեան դէմ մեղապարտ եղող մարդկային ազգին քաւութիւն ընէ, և յաւիտենական մահուանէ կենդանացնէ զանոնք (2)։

(1) Ահա չափով եղիր զաւուրս իմ, և կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ, սակայն ամենեւին ընդունայն է ամենայն մարդ՝ մնալի։ Սաղմ. ԼՀ. 7։

(2) Յայսմ երեւեցաւ Սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զՈրդին իւր 'ի քաւութիւն մեղացս մերոց։ Ա. Յովհ. Կ. դ. 9—10։

Հ. Սէր արժանաւորութիւնը համար սիրեց Աստուած զմեզ։

Պ. Բնաւ ամենեւին արժանաւորութիւն չունէինք Աստուածային այդ անչափ Սիրոյն։ այլ ինքնին (1)։

Հ. Աստուծոյ Սէրը ինչ արդիւնք բերաւ մեր վրայ։

Պ. Աստուած իւր հայրական անձառելի Սիրովն զմեզ իրեն Որդեգիր ըրաւ (2)։

Հ. Թէ որ Աստուած զմեզ հայրական սիրով կը սիրէ իբրեւ որդիք, ուրեմն ինչո՞ւ համար երբեմն կը պատժէ զմեզ։

Պ. Այդ ալ դարձեալ իւր որդեսիրութեանն ապացոյցն է. զի (3)։

Հ. Սիրոյ զանցառութենէն ինչ կը հետեւի։

Պ. Ամէն պատուիրանաց զանցառութիւնն հնազանդութեան դէմ մեղք է,

(1) Յայտնեաց Աստուած զսէր իւր 'ի մեզ, զի մինչդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ։ Հռովմ. Ե. 8։

(2) Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի Որդիք Աստուծոյ կոչեսցուք։ Ա. Կ. Յովհ. գ. 1։

(3) Զոր սիրէ Տէր՝ խրատէ, ասնչէ զամենայն որդի՝ զոր ընդունի։ Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Աստուած. զի որդի է՝ զոր ոչ խրատիցէ Հայր։ Եբր. ԺԲ. 6—7։

բայց Աստուծոյ սիրոյն դէմ մեղանչելը՝ դիւական ապերախտութիւն մը համարուելով, սոսկալի է սպառնալիքը լսէ. (1)։

Հ. Ի՞նչ նշանաւ կը ճանաչուի զԱստուած չը սիրողը։

Պ. Թէ որ մէկը եղբայրասէր չէ, նշան է թէ նա զԱստուած ալ չը սիրեր. վասն զի(2)

Հ. Ճշմարիտ Աստուածսիրութիւնն ի՞նչ պայմանի վրայ հաստատուած է։

Պ. Ճշմարիտ և կատարեալ սէրն այնպիսի ուխտ մ'է երկու սիրելիներու մէջ, որ իրարու հաճոյքը կատարելու. պատրաստ սիրտ մը կ'ունենան, այնպէս որ բնաւ մէկ մէկու անհաճոյ բան մը չեն ըներ։

Այսպէս՝ ճշմարիտ Աստուածասէրն ալ Աստուծոյ պատուիրանները պահելու, եւ ինքզինքն անոր ամենատուրբ կամին հա-

(1) Եթէ ոչ ոք սիրէ զտէր Յիսուս Քրիստոս, եղիցի նզովեալ։ Ա. Կորնթ. ԺԶ. 22։

(2) Որ ունիցի զկեանս ինչ զաշխարհիս, և տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք՝ և փակիցէ զդուռն իւր առ ի նմանէ, զիարդ Սէրն Ա՝ ի նմա իցէ։ Ա. Կն. Յովհ. Գ. 17։

Եթէ ոք ասիցէ թէ սիրեմ զԱ՝, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած՝ զոր ոչն է տեսեալ, զիարդ կարիցէ սիրել։ Ա. Կն. Յովհ. Դ. 20։

մակերպելու է. վասն զի (1)։

Հ. Պատուիրանները միայն արտաքին կերպով կատարողը վատահ կրնայ ըլլալ՝ որ ինքը ճշմարիտ Աստուածասէր է։

Պ. Միայն նիւթական պատուիրանապահութեամբ եղածը՝ խաբէական սէր կ'ըլլայ, այլ պէտք է որ մեր խիղճը վկայէ մեզի, թէ այն գործերին մէջ անխախտ կեցած եմք. անոր համար հարկ է՝ որ (2)։

Հ. Շնորհօք սուրբ Հոգւոյն սովորեցանք որ Աստուածսիրութեան ուխտն ու գործերը Աստուածային պատուիրանաց պահպանութիւնն է. արդ՝ փափագանօք կը հարցնենք, թէ ի՞նչ պատուէր ունի մեզի Քրիստոս Աստուած։

Պ. Որովհետեւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս խոստացած է մեզի, թէ (3)։

Ահա նոյն խոստմանը համեմատ իւր Ա-

(1) Այս է սէրն, զի գնասցուք ըստ պատուիրանաց նորա։ Բ. Յովհ. Ա. 6։

(2) Առաջի նորա հանդէս արասցուք որպէս մերոց . . . . . եթէ սիրտք մեր զմեզ ոչ դատանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած. և զոր ինչ հայցեմք՝ առնումք ի նմանէ. զի զպատուիրանս նորա պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք։ Ա. Յովհ. Կն. Գ. 19 և 21—22։

(3) Լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի։ Մատթ. Ժա. 30։

րելիներուն վրայ ծանր բեռ մը չդնելու համար, իւր բոլոր պատուիրաններն իբր թէ համառօտելով մը կ'ըսէ (1)։

Վասն որոյ մեք եւս այժմ վախճան տա, լով Աստուածսիրութեան այս փոքր 'ի շատէ Հրահանգին, սկսիմք յաջորդը ձեռք առնել, և ըսել Սրբազան պատգամներէն, թէ ինչ է (2)։

(1) Այս է պատուէր իմ զի սիրեսջիք զմիմեանս։ Յովհ. ԺԵ. 12։

(2) Սիրել զմիմեանս։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ԵՐԿՐՈՐԴ

(Ընկերասիրութիւն)

Ամենաբարի Աստուած մեր երանութեան պատճառ եղող Աստուածսիրութեան պատուիրանէն ետքը ԸՆԿԵՐՍԻՐՈՒԹԻՒՆ կը պատուիրէ մեզի՝ ըսելով (1)։

Որով զմեզ կ'զգուշացնէ մարդկային ընկերական կենցաղակցութեան մէջ պատահելիք շատ չարիքներէ. վասն զի ան որ անդամ մը ընկերն իր անձին պէս սիրել կ'ուխտէ, և կ'սկսի սիրել, ալ անկէ ետքը բնաւ դէշութիւն մը չկրնար ընել անոր. այսինքն ոչ կ'ատէ, ոչ կը նախանձի, ոչ կը բամբասէ, ոչ կ'անիծէ, ոչ կը զրպարտէ, ոչ կը թշնամանէ, ոչ կը կռուի, ոչ կը գողանայ անոր մէկ բանը, ոչ կ'սպանանէ, և ոչ փոքրիկ վնաս

(1) Սիրեսցես զընկերս քո իբրեւ զանձն քո։ Մատթ. ԺԹ. 19։

մը անգամ կը հասցընէ անոր, այլ ընդ հակառակին՝ կը սիրէ զանիկայ և կը պաշտպանէ անոր անձը, պատիւն, ինչքը, և անոր ամէն ունեցածը։

Արդ ուրեմն թէ որ մեր ընկերները սիրելու համար առաջուց պատրաստ սիրտ մը չունենանք, շատ հաւանական է՝ որ զանազան առիթներով մէջերնիս պատահին ատելութիւններ, կռիւներ, սխալանքներ, նախանձութիւն, բամբասանք, զրպարտութիւն, իրարու հոր փորել, մէկզմէկ ատեանները քարշել, դատաւորներու մատնել, բանտերու դատապարտել, և այլ անթիւ չարիք. ինչպէս որ միշտ ասոնց փորձը կը տեսնուի աշխարհի ժողովրդեան մէջ (Կը պատկառիմ ըսելու՝ թէ) նաեւ եղբարց կամ մերձաւորաց մէջ ալ շատ անգամ պակաս չեն այս տեսակ խռովութիւններ եւ դժտութիւններ, որոց առաջքն առնելու համար մէկ հատիկ հնարքն է (1)։

Հ. Ո՞վ է մեր ընկերը։

Պ. Այս հարցման պատասխանն Յիսուս տուած է՝ (Ղ՚ուկ. ժ. 29—37)։

Հ. Հին օրինաց մէջ ինչ հրահանգ կար

(1) Սիրել զընկերն իբրեւ զանձն։

Ընկերասիրութեան վրայով։

Պ. Մեզ սիրողները սիրել, ու մեր թշնամիները ատել։ Այս էր հին օրինաց հրահանգը (1)։

Հ. Իսկ Նորհաւատեան օրինաց վարդապետը Յիսուս Քրիստոս՝ որ կըսէր թէ՝ (Դի համարիս եկեր եկի ը-ծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի ը-ծանել՝ այլ լնու-լ)։ Սիրոյ համար ինչ հրահանգ ցուցուց մեզի իւր Սուրբ Աւետարանին մէջ։

Պ. Հնոյն հետ համեմատելով շատ կատարեալ և վսեմ պատուէր մը աւանդեց մեզի հետեւեալ խօսքերով (2)։

Վարդապետին նմանող սրբազան առաքեալն Պօղոս ալ նոյն անյիշաչարութիւնը կը քարոզէ Հռովմայեցւոց՝ այսպէս ըսելով (3)։

(1) Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո։ Մատթ. ե. 45։

(2) Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց։ Օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս արարէք 'ի վերայ նեղչաց ձերոց . . . . . և եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք որդիք Բարձրելոյն. զի նա քաղցր է 'ի վերայ չարաց և ապաշնորհաց։ Ղուկ. զ. 27—28, և 35։

(3) Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք և մի անիծանէք։ Մի ումեք չարի չար հատուցանէք։ Եթէ քաղցեալ իցէ թշնամին քո, հաց տուր նմա. և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա։ Հռովմ. ժբ. 14, 17, 20։

Հ. Մեղ սիրողները միայն սիրել աւելի արդարագոյն չէ՞։

Պ. Վասեմ ու ազնուական գործ է ատելն ալ սիրելը. որովհետեւ սիրելին սիրելը ամէն մարդոյ գործ է. իսկ թշնամին սիրելը առաքինի ու վեհանձն մարդոյ գործ է. վասն զի (1)։

Հ. Մեր թշնամեաց թշուառութեանը վրայ սրտերնուս մէջ լոկ հաճութիւն մը զգալով կը մեղանչենք։

Պ. Աստուծոյ անհաճոյ վատ վրէժխնդրութիւն մ'է այդ. ինչպէս (2)։

Հ. Հին օրինաց ժամանակը թշնամին սիրելու գաղափար բնաւ չկար։

Պ. Այս վասեմ գաղափարն հին ժամանակն ալ կար, բայց քիչ ու մանաւոր մարդիկ միայն՝ յարգեցին զայն։

Երանելին Յոբ շատ մը բարեպաշտական պարտաւորութեանց մէջ իւր անարատ վարմունքն հաստատելու ատենը՝ իւր թշնա-

(1) Եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր, զի՞նչ շնորհ է ձեր, զի և մեղաւորքն զսիրելիս իւրեանց։ Եւ եթէ բարիս առնէք բարերարաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր, զի և մեղաւորքն զնոյն գործեն։ Ղուկ. Զ. 32։

(2) Եթէ կործանեսցի թշնամին քո՝ մի ուրա հարկաներ. և՝ ի գայթակղելն նորա՝ մի հպարտանար։ Առակ. ԻԴ. 17։

մեաց ալ ձախորդութեանը վրայ ուրախացած չըլլալը կը յայտնէ՝ ինք զինքը անիծելու երդման ձեւով այսպէս (1)։

Եւ Մովսէս աւելի վսեմ կերպով խօսեցաւ թշնամին սիրելու վրայով, զի չէ թէ միայն թշնամւոյն, այլ և անոր անասնոյն ալ կարեկից ըլլալ պատուիրեց՝ ըսելով (2)։

Հ. Ի՞նչ չափով պարտիմք սիրել մեր ընկերը։

Պ. Մեր անձին սիրոյ չափովը, ոչ պակաս և ոչ աւելի. վասն զի թէ որ մեր անձէն պակաս սիրեմք ընկերը, անչնորհաբար եղած կ'ըլլամք, ու չէ թէ ընկերասէր։

Ու թէ որ մեր անձէն աւելի սիրեմք, դարձեալ կը խոտորիմք այս պատուիրանին պահանջած սահմանէն. որովհետեւ։ Ինչ կերնիս ճիշդ մեր անձին պէս սիրելու հրահանգուած ենք Աստուծմէ։ Ղեւ. ԺԹ. 18։

(1) Եթէ ոտնհար եղէ՛ի վերայ գերեզման թշնամւոյ քումոյ, և ասացի՛ ի սրտի քումմէ՝ թէ վա՜յ ասա լուսիցէ ուստ կեն իմ զանէծս իմ՝ զզուեցայց ապա և ես՝ ի ժողովրդենէ իմմէ գոսովեալ։ Յոբ. ԼԱ. 29։

(2) Եթէ պատահեսցիս եղէն թշնամւոյ քո՝ կամ իշոյ նորա մոլորելոյ, դարձուսցես և հասուսցես զնա առ նա։ Եւ եթէ տեսանիցես զդրաստ ընկերի քո՝ անկեալ ընդ բեռամբ, մի զանց առնիցես զնովաւ, այլ յարուսցես զնա ընդ նմա։ Եւէյ. ԻԳ. 4—5։

Հ. Ճշմարիտ ընկերասիրութեան յատկութիւնները կամ նշանները որո՞նք են։

Պ. Պօղոս առաքեալ ընկերասիրութիւնը կը սահմանէ անոր բոլոր յատկութիւններովը այսպէս (1)։

Հ. Ընկերը առ երեսս սիրելն անշուշտ կեղծաւորութիւն է. ուրեմն ասոր վրայով յայտնապէս ինչ պատուէր կայ։

Պ. Ընկերասիրութեամբ պարտիմք սիրել մեր ընկերը ինչպէս կը պահանջէ Պօղոս առաքեալ Հռովմայեցիներէն և Կորնթացիներէն (2)։

Հ. Ընկերասիրութեամբ սիրելը ինչպէս կ'ըլլայ։

Միայն խօսքով ու լեզուով սիրելն կեղծաւոր սէր է. իսկ ճշմարիտ ու անկեղծ սէրը գործքով կը յայտնուի (3)։

(1) Սէր երկայնամիտ է, քաղցրանայ, սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ։ Ոչ յանդգնի, ոչ խնդրէ զկիրն, ոչ գրգռի, ոչ խորհի չար։ Ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն։ Ամենայնի տանի, ամենայնի հաւատայ, ամենայնի յուսայ, ամենայնի համբերի։ Ա. Կորնթ. ԺԳ. 4—7։

(2) Սէր առանց կեղծաւորութեան։ Հռովմ. ԺԲ. 9։ Բ. Կորնթ. Զ. 6։

(3) Ո՛ղորմակք՝ մի՛ բանիւք և լեզուաւք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ։ Ա. Յովհ. Կ. Գ. 18։

Հ. Ձի՞ թէ խօսքով այլ գործքով սիրելը ինչպէս կ'ըլլայ։

Պ. Գործնական ընկերասիրութիւնն հետեւեալ եօթն եղանակաւ կ'ըլլայ. այսինքն։

1. Ընկերին վրայ գութ և խնամք ունենալով կ'ըսէ Տէրն մեր (1)։

2. Ընկերին մինչեւ անգամ անասնոցը վրայ և անոր ամէն ունեցած բաներուն վրայ ալ հոգ տանելով։

Այս բաներն զանցառութիւն չընելու համար՝ նայէ օրէնքն ինչ կ'ըսէ (2)։

3. Ընկերին օգուտը մեր օգտին հետ խորհելով։ Թէ որ կ'ուզէք ընկերը ձեր

(1) Եղբարք գթածք, որպէս Ես Հայրն ձեր գթած է։ Ղուկ. Զ. 36։

(2) Գուցէ տեսեալ զարջառ և զոչխար եղբօր քո մոլորեալս 'ի Ճանապարհի՝ մի՝ անտես առնիցես զնոսա, այլ դարձուցանելով դարձուսցես զնոսա և ածցես առ եղբայր քո։ Ապա եթէ չիցէ մօտ եղբայրն քո առ քեզ, և ոչ ճանաչիցես զնա, ժողովեսցես զնոսա 'ի տուն քո, և եղիցին առ քեզ՝ մինչեւ խնդրեսցէ զնոսա եղբայր քո, և տայցես զնոսա։ Նոյնպէս արասցես զէշ նորա, նոյնպէս արասցես զհանդերձ նորա, նոյնպէս արասցես և զամենայն կորուսեալ եղբօր քո, որ ինչ կորնչիցի 'ի նմանէ՝ և գտանիցես, մի՛ իշխեսցես անտես առնել զայն։ Գուցէ տեսանիցես զէշ եղբօր քո կամ զերն անկեալ 'ի Ճանապարհի և զանց առնիցես զնոսաւ, այլ յարուցանելով յարուցցես ընդ նմա։ Բ. Օրէն. ԻԲ. 1—4։

անձին պէս սիրել (1)։

4. Ընկերին միաս հասցնելէ զգուշանալով. վասն զի (2)։

5. Ընկերին թէ տրտմութեանն առեն և թէ ուրախութեանն առեն կարեացը կը ցորդ ըլլալով. այսինքն պարտիմք (3)։

6. Ընկերին պակասութեանցը ներողամիտ ըլլալով. վասն զի (4)։

7. Մոլորեալ ընկերը իւր չար ճանապարհէն ետ դարձնելով։

Յակոբոս առաքեալ՝ այս սիրոյ գործոյս փոխարէն մեծամեծ վարձուց խոստմամբ կը քաջալերէ զմեզ՝ ըսելով (5)։

Դ. Գերբնական ձիրքեր ունենալն ու մեծամեծ զոհողութիւններ ընելն առանց սիրոյ՝ ինչ արժէք ունի։

(1) Մի՛ սք զանձին և եթ խնդրիցես, այլ և զընկերին։ Ա. Կորնթ. ԺԳ. 24։

(2) Սէր ընկերի իւրում՝ չար ոչ առնէ։ Հռովմ. ԺԳ. 10։

(3) Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացողս։ Հռովմ. ԺԲ. 15։

(4) Որպէս Աստուած Քրիստոսիւ շնորհեաց ձեզ, նոյնպէս և դուք պարտիք ներել միմեանց, շնորհել իրերաց, եթէ ուրուք զու�եքն արտունջ ինչ իցէ։ Կողոս. Գ. 13։

(5) Ե՛զարթք իմ՝ եթէ սք 'ի ձէնջ մոլորիցի 'ի ճշմարտութեան ճանապարհէն, և դարձուսցէ սք զնա, գիտասցէ՝ զի որ դարձուսցէ զմեղաւորն 'ի մոլորութեան ճանապարհէն խաւմէ. փրկեսցէ զոգի իւր 'ի մահուանէ, և ծածկեսցէ ըղձութիւն մեղաց։ Յակ. Կ. Ե. 19—20։

Պ. Այս հարցման համար՝ Պօղոս առաքեալին հետ սա պատասխանը տալու եմք ամէն մէկս (1)։

Հ. Ինչ տեսակ մարդոց հետ ընկերութիւն ընելու պարտաւոր եմք։

Պ. Հնար եղածին չափ ամէն մարդոց հետ խաղաղութեամբ վարուելու եմք։

Մանաւանդ հաւատացելոց վրայ աւելի համակրութիւն ունենալու եմք։

Այս հրահանգը կուտայ Պօղոս առաքեալ Հռովմայեցիներուն և գաղատացիներուն (2)։

Հ. Երբ որ մեզ գլխէ հանող չար մարդոց պատահիմք, ինչ ընթացք պարտիմք բռնել։

(1) Եթէ զքեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակացն՝ և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ զողանչեն։ Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, և գիտիցեմ զլսորհուրդս ամենայն՝ և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ։ Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ ապքատաց, և մատնիցեմ մարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Ա. Կորն. ԺԳ. 1—3։

(2) Եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն կալջիք։ Այսուհետեւ մինչեւ ժամանակս՝ 'ի ձեռս եկցուք բարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ։ Հռովմ. ԺԲ. 18։ Գաղատ. Զ. 10։

Պ. Ընանկ մարդոց հետ ամենեւին սրբոյ հաղորդակցութիւն ընելու չեմք, այլ շուտով պէտք է փախչիմք ու հեռանալ այնպիսիներէն։

Ասոնց հրապոյրներէն չխաբուելու համար՝ տես ինչպէս կ'զգուշացնէ զմեզ Սողոմոն իւր հետեւեալ իմաստուն խրատներովը (1)։

Հ. Սոլի ու մեղսասէր ընկեր մը սիրոյ արժանի է։

Պ. Ասանկ մէկը՝ թէ և Եղբայր ըսուածներէն ալ ըլլայ, չսիրելէ զատ՝ հեռը հայ անգամ ուտելու չեմք։

Ս. Յակոբի սաստիկ կերպով կը հրաժարեցընէ զմեզ Պօղոս առաքեալ՝ ասանկ եղբայրէ (2)։

(1) Որդեակ՝ մի խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք, մի ախորժեսցես՝ եթէ կոչեսցեն զքեզ և ասիցեն, Եկ ընդ մեզ՝ կորդ լեր արեան, ծածկեսցուք յերկրի զոյր արդար 'ի առաքապարուսցկցուք զնա կենդանւոյն իբրեւ զԺոխք, և բարձցուք զսիշատակ նոցա յերկրէ, և զստացուածս նոցա ըստ պէս պէս ըմբռնեսցուք, և լցուք զտունս մեր աւարաւ։ Զվիճակ քո արկ ընդ մեզ, քսակ հասարակաց ստացուք ամենեքեան, դանձարան 'ի միասին եղիցի մեր։ Որդեակ՝ մի երթայր ճանապարհ ընդ նոսա, խոտորեա զոտս քո 'ի շաւղաց նոցա Առակ. Ա. 10—15։

(2) Բայց արդ գրեցի ձեզ չխառնակիլ եթէ որ եղբայր անուանեալ՝ կամ պոռնիկ իցէ, կամ կռապաշտ, կամ անդամ, կամ, բամբասող, կամ արբեցող, կամ յափշտակող

Հ. Հաւատոյն կողմանէ կասկածելի եղողներու հետ ընկերութիւն պիտի ընե՞մք։

Պ. Ամէն այնպիսի դայթակղեցուցիչ մարդոց ընկերութենէն զգուշանալու եմք, ու մինչեւ անգամ բարեւ ալ տալու չեմք անոնց։

Պօղոս և Յովհաննէս սրբազան առաքեալները խստիւ կ'արգիլէն հաւատացեալներն ասանկներուն հետ հաղորդակցութիւն ընելէ՝ այսպէս (1)։

ընդ այպիսեանն և հայ մի՛ուտել։ Ա. Կորն. Ե. 11։

(1) Մի՛ ինչք լծակիցք անհաւատից. քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան. և կամ զի՞նչ հաւատարութիւն է լուսոյ ընդ խաւարի. և կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի՝ ընդ բելիարայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին. կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհենաց։ Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս և ասաց Աստուած, թէ բնակեցայց 'ի նոսա, և դնացից 'ի նոսա, և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդք։ Վասն որոյ ելէք 'ի միջոյ նոցա, և մեկնեցարուք՝ ասէ Տէր, և 'ի պիղծս մի մերձենայք։

Բ. Կորն. Զ. 14—17։

Ամենայն որ յանցանէ, և ոչ կայ 'ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ. որ կայ 'ի վարդապետութեանն, նա՝ և զՈրդի և զՀայր ընդունի։ Եւ թէ որ գայցէ առ ձեզ, և զվարդապետութիւնս զայս ոչ առնիցի. մի ընդունիցիք զնա 'ի տուն. և մի ողջոյն տայցէք նմա։ Եւ որ առաւցէ նմա՝ Ողջոյն, կոչգ վիցի չարեաց

Հ. Ընկերասիրութեամբ որ պատուիրանը կատարած կ'ըլլամք։

Գ. Ընկերասիրութիւնն ամէն օրէնքներուն ու պատուիրաններուն բովանդակութիւնն է. վասն զի (1)։

դորձոց նորա։ Բ. Յովհ. ԺԵ. 9—14։

(1) Ամենայն օրէնք 'ի մի բան կատարին։ 'Ի Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։ Գաղատ. Ե. 14։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ԵՐՐՈՐԴ

Եղբայրասիրութիւն

Մեր Եղբայրները՝ մեր Աշակերտները ու մեր Համազգիներն օտար ընկերներէ աւելի մեզի մերձաւորագոյն ըլլալնուն համար պէտք է որ զատոնք աւելի հարազատ սիրով մը սիրենք. զի թէ որ օտար ընկերը Ձեր անձին պէս սիրելը հրամայուած եմք, ուրեմն որչափ եւս առաւել անհամեմատ սիրով սիրել պարտիմք մեր Եղբայրներն ու Մերձաւորները որոնք կրկին սիրոյ արժանի են. մէկ մը՝ մարդկութեամբ մեր Ընկերները համարուելնուն իրաւամբ, մէկ մ'՝ ալ սերնդով մեզի հետ համարիւն ըլլալնուն պատճառաւ։

Արդ՝ քանի որ մէկը Եղբօր՝ ու Մերձաւորի՝ կամ Աղգակցի վրայով իւր սրտին մէջ փափուկ զգացում ունի, և իւր ներքին հա

մակրութենէն կը թելադրի զանոնք սիրելու, ինքնին համոզուած է այս ճշմարտութեան։

Իսկ ընդ հակառակն՝ թէ որ աբենակցութեան այն սուրբ յօդակապը խզելով, Եղբայրսիրութեան բնաբոյս համակրութիւնը մեղադրելի անդգայութեամբ թմրեցնէ սրտին մէջ. ալ անկէ եռաբբ-քիչ-քիչ եղբայրատեցութեան մոլեկան կրիցն անձնատուր կ'ըլլայ։

Բայց եղբայրսիրութեան համար բնութեան թելադրութենէն զատ ուրիշ դեղապղտն հարկ մը կայ վրանիս. այսինքն եթէ Աստուած զմեզ մահու չափ սիրեց, ամբարշտութիւն է՝ թէ որ մենք մէկդմէկ չսիրենք (1)։

Հ. Ո՞վ կը հրամայէ մեզի՝ մեր եղբայրները սիրել։

Պ. Աստուած (2)։

Հ. Ի՞նչ օրինակաւ սիրել պարտիմք մեր եղբայրները։

(1) Սիրելիք՝ եթէ Աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել։ Ա. Յովհ. Կ. Դ. 11։

(2) Այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յանուն որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս որպէս և նա մեզ պատուիրեաց։ Ա. Յովհ. Կ. Դ. 23։

Պ. Քրիստոսի տուած օրինակին պէս, ինչպէս որ բաւ է՝ աշակերտացը (1)։

Պօղոս ալ այս մտքով կը խրատէ Եփեսացիներն՝ ըսելով (2)։

Հ. Քանի՞ են ճշմարիտ եղբայրսիրութեան պայմանները։

Պ. Երեք, այսինքն Անկեղծ, Սուրբ պրկի-, և Հաստատուն։

Պետրոս առաքեալն կ'ընդունիմք այս հրահանգը (3)։

Հ. Ճշմարիտ եղբայրասէրն ինչ կը կոչուի։

Պ. Ծնունդ Աստուծոյ. ինչպէս որ կը վկայէ Սիրոյ քարոզիչ Սրբազան առաքեալն Յովհաննէս՝ 'ի սէր յորդորելով զմեզ այսպէս (4)։

(1) Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յովհ. ԺԳ. 37։

(2) Գնացէք սիրով, որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ։ Եփես. Ե 2։

(3) Զանձինս ձեր սրբով հնազանդութեամբ ճշմարտութեան, յեղբայրսիրութեան առանց կեղծաւորութեան 'ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս։ Ա. Պետր. Ա. 22։

(4) Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանսդի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ, յԱստուծոյ է ծնեալ և ճանաչէ զԱստուած։ Ա. Յովհ. Կ. Դ. 7։

Հ. Ովքե՞ր է արժանի Ճշմարիտ Եղբայրասէր կոչուելու։

Պ. Այն որ Ճշմարտապէս կը սիրէ զԱստուած, անշուշտ եղբայրասէր ալ է (1)։

Հ. Գործնական եղբայրսիրութիւնն ինչպէս կ'ըլլայ։

Պ. Հետեւեալ ութ եղանակաւ կ'ըլլայ. այսինքն։

1. Իրարու վրայ դուրթ ունենալով, Առաքեալը կը պատուիրէ մեզի՝ ըսելով. Թէ սէրը է որ ըլլաք. Յեղբայրսիրութեան առ Դեռնոս գրեցէք։ (Հռովմ. ԺԲ. 10) (2)։

2. Իրարու օգնելով. որով Քրիստոսի օրէնքը կատարած կ'ըլլանք. ինչպէս որ կ'ըսէ նոյն առաքեալն (3)։

3. Աղքատացեալ եղբօր պաշտպանութիւն ընելով. այսինքն (4)։

(1) . . . . . Զի որ սիրէ զԱստուած, սիրէ նա՝ եւ զեղբայր իւր։ Ա. Յովհ. Դ. 21։

(2) Լերուք ընդ միմեանս քաղցրութիւնք՝ զթածք . . . . . ։ Եփես. Դ. 32։

(3) Զմիմեանց բեռն բարձէք, եւ այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի։ Գաղատ. Զ. 2։

(4) Եթէ աղքատանայցէ եղբայր քո եւ տկարանայցէ ձեռօք, առ քեզ պարտպարեսցես զնա իբրեւ զեկն և զպանդուխտն, և կեցցէ եղբայրն քո՝ որ ընդ քեզն է։ Մի առնուցուս 'ի նմանէ վաշխ և տոկոսիս, և երկնչեցիս 'ի Տէրնէ

4. Աղքատ եղբարց վրայ խստասրտութիւն չընելով. ինչպէս որ Սովսէս կը պատուիրէր Իսրայէլացւոց (1)։

5. Վշտացեալ եղբարց կարեկցելով։ Տես ինչպէս աղդու կերպով կարեկցութեան կը յորդորէ զմեզ Առաքեալն՝ ըսելով (2)։

Աստուծոյ քումմէ, զի ես եմ Տէր։ և կեցցէ եղբայր քո ընդ քեզ։ Զարծաթ քո մի տացես նմա ընդ Տոկոսեաւ, եւ զկերակուր քո մի տացես նմա ընդ շարիաթիւ։ Ղեւտաց. ԻԵ. 35—37։

(1) Եթէ լինիցի 'ի միջի քումմ կարօտեալ յեղբարց քոց՝ 'ի միում 'ի քաղաքաց քոց՝ յերկրին զոր տացէ քեզ Տէր Աստուած քո, մի դարձուցանիցես զսիրտ քո, և մի կծկիցես զձեռն քո յեղբօրէ քումմէ կարօտելոյ, այլ ընդարձակելով արձակեսցես նմա զձեռն քո, և տալով տացես նմա փոխ որչափ և խնդրիցէ 'ի կարօտութեան իւրում։ Զգոյշ լեր անձին քում, դուցէ լինիցի բան ծածուկ անօրէնութեան 'ի սրտի քում և ասիցես, մերձ է ամն եօթներրորդ՝ ամն թողութեան, և չարամիտեսցէ ակն քո 'ի վերայ եղբօր քո կարօտելոյ, և ոչ տայցես նմա։ և բողոքեսցէ զքէն առ Տէր և լինիցին այն մեղք մեծամեծք։ Այլ պարգեւելով պարգեւեսցես նմա, և տալով տացես նմա փոխ որչափ և պիտոյ իցէ։ Եւ մի տրտմիցիս 'ի սրտի քում՝ զկնի տրոցն քոց նմա, զի վասն բանին այնորիկ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն գործս քո։ և յամենայնի յոր ինչ և մխեսցես զձեռն քո, զի ոչ պակասէ կարօտեալ յերկրի։ Վասն այնորիկ ես պատուիրեմ զբանս իմ զայս և ասեմ, ընդարձակելով արձակեսցես զձեռն քո յաղքատ և 'ի տառապեալ եղբայր քո՝ որ իցէ յերկրին քում։ Բ. Օրէն. ԺԵ. 7—11։

(2) Յուշ լիցին ձեզ կապեալքն որպէս թէ դուք ընդ նոսա կապեալ իցէք։ և շարչարեալքն, որպէս և դուք իսկ մարմնաւորք։ Եբր. ԺԳ. 3։

6. Եւ ասոնց համար աղօթք ընելով, ինչպէս որ միշտ խնդրուածք կ'ընէ Եկեղեցին՝ նեղելոց և տառապելոց համար։ Եւ ահա Աստուածաբանն ալ կը պատմուի թէ (1)։

7. Եղբօր պակասութիւնները ծածկելով. վասն զի (2)։

8. Եղբօր մեղի դէմ գործած յանցանքը ներելով և միշտ ներելով որոյ օրինակը կերևի Քրիստոսի տուած հրահանգին մէջ. ինչպէս (3)։

Հ. Եղբօր յանցանքը ներողներուն ինչ վարձք կայ։

Պ. Իրենց ալ մեղքերուն թողութի պի-

(1) Պետրոս 'ի պահեստի էր 'ի բանտի, և աղօթք ստէպ լինէին Եկեղեցւոյն վասն նորա առ Աստուած Գործ. ԺԲ. 5։

(2) Զատելութիւն դրդուէ հակառակութիւն, և զամենայն որ ոչ հակառակին ծածկէ Սէր։ Առակ. Ժ. 12։

(3) Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և ասէ, Տէր քանիցս անգամ եթէ մեղցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև յե՞օթն անգամ։ Ասէ ցնա Յիսուս, ոչ ասեմ քեզ թէ մինչև յեօթն անգամ, այլ մինչև յեօթանասնեկին եօթն։ Մատթ. ԺԸ. 21—22։

Եթէ մեղցէ եղբայր քո սատանա նմա. և եթէ ապաշխարիցէ թող նմա։ Եւ եթէ եօթն անգամ մեղցէ քեզ, և եօթն անգամ դարձցի 'ի քեզ և ասիցէ. Ապաշխարեմ. թողցես նմա։ Ղուկ. ԺԷ. 4։

տի ըլլայ (1)։

Հ. Եղբօր յանցանքը չներողն ինչ պատիժ պիտի կրէ։

Պ. Իրեն ալ մեղքերուն թողութիւն չը պիտի ըլլայ (2)։

Բայց Քրիստոս այս բանին աւելի ահարկու օրինակ մը կուտայ, հետեւեալ առակաւոր պատմութիւնն ընելով (3)։

(1) Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր։ Մատթ. Զ. 14

Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի և Հայրն ձեր որ յերկինս է։ թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Մարկ. ԺԱ. 25։

(2) Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։ Մատթ. Զ. 15։

(3) Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ հաշիւ առնուլ 'ի մէջ ծառայից իւրոց։ Եւ երբեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարաց։ Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա, և զորդիս. և զամենայն որ զինչ և ունիցի և հատուցանել։ Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա և ասէր, Երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ արձակեաց զնա, և զվիճն եթող նմա։ Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան, և կալեալ զնա խեղդէր և ասէր, հատո ինձ զոր պարտիսդ։ Անդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա և ասէր. երկայնամիտ լեր առ իս. և հատուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր, այլ երթեալ արկ զնա 'ի բանտ, մինչև հատուցցէ զպարտն։ Իբ-

Հ. Եղբայրները պարապ տեղն իրարու բարկանալուն համար կըմեղանչե՞ն։

Պ. Բարկութիւնը Աստուծոյ դէմ մեղք է. մանաւանդ պարապ տեղն եղբօր վրայ բարկանալը՝ և զանիկայ նախատելը դատապարտելի մեղք է. ըսէ ապառնալիքը (1)։

Հ. Եղբայրասիրին ու եղբայրատեացին ուրոյն ուրոյն բնաւորութիւններն ի՞նչ ինչ են։

Պ. Եղբայրասէրը իւր եղբօրմէն տեսած անհաճոյ գործոցը վրայ բծախնդրութիւն չընէր. ու եղբայրը թէ և դիտմամբ ալ իրեն դէմ պակասութիւն մ՚ըրած ըլլայ, պէ՞ք խալէր է հ՚ըսէ անգիտութեամբ ըրած է, կամ ի՞նչ գիտէ ինչ պատճառաւ հարիւրրո՞ւր է պիտայ այ-

րու տեսին ծառայակիցքն որ ինչ եղեւն, տրտմեցան յոյժ։ և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ. ծառայ չար, զամենայն զպարտադ թողի քեզ վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ արդ՝ ո՞չ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դահճաց մինչեւ հատուցցէ զամենայն զպարտսն։ Նոյնպէս և Հայր իմ երկնաւոր է արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում՝ ի սրտից ձերոց զյանցանս նոցա։ Մատթ. ԺԸ. 23—35։

(1) Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում՝ տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր Յիմար, պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մոքս, պարտաւոր լիցի դժոխոց հրոյն։ Մատթ. Ե. 22։

պէս ընելու, և այն ըսելով, կը ջանայ միշտ անոր յանցանքը թեթեւցնելու, պզտիկցնելու՝ կամ թէ որ հնար է, բոլորովին ծածկելու։ Իսկ եղբայրատեացը միշտ պատճառանք կը փնտռէ իւր եղբօրը հետ վիճելու՝ կռուելու. որովհետեւ ատելութեան հետեւանքը կռիւ է (1)։

Հ. Եղբայրասէրն ու եղբայրատեացն ի՞նչպէս կ՚ատորոգուին։

Պ. Առաջինը լուսոյ մէջ, իսկ երկրորդը՝ խաւարի մէջ. դն (2)։

Հ. Կարելի՞ է որ Եղբայրատեաց մը Աստուածսիրութիւն ըրած ըլլայ։

Պ. Այդ անկարելի է. եղբայրը չսիրողը զԱստուած ալ չսիրեր. դն (3)։

Հ. Եղբայրատեցութիւնն ի՞նչ մեղք կը համարուի։

(1) Որպէս կրակարանք կայծականց, և փայտ հրոյ, նոյնպէս այր բանսարկու առ՚ի յուզել զկռիւ։ Առակ. ԻԸ. 21։

(2) Որ սիրէ զեղբայր իւր, ՚ի լոյս բնակի. . . . . Իսկ որ ատեայ զեղբայր իւր ՚ի խաւարի է, և ընդ խաւարի շրջի, և ոչ գիտէ յո՞ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա։ Ա. Յովհ. Բ. 10—11։

(3) Եթէ որ ասիցէ՝ թէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ատիցէ, ուստա է։ Որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես, զնա՞յր կարիցէ սիրել։ Ա. Յովհ. ԿԲ. Դ. 20։

Պ. Մարդասպանութիւն (1)։

Հ. Մարդիկ մեր եղբայրսիրութիւնը տեսնելով՝ ինչ համարում պիտի ունենան վրանիս։

Պ. Ասում պիտի հասկեան Քրիստոսի աշակերտ ըլլանիս, ինչպէս որ ինքն Քրիստոս ըսաւ (2)։

(1) Ամենայն որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է։ Ա. Յովհ. Գ. 15։

(2) Յայտ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Յովհ. ԺԳ. 35։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Անձնասիրութիւն

ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ՝ որ ամէն մարդոց բնական իրաւունքն է, և է կիրք անմեղադրելի, երբ որ իւր համեստ սահմանէն դուրս ելնէ, այն ատեն ընկերսիրութեան ու եղբայրսիրութեան հակառակ մոլութեան մը կը դառնայ, և հետեւապէս կ՚ըլլայ մեղանչական։

Սակայն սրն է օրինաւոր. և սրն է սրբինաւոր անձնասիրութիւնը, որպէսզի հասմար՝ սոյն Յաւելուածն աւանդեցինք։

ԸՐԴ ԱՆՁԻՆ ԱՏԸՆ ինչպէս որ ըսինք, բնական է. զի ամէն մարդ իւր կեանքը՝ իւր ապրուստը՝ իւր պատիւը՝ և իւր ամէն ունեցածը պաշտպանելու և պահպանելու համար մեծ հոգ և զգուշութիւն կ՚ընէ. ինչպէս նաեւ անբան կենդանիներն ալ ինքզինք-

նին կերակրելու համար՝ կեր կամ որս կը մնառնեն, և թշնամիին պաշտպանուելու համար՝ բնութեան թելադրութեամբ կամ կը մարտնչին, կամ կը փախչին։

Այս սէրն այնքան հզօր է, որ մարդ ինքզինքը վտանգէ մը ազատելու համար՝ նոյն իւր սիրած անձը ուրիշ վտանգի մը մէջ կը դնէ, և արտաքոյ կարգի ճգամբ յաղթելու կը ջանայ այն դժուարութեան, թէեւ շատ անգամ ալ զոհ կ'երթայ անյաջողութեան։ Օրինակի ազատ. թէ որ սանդուղը բռնկած տան մը վերնայարկը գտնուի, ազատութեան համար վտանգը աչքը առնելով ինքզինքը պատուհանէն վար նետելու կը համարձակի, թէ որ երկիւղի տկարութիւնը զինքը չմեռցնէ։

Կամ թէ ուրիշ վտանգաւոր գիպուածի մը մէջ ալ՝ իւր ամէն ունեցածը տուժելու կը յօժարի, գէթ իւր սիրական հոգին ազատէ։ Օրօրինակ վաճառական ճանապարհորդն երբ որ աւազակի պատահի ամայի դաշտի վրայ, և անձն ու վաճառքը միանգամայն վտանգի մէջ տեսնելու ըլլայ, կամ կը մարտնչի, կամ կ'աղաչէ յիշեալ թշնամւոյն ձեռքէն անվնաս ճողոպրելու համար, բայց

հուսկ յետոյ՝ թէ որ անհնար ըլլայ զանիկայ յաղթելը կամ ողբքելը, կը զնչանի այն թանկագին վաճառքները իր սիրելի անձին փրկանք տալու. և այնուհետեւ թերեւս կ'աղքատանայ և աւուր պարենի կարօտ կը մնայ, բայց ինքն գոհ է միայն թէ այն նեղ վայրկենին մէջ այնպիսի գնով մը փրկած ըլլայ ինքզինքը. ահա այսպէս և այսքան սիրելի է մարդոյս՝ իւր ամէն ունեցածէն աւելի իւր անգին կեանքն ու անձը։

Արդ՝ այսչափով եղած անձնասիրութիւնը բնապէս հարկաւոր է և անմեղագրելի. բայց այս օրինաւոր և արդարացի Սէրն երբ որ իւր վայելուչ սահմանէն դուրս կ'ելնէ, ու անմեղ Անձնասիրութիւնը՝ Անձնամոլութեան կը դառնայ, այն ժամանակը մեղանչական ու մոլի սէր կ'ըլլայ, զարօրինակ երբ որ մարդ ապօրինաւոր միջոցներով սիրելու ըլլայ ինքզինքը, այսքինքն երբ որ գողութեամբ՝ կամ յափշտակութեամբ՝ կամ ապանութեամբ և կամ ուրիշ անթիւ ոճիրներով ճարելու ըլլայ իւր պէտքը, կամ գէթ ընկերին կամ եղբօրը վնասելը իւր շահը հոգալու հետեւի։

Եւ արդ՝ մեր եղբայրասէր ընթերցողնե-

ը՝ անձնասիրութեան այս տգեղ ախտէն զգուշացնելու համար, անձնասիրին վատ և վնասակար բնաւորութիւնը կ'ստորագրեմք 'ի հետեւեալն։

Հ. Ի՞նչ է անձնասիրին բնաւորութիւնը։

Պ. Հետեւեալներն են,

1. Միայն իւր օգուտը կը խորհի։ Ընկերպիսիները յորդորանօք կը խրատէ, Աստուածքեալը ինքզինքն ալ օրինակ ցուցնելով (1)։

2. Ի բրած բարերարութիւնն ու բարեգործութիւնը կը հրատարակէ անձնագովութեամբ (2)։

3. Ուրիշները վար զարնելով կը հետեւցնէ իւր անձին գովութիւնը (3)։

(1) Մի՛ ոք զանձին և եթ խնդրիցէ, այլ և զընկերին։
Ա. Կորն. Ժ. 24։

Մի՛ զանձանց և եթ գ խտել, այլ իւրաքանչիւր ոք և զնկերին։ Փիլիպ. Բ. 4։

Պարտ է մեզ զայս կարողքս եմք, զտկարութիւն տկարացեալսն բառնալ. և մի անձանց և եղ հաճոյ լինել։ Հռովմ. ԺԵ. 1։

Որպէս և ես ամենեւին ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ ինքեանս զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապրեսցին։
Ա. Կորնթ. Ժ. 33։

(2) Գահեմ երկիցս 'ի շաբաթու, և ասեմ ամենայնիւ զոր յամենայն ստացուածոց իմոց։ Ղուկ. ԺԸ. 12։

(3) Ա՛ստուած իմ գոհանամ զքեզ, զի ոչ եմ իբրեւ զայլս 'ի մարդկանէ, զյափշտակողս՝ և զանիրաւս՝ և զշուեամ

4. Ինքզինքը մարդոց առջեւ կ'արդարացնէ վասն որոյ ատելի է Աստուծոյ (1)։

Հ. Ինքզինքը անմեղ կարծող անձնասէրը ինչպէս հանկնայ իւր խաբուած ըլլալը։

Պ. Թող իւր գործերը կշռէ, ու դիտէ (2)։

Հ. Իւր բռնած ճամբան շիտակ կարծող անձնասէրը՝ որովհետեւ խաբուած է, իրաւունք չէ յանցաւոր հնարուի։

Պ. Թող իւր սիրտը քննէ (3)։

կամ իբրեւ զայս մաքսաւոր։ Ղուկ. ԺԸ. 11։

(1) Ոյք ասեն, 'ի բաց կաց յինեն՝ մի մերձենար յիս, զի սուրբ եմ։ Եսայ. Կե. 5։

Դուք էք՝ որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է, առաջի Աստուծոյ։
Ղուկ. ԺԶ. 15։

Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի նման էք գերեզմանաց բռնելոց, որք արտաքոյ երեւին գեղեցիկք, և 'ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց, և ամենայն պղծութեամբ։ Նոյնպէս և դուք՝ արտաքոյ երեւիք մարդկան արդարք, և 'ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ։ Մատթ. ԻԳ. 27—28։

(2) Եթէ համարիցի ոք լինել ինչ՝ և չիցէ, զանձն իւր խաբէ։ Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք, և ապա անձին իւրում միայն պարծանս ասցէ, և մի առ ընկերսն։
Գաղատ. Զ. 3—4։

(3) Ամենայն այր երեւի անձին իւրում արդար, բայց Տէրն զսիրտս կշռէ։ Առակ. Ա. 2։

Հ. Ընձնասիրութիւնը կոյր է. չկրնար այդ անաչառ քննութիւնը ընել իւր վրայ։

Պ. Թէ որ կոյր է մոքի աչքով. թող իւր խղճմտանքին ձայնը լսէ հոգւոյ ականջով (1)։

Ո՞վ պարծէսցի սիրտ սուրբ ունել, կամ ով համարձակիցի՝ թէ սուրբ իցէ ի մեղաց։ Առակ. Ի. 9։

(1) Եթէ համարիցիմ զանձն իմ լինել արդար, սակայն բերան իմ դատապարտեսցէ զիս, և եթէ կարծիցիմ անարատ, կամակոր դատանիմ։ Յոբ. Թ. 20։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ՉՈՐՐՈՐԴ

Որդեսիրութիւն

Կը կարծուի՝ թէ Որդեսիրութեան համար ծնողաց երկար Հրահանգներ տալ հարկ չէ. քանզի Որդեսիրութիւնն այնպիսի բնական խորժ մի է, յորմէ ամենէն ոգեւոր մարդիկ անգամ շարժեալ առանց ուսուցչի և առանց առաջնորդի գիտեն զաւակներն սիրել, և անոնց սիրոյն համար ծանր ծանր աշխատութիւններ՝ նեղութիւններ վիշտեր՝ տառապանքներ կրելու յօժարութեամբ յանձնառու եղած են՝ անոնց ամէն տեսակ օգտիցը համար. և զանոնք ամէն տեսակ ցաւերէ ազատելու համար։

Աւելորդ է յիշել՝ զաւակաց մանաւանդ մանկութեան ժամանակը մայրերուն քաշած

անարատունչ նեղութիւնները՝ իրենց հանգստութիւնը բարձի թողի ընելով, տիւ և գիշեր վրանին հսկելով, մայրենի կաթամբ սնուցանելով (*) և քաղցրագորով գգուանօք խնամելով, մանաւանդ երբոր զաւակնին հիւանդանայ՝ գրեթէ իրենք ալ անոնց հետ հիւանդանալով, և թէ որ հնար ըլլայ՝ իրենց առողջութիւնն անոնց հաղորդելով, և այն։ Այնպէս յայտնի է հայրերուն եւ գութը և անհամեմատ Որդեսիրութիւնը իրենց զաւակաց քաջողջութեանը, զարգացմանը, սնունդեանը, և գթութեանը համար ձեռքերնէն եկած ամէն ջանքն ու աշխատութիւնը չզլանալով, և երբեմն մեծամեծ զոհողութիւններ ալ ընելով Ի Նէր որդւոց։

Բայց ասկայն թէ և ընդել և հանրածանօթ կարծուի այս բնաւորը արհեստը, այսու ամենայնիւ մեծամեծ ու սրբազան պարտաւորութիւններ կը պարունակէ իւր

(*) Թէպէտ հարուստ ծնողք այս նեղութիւնները կը նան քիչ մը թեթեւցնել նիւթականապէս, բայց չէ թէ բաբոյապէս. դայեակներ և սանտաւներ՝ տղուն մարմնական կարեաց պաշտօնը կատարելով, ծնողաց ըստ իմիք օգնական ներ կ'ըլլան, բայց որդեխնամ ծնողութեան քաղքը հոգածութիւնը գարձեալ հօր և մօր վրայ կը ծանրանայ բնականապէս։

մէջը. մինչ զի չենք կրնար ըսել թէ ծնողք՝ ի բնութենէ կարող են ուսանիլ զանունք, կամ թէ առանց ուսանելոյ արդէն ալ գիտեն. ապա թէ ոչ անբան կենդանիներն ալ իրենց ծնունդները՝ միայն բնական ազդեցութեամբ սիրել գիտնալով, բանականաց հաւասար Որդեսէր պէտք էր համարուէին, որ է սխալ կարծիք։

Բանզի բանականաց որդեսիրութեան օրէնքը բնութեան ըրած ազդեցութենէն շատ գերազոյն և կատարեալ ըլլալուն համար, արժան է որ ծնողք ուշադրութիւն ուսանին զայն, և ըստ այնմ սիրեն զաւակնին։

Օ՛ի որովհետեւ Որդիք՝ ծնողաց ձեռքը յանձնուած Աստուածային աւանդք են, վասնորոյ պարտին ծնողք երկիւղածութիւն պաշտպանել զանունք և խնամել, զարգացնելով և պատրաստելով Աստուծոյ ծառայելու նպատակաւ, ինչպէս որ Աստուածասէրն և Որդեսէրն Դաւիթ կը խրատէր իւր Սողոմոն որդին՝ այսպէս խօսելով (1)։

(1) Եւ դու Սողոմոն որդի իմ, ծանիր զԱստուած հարցն քոց և ծառայեա նմա կատարեալ սրտիւ, և մտօք կամաց քոց. վասն զի զամենայն սիրտ քննէ Տէր. և զամենայն խորհուրդս ճանաչէ։ Եթէ խնդրիցես զնա՝ գտցի քեզ և եթէ թողցես զնա լքցէ զքեզ յիսպառ։ Ա. Մնաց. ԻԸ. 6։

Հ. Որո՞նք են այն որբական պարտաւորութիւնները, զորս պարտին ըստ օրինի կատարել որդեսէր ծնողք։

Պ. Աստուածահաճոյ որդեսիրութեան համար ուսանելի կարեւոր Հրահանգներն հետեւեալներն են։

Պարտին ծնողք՝

1. Աստուածային օրէնքներն ու պատուիրանները ուսուցանել իրենց որդւոցը, վասն զի Պատգամն կ'ըսէ (1)։

2. Աստուծոյ զարմանալի գործքերը անոնց պատմել (2)։

3. Աստուածային ուսմամբ զարգացնել զանոնք (3)։

4. Աղէկ կրթութիւն տալ որդւոց (4)։

(1) Հայեաց 'ի քեզ և զգաստ լեր անձին քում յոյժ, մի մոռանայցես զամենայն բանս զոյսոսիկ՝ զոր տեսին աչք քո. և մի մերժեսցին 'ի սրտէ քումմէ զամենայն աւուրս կենաց քոց, և խելամուտ արասցես որդւոց քոց՝ և որդւոց որդւոց քոց։ Բ. Օրէն. Դ. 9։

(2) Պատմեցէք յետնոյն որդւոց ձերոց, և որդւոց որդւոց ձերոց, (թէ) որչափ խաղացի ես ընդ Եգիպտացիսդ. և զնշանս իմ՝ զոր արարի 'ի նոսա, և ծանիջիք թէ ես եմ Տէր։ Եւէր. Ժ. 2։

(3) Հայրք, մի զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տէրուն։ Եփես. Զ. 4։

(4) Կրթեա զմանուկ 'ի սկզբան Ճանապարհի իւրում, զի մի 'ի ծերութեան խոտորիցի յայնցանէ։ Առակ. ԻԲ. 6։

5. Գուրգ ու գորով ուսնենալ իրենց զաւակաց վրայ, բայց այնպիսի գուրգ՝ զոր Դաւիթ օրինակ կ'առնէ Աստուծոյ գթութեանը. թէ (1)։

6. Իրենց որդւոց ներկայն ու ապագայն հոգալ (2)։

Որդեխնամ չեղող ծնողքը անհաւատի կարգը կը դասէ Առաքեալը՝ ըսելով (3),

7. Մէջտ խրատել զանոնք (4)։

8. Խրատով չդաստիարակող անուղղայ տղոյն պատժել (5)։

9. Քաղցրութեամբ վարուիլ իրենց որդւոցը հետ, ու չի զայրացնել զանոնք (6)։

(1) Որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի Տէր յերկիւղածս իւր։ Սաղմ. ՃԲ. 13։

(2) . . . . . Քանզի ոչ պարտին որդիք՝ հարց գանձել, այլ հարք որդւոց։ Բ. Կորն. ԺԲ. 14։

(3) Եթէ ոք իւրոցն և մանաւանդ բնտանեացն խնամ ոչ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է, և չար եւս քան զանհաւատսն է։ Ա. Տիմոթ. Ե. 8։

(4) Խրատեա զորդի քո՝ և հանգուսցէ զքեզ, և տացէ զարդ անձին քում։ Առակ. Թ. 17։

(5) Որ խնայէ 'ի գաւազանն ատեայ զորդի, իսկ որ սիրէ խնամով խրատէ (զնա)։ Մի խնայեր խրատել զտղայ. զի (եթէ) հարկանիս զնա գաւազանաւ՝ ոչ մեռանի։ Դու հարկանիս զնա գաւազանաւ, բայց զանձն նորա փրկես 'ի մահուանէ։ Խրատեա զորդի քո՝ զի այնպէս եղիցի քեզ յոյս բարի, և յաղաղակել նորա՝ մի լուիցես։ Առակ. ԺԲ. 24։ ԺԹ. 18։ Դ. 13—14։

(6) Հայրք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր, զի մի տրտմեսցին։ Կոլոս. Դ. 21։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

Ծնողասիրութիւն

ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ Աստուածսիրութենէ ետքը անդրանիկ պարտաւորութիւն է զաւակաց վրայ։ Որովհետեւ թէ որ Աստուած՝ մեր գոյութեան պատճառն է Արարչութիւն, ծնողքնիս ալ գէթ մեր կենաց օժանդակներն են ծնողութեամբ. մանաւանդ որ ըստ մեզ՝ ի ծննդենէ սնուցանելով խնամելով և զարգացնելով՝ անտնօրինելի իրաւունք ունին մեր Սէրը դրաւելու, և ահա ասոնց կը ծագի այն սկիզբնական յարգանքը, զոր պարտին որդիք ընծայել իրենց ծնողաց. վասն զի ծնողասիրութեան գործադրութիւնն է՝ Պատուել զծնողս, և հնարանք ԵԼԼԱ անանց, որոյ օրինակը իւր վրայ ցցուց մանկացեալն Աստուած (1)։

(1) . . . . . և էր նոցա հնազանդ։ Ղուկ. Բ. 51։

Հ. Ո՞վ կը հրամայէ մեզի մեր ծնողքը պատուել։

Պ. Աստուած կը հրամայէ (1)։

Հ. Հայրս մայրս պատուելով ի՞նչ արդիւնք պիտի ստանամ։

Պ. Քեզի բարիք պիտի հանդիպի և շատ պիտի ապրիս աշխարհիս մէջ (2)։

Հ. Այս պատուէրն ի՞նչպէս կատարած կ'ըլլամ։

Պ. 1. Հնազանդելով ծնողաց անմեղ հրամաններուն (3)։

2. Ակնածելով անոնցմէ (4)։

3. Խրատներն մոռկ ընելով (5)։

(1) Պատուեա զհայրդ քո և զմայրդ։ Եւէր. Ի. 12։

(2) Զի քեզ բարի եղիցի, և երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի։ Եւէր. Ի. 12։

(3) Լուր որդեակ հօրն՝ որ ծնաւ զքեզ և մի արհամարհեր զծերութիւն մօր քո։ Առակ. ԻԴ. 22։

Որդիք հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այնպէս հաճոյ առաջի Տեառն։ Կողոս. Գ. 20։

(4) Խրատանչիւր 'ի հօրէ և 'ի մօրէ իւրմէ երկնչիցիք։ Ղեւտաց. Ժ.Թ. 3։

(5) Լուր որդեակ՝ խրատու հօր քո՝, և մի մերժեր զօրինս մօր քո։ Առակ. Ա. 8։

Որդեակ պահեա զօրէնս հօր քո, և մի մերժեր զխրատս մօր քո։ Ընկալ զնոսա յանձին և 'ի գլուխ քո հանապազ։ և արկ իբրեւ մանեակ 'ի պարանոց քո։ Յորժամ շրջիցիս ընդ քեզ տարջիր, և ընդ քեզ եղիցի, յորժամ ննջիցես տես-

Հ. Ծնողացս խրատներուն ունկնդրութեանս համար ինծի ի՞նչ խոստումն կայ։

Պ. Այնպէսով պիտի վառաւորուիս (1)։

Հ. Մեր հօրմէն ունեցած ակնածութիւնովս՝ զմեզ ի՞նչ բանի կ՚առաջնորդէ հաղորդապէս։

Պ. Հօր Աստուծոյ հնազանդ ըլլալու կը տրամադրէ զմեզ (2)։

Հ. Թէ որ Ծնողաստեր որդիք Բարի՞ պիտի ընդունին, ու երկայնակեաց պիտի ըլլան երկրի վրայ. ուրեմն ծնողքնին անարդող խեղ ու ստահակ զաւակներու համար ի՞նչ պատիժ կայ։

Պ. Այնպիսի ամբարիշտ զաւակներու համար ստկալի սպառնալիք կայ (3)։

Սանկ զաւակները անիծեալներն Աստուծմէ (4)։

հեսցէ զքեզ. և յորժամ յառնիցես խօսակից վնիցի քեզ։
Առակ. Զ. 20—22։

(1) Պատկ շնորհաց ընկալցիս՝ ի գլուխ քո, և մանեակ ոսկի՝ ի պարանոցի քում։ Առակ. Ա. 9։

(2) Զի եթէ՝ ի մարմնաւոր հարցն մերոց զոր ունիմք խրատիչս՝ պատկառիմք, որչափ եւս առաւել հնազանդեսցուք Հօրն հոգւոց և կեցցուք։ Եբր. Ժբ. 9։

(3) Անի՝ որ արհամարհէ զհայրս և անարգէ զծերութիւն մօր, խլեսցեն զնա ագռաւք ձորոց, և դեշ դեշ արասցեն զնա ձագք արծուեաց։ Որ հայհոյէ զհայր կամ զմայր շինցի լաս նորա, և բիբք աչաց նորա զնաւաւ տեսցեն։

(4) Անիծեա՛լ որ անարգեսցէ զհայր իւր կամ զմայր իւր

Հ. Օրաւակը ծնողաց ինչքը անոնց կամացը դէմ գրաւելու իրաւունք ունի՞։

Պ. Այդպիսի զաւակը կողոպտիչներու կարգը կը դասի (1)։

Հ. Խելացի ու անմիտ զաւակներն ի՞նչ տարբեր ազդեցութիւն կ՚ընեն իրենց ծնողացը սրտին։

Պ. Խելացի տղան իր ծնողացը ուրախութեան պատճառ է, իսկ անմիտը տրտմութիւն է անոնց (2)։

Հ. Թէ որ ծնողքնիս մեր վրայ խնամք ու երախտիք ունենալնուն համար պարտաւոր ենք զկրենք սիրել. ուրեմն մեր ուրիշ խնամակալներն ալ նոյնպէս մեր սիրոյն արժանի չե՞ն։

Պ. Մեր ծնողքէն զատ մեր խրատիչներն ու ուսուցիչներն ալ պատուիմք սիրել Երախտագիտութեամբ։

Եւ ասոր համար աղաչելով կ՚ըսէ Աստքեալը (3)։

և ասասցէ ամենայն ժողովուրդն Ամէն։ Բ. Օրէն. Է. 16։

(1) Որ կապտէ զհայր կամ զմայր, և համարիցի չեզանչէլ, կոծրդ է նա արանց ամբարշաց։ Առակ. ԻԸ 24։

(2) Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, իսկ անմիտն տրտմութիւն է մօր։

Ամօթ հօր՝ որդի անմիտ։ Առակ. ԺԹ. 1։ ԺԹ. 13։

(3) Աղաչեմք զձեզ եղբարք ճանաչել զվաստակաւորս և

Հ. Ի՞նչ չափով սիրելու ենք մեր ծնողքը։

Պ. Աստուածասիրութենէ պակաս (1)։

զվերակացուս ձեր 'ի Տէր և զխրատիչս ձեր։ Եւ համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ վասն գործոց նոցա։
Ա. Թէս. Ե. 12—13։

(1) Որ սիրէ զհայր կամ զմայր առաւելքան զիս, չէ ինձ արժանի։ (Մատթ. Ժ. 37։)

Եթէ որ գայ առ իս և ոչ ատէայ զհայր իւր և զմայր..... ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Ղուկ. ԺԴ. 26։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Աղքատասիրութիւն։

ՄԱՐԴԻԿ քանի մը շարժառիթներէ կը թելադրին աղքատներուն դէմ ուրիշներուն ընելու այսինքն՝

Որովհետեւ հարստութիւնն ու աղքատութիւնը մարդկային կենաց բաժիններն են, և այսօր հարուստի մը՝ վաղը աղքատանալը հաւանական է, ինչպէս որ միշտ փոքրը պակաս չէ աշխարհիս մէջ, վասն որոյ մարդիկ գրեթէ ընդհանրապէս այս երկիւղէն պաշարուած՝ երբ որ աղքատը կը տեսնեն, քիչ շատ կ'ողորմին անոր, որովհետեւ թէ կաշառքով մը Աստուծմէ ծախու առած կ'ըլլան ապագայ աղքատութեան կամ՝ ուրիշ փորձութեանց վտանգէն ազատ մնալու

ապահովութիւնը, կամ թերեւս կը յուսան
ալ, որ իրենց այս ստուրքովը իրենց հոգւոյն
փրկութիւնը պիտի ստանան։

Անմիտ, չգիտէք որ մեր փրկութիւնը
յէն պարգեւ մ՚է Աստուծոյ կողմանէ, և
ոչ թէ մեր բարեպաշտական գործոց վարձքն
է, վասն զի թէ որ մեր ջնջին պղինձները
մեր աղատութեան փրկանք պիտի համա-
ռիմք, ուրեմն Քրիստոսի խաչի մահուամբ
զմեզ փրկած ըլլալը արժէք մը չունի, քաւ
լեցի (1)։

Բայց մեր ողորմութիւնը՝ կամ մեր ու-
բիշ պարեպաշտական գործքերը չէ թէ իւ-
րեւ շնորհ պիտի համարիմք մեր կողմանէ,
այլ քրիստոնէական պարտաւորութիւն (2)։

Ամանք ալ երբ որ ընկերութեան մը մէջ
կամ ժողովքի մը՝ կամ Եկեղեցւոյ մէջ կը
գտնուին, և կը տեսնեն որ ուրիշները մէկ
մէկ նուէրով աղքատաց կ՚ողորմին, իրենք

(1) Քանզի ամենեքեան մեղան, ... և արդարա-
նան ձրի նորին շնորհօք՝ ի ձեռն փրկութեան՝ որ՝ ի Քրիս-
տոս Յիսուս։ Հռովմ. Գ. 23—24։

(2) . . . Այնմ՝ որ գործիցէ՝ ոչ համարին վարձքն ըստ
շնորհաց, այլ ըստ պարտեաց։ (Հռովմ. Դ. 4)։

Նոյնպէս և դուք՝ յորժամ առնիցէք զամենայն հրամայ-
եսան ձեզ, ասասջիք՝ թէ Ծառայք անպիտանք եմք, զոր
պարտէաքն առնել՝ արարաք։ Ղուկ. ԺԷ. 10։

ալ անոնցմէ ետ չմնալու և ամօթով չըլլալու
համար ակամայ բան մը կուտան իրարու տոյժ
և ոչ թէ սիրոյ նուէր։

Այսպիսիները թող լսեն (1)։

Ամանք ալ աղքատին թախանձանքէն
ձանձրանալով՝ կամ գոնէ ամաչելով, թէեւ
կարողութիւն ունին առատապէս տալու,
բայց ժլատութեամբ հազիւ քիչ մը բան
կուտան դողդողալով ու փսխնալով, որ չը-
լայ թէ առատաձեռնութեամբ իրենք ալ
աղքատանան։ Սանկիներուն խելքը չը հաս-
նիր, թէ (2)։

Ամանք ալ իրենց ողորմութիւն տալու
ատենը՝ աղքատին աչքին հարուստ և գը-
թած երեւելու յոյս մը կ՚զգան սրտերնուն
մէջ, և նոյն մեծամտութենէն շարժեալ՝
կ՚օգնեն աղքատին, ու չէ թէ ճշմարիտ
աղքատասիրութեամբ։ Սանկիները կը յան-
դիմանէ Աստուած ըսելով (3)։

(1) Իւրաքանչիւր ոք որպէս և յոժարեցի սրտիւ, մի՛
առ հարկի և տրամութեան, քանզի զտուրս զուարթառա-
ստս սիրէ Աստուած։ Բ. Կորնթ. Թ. 7։

(2) Որ սերմանէ ճշդելով, ճշդելով և հնձէցցէ. և որ
սերմանէ առատութեամբ, առատութեամբ և հնձէցցէ։
Բ. Կորնթ. Թ. 6։

(3) Տէսի զգործս քո՝ զի անուն կենդանւոյ ունիս, և
մեռեալ ես։ Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ,

Ոմանք ալ աղքատին ողորմութիւն կուտան՝ չէ թէ անոնց կարեկցելով, այլ իրենց փառացը համար, և մարդացմէ գովեստ ընդունելու դիտաւորութեամբ. վասնորոյ կուզեն որ իրենց ըրած ողորմութիւնը բերնէ բերան հռչակուի, և իրենց բարերարութիւնը ամսագիրներէ քարոզուի, կամ լուսագիրներով հրատարակուի։

Այսոնք ալ թող լսեն (1)։

Արդ ողորմութիւն տալը թէպէտ ըստ ինքեան բարի գործ է, բայց տուողին դիտաւորութիւնը՝ կամ տալուն կերպը՝ չարի կրնան դարձնել զայն, ինչպէս որ յայտնի կ'երևի, թէ վերոյիշեալ ձևերով եղած ողորմածութիւնները՝ աստուածահաճոյ աղքատասիրութիւն չեն։ Վասն որոյ ով որ սրտանց կարեկցելով՝ աղքատին ողորմութիւն ընել կ'ուզէ, ընելուն կերպը՝ թող

պարտ էր քեզ ցուրտ լինել՝ և. կամ Ջերմ։ Ասլ դու դաղջ ես և ոչ Ջերմ և ոչ ցուրտ. հանդերձեալ ես փոխիլ 'ի բերանոց իմմէ։ Յայտն. Գ. 1, և 15—16։

(1) Զգաշ լերուք ողորմութեան ձերոյմ՝ մի առնել առաջի մարդկան, որպէս թէ 'ի ցոյց ինչ նոցա. գուցէ և վարձսոչ ընդունիցիք 'ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինս է։ Ասլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս, որպէս զի փառաւորիցին 'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։ Մատթ. Զ. 1—2։

Քրիստոսի ցուցուցած հրահանգէն ուսանի (1)։

Հ. Ուրեմն ո՞րն է աղքատասիրութեան անժեղ շարժառիթը։

Պ. Այն սուրբ յոյսն է՝ թէ Քրիստոս իրեն պիտի համարի՝ ողորմածներուն աղքատաց և կարօտելոց վրայ ըրած կարեկցութիւնը. վասն զի պիտի ըսէ անոնց (2)։

Ու թէ որ ողորմածները ըսելու ըլլան, թէ (3)։

Քրիստոս պիտի պատասխանէ անոնց (4)։

Հ. Իսկ կարօտելոց և նեղելոց կարեկից չըլլալը որո՞ւ կը վերաբերի։

Պ. Քրիստոս զայն ալ իրեն պիտի հա-

(1) Յորժամ ողորմութիւն առնիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո։ Որպէս զի եղիցի ողորմութիւն քո 'ի ծածուկ, և Հայրն քո՝ որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։ Մատթ. Զ. 3—4։

(2) Քաղցեայ՝ և եատուք ինձ ուտել. ծարաւեցայ՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս. մերկ եղէցուցէք զիս. հիւանդ էի՝ և տեսէք զիս. 'ի բանտի էի՝ և եկէք առ իս։

(3) Տէր՝ երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք. կամ ծարաւի արբուցաք։ Երբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք. կամ մերկ՝ և զգեցուցաք։ Երբ տեսաք զքեզ հիւանդ՝ կամ 'ի բանտի՝ և եկաք առ քեզ։

(4) Ամէն ասեմ ձեզ, որովհետև արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։ Մատթ. ԻԵ. 35—40։

մարի, և պիտի ըսէ անողորմներուն (1)։

Ո՜ թէ որ անոնք ալ ըսէլու ըլլան (2)։

Բրիտոս պիտի պատասխանէ անոնց (3)։

Հ. Սիրոյն շնորհակալ օրէնքը կը հրամայէ՝ աղքատաց կարեկցիլ և օգնել։

Պ. Ի վաղուց՝ հին օրինաց առենէն հրամայած է Աստուած Իսրայէլացւոց, որ ի լենց ունեցածէն բաժին հանէն աղքատաց (4)։

(1) Քաղցեայ՝ և ոչ եռուք ինձ ուտել, ծարաւեցայ՝ և ոչ արբուցիք զիս. օտար էի՝ և ոչ ժողովեցիք զիս, մերկ էի՝ և ոչ զգեցուցիք զի. հիւանդ՝ և ի բանտի՝ և ոչ տեսիք զիս։

(2) Տէր երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի՝ կամ օտար՝ կամ մերկ՝ կամ հիւանդ՝ կամ ի բանտի՝ ոչ պաշտեցաք զքեզ։

(3) Ամէն ասեմ ձեզ. որովհետեւ ոչ արարիք միում՝ ի փոքրկանցս յայսցանէ՝ և ինձ ոչ արարիք։

Մատթ. ԻԵ. 42—45։

(4) Ի հնձել հնձողաց ձերոց զհունձս երկրին ձերոյ՝ մի սպասեսջիք զհունձս անդաց ձերոց մինչեւ ի ցանգն հնձելոյ, և զհասկսն անկեալս՝ ի հնձոց քոց մի ժողովիցես։ Զայգի քո Ձեւաքաղ մի առնիցես, և պտղաքաղ այգւոյ մի լինիցես, անանկին և պանդխտի թողուցուս զայն. ես եմ՝ տէր աստուած ձեր։ Ղեւտաց. ԺԹ. 9—10։

Զվեց ամ սերմանեսցես զերկիր քո, և ժողովեսցես զաւելորդս նորա. և յամին եօթներորդի թողութիւն արասցես՝ և հանգուցուս զնա, և կերիցին անանկիք աղքատք քո. և զմնացեալն՝ ի նոցանէ կերիցեն գազանք վայրի։ Այսպէս արասցես զայգի քո և զձիթապտան քո։ Եւ։ ԻԳ. 10—11։

Հ. Ի՞նչ վստահութիւն ունիմք, որ մեր աղքատասիրութիւնը պիտի վարձատրէ Աստուած։

Պ. Աստուած մեծամեծ խոստումներ բրած է աղքատասիրին (1)։

Նաեւ աղքատասիրին նուէրը՝ Աստուած իրեն փոխ առած պիտի համարի (2)։

Եւ այս փոխառութեանը համար հետեւեալ գրաւոր պարտամուրհակը տուած է

(1) Բրդեա քաղցելոց զհաց քո, և զաղքատս անյարկս տար՝ ի տուն քո, եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիջիր։ Յայնժամ ծաւալեսցի կանուխ լոյս քո, և բժշկութիւն քեզ վաղվաղակի հասցէ, և գնասցէ առաջի քո արդարութիւն քո, և փառք Տեառն զքեզ փակեսցին։ Յայնժամ կարդասցես և Աստուած լուիցէ քեզ, և մինչդեռ խօսիցիս ասասցէ. թէ ահաւասիկ հասեալ կամ՝ Եւ եթէ մերժեսցես դու՝ ի քէն զբանս արտանձման, և տայցես քաղցելոց զհաց քո պարտ մնոջ, և զանձինս կարօտեալս յագեցուցանես, յայնժամ ծագեսցէ՝ ի խաւարի լոյս քո, և խաւարն քո իբրեւ զմիջօրեայ։ Եւ եղիցի Աստուած քո ընդ քեզ յամենայն ժամս. լցիս ըստ ցանկութեանն անձին քո և ոսկերք քո պտղաբերեսցին, և եղիցիս իբրեւ զպարտեզ ջրովեալ, և իբրեւ զաղբիւր ուստի ջուր ոչ պակասեսցի։ Եւ շինեսցին աւերակք քո յաւիտենից, և եղիցին հիմունք քո մշանջենաւորք ազգաց յազգս, կանգնեսջիր՝ և կոչեսջիր խրամակարկատ ցանկից։ Եսայ. ԾԸ. 7—12։

(2) Փոխ տայ Աստուծոյ՝ որ ողորմի անանկին. բան տալոյ նորա հատուսցէ նմա (Տէր)։ (Առակ. ԺԹ. 17)։

մեզի Քրիստոս Աստուած։

Տուք եւ տացի ձեզ Ղ՚ուկ. Զ. 38։

Հ. Աստուածային խոստումներէն զատ ուրիշ ինչ խրախոյս կայ աղքատասիրաց համար։

Պ. Աստուծոյ բերնէն երանութիւն և օրհնութիւն կայ (1)։

Հ. Մեղաւոր ըլլալնիս դիտնալով՝ ողորմածութենէ ինչ ակնկալութիւն կրնանք ունենալ։

Պ. Աղքատաց ողորմելով մեղքերնուս քաւութիւն կ՚ստանանք։

Այս յոյսը Դանիէլի խրատէն կառնեմք որով խրատեց զՆաբուգոդոնոսոր, որ մեղանչեր էր Աստուծոյ դէմ։

(1) Երանի՝ որ խորհի աղքատն և գթանին. յաւուր չարի փրկէ զնա տէր։ Տէր փրկէ զնա. և կենդանեսցի. Երանելի առնէ զնա՝ ի վերայ երկրի. և ոչ մատնէ զնա՝ ի ձեռս թշնամեաց իւրոց։ (Սաղ. Խ. 2—3։)

Երանի՝ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։ (Մատթ. Ե. 7։)

. . . . Այսպէս պարտ է . . . . յիշել զբանն տեառն Քրիստոսի. զոր ինքն իսկ ասաց՝ Երանելի է մանաւանդ տալոյն առնուլ։ (Գործ. Ի. 35)։

Յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս և զանդամս և զկաղս և զկոյրս, և երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանել քեզ, և հատուցի քեզ փոխարէն՝ ի յարութեան արդարոց։ Ղուկ. ԺԴ. 13—14։

Այս է խրատը (1)։

Հ. Մեր կարողութենէն վերը ողորմութիւն ընելու պարտաւոր ենք։

Պ. Երբ որ կարողութիւն ունիմք կարօտեալին ողորմելու, պէտք չէ որ զլանանք (2)։

Հ. Չափ մը դրած է Աստուած մեր ընելիք ողորմութեան։

Պ. Հերիք է որ ճշմարիտ կարեկցութեամբ ողորմիմք աղքատին, իսկ՝ ի մասին ողորմութեան քանակութեանը՝ մինչեւ անդամ բաժակ մի ջուրի համար ալ վարձահատոյց պիտի ըլլայ Աստուած (3)։

Հ. Աղքատ մարդը հարուստի պէս շատ ողորմութիւն տալու կարող չըլլալուն անվնաս կը մնայ։

Պ. Հարուստը իւր շատ ստացուածքէն դրեթէ անզգալն մաս մը կը հանէ աղքատին. իսկ անկարոտ մարդուն տուած ողորմութիւնը՝

(1) Աբքայ՝ խրատ իմ հոգոյ թուեսցի քեզ. զմեղս քո ողորմութեամբ քաւեսջիր, և զանօրէնութիւնս քո գթովք անանկաց։ Թերեւս երկայնամիտ լիցի՝ ի վերայ յանցանաց քոց Աստուած։ Դան. Դ. 24։

(2) Մի յապաղեր բարի առնել կարօտելոյ՝ յորժամ ձեռն հասիցես օգնել նմա։ Առակ. Գ. 27։

(3) Որ արբուսցէ միում՝ ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր։ Մատթ. Ժ. 42։

իւր բերնին պատառն է, զոր Հարուստին սուսածէն աւելի մեծագուսմար կը համարի Քրիստոս (1)։

Հ. Երբ որ կը տեսնենք որ աղքատն ուտկարը թշնամեաց երեսէն կը նեղի. ինչ ընելու կը պարտաւորիմք։

Պ. Զեռքերնէս եկածին չափ պարտիմք պաշտպանել զանոնք (2)։

Հ. Թէպէտ աղքատասիրին վարձուց խոստմունք ու երանութիւն կայ, ուրեմն անողորմ մարդուն համար ինչ վնիւ կայ։

Պ. Ընողորմին անողորմ դատաստան պիտի ըլլայ (3)։

Հ. Նաեւ աղքատին դիմութիւն չընողին

(1) Եւ հարեցեալ եառեալ զմեծատունն, զոր արկանէին գանձս իւրեանց 'ի գանձանակն։ Եառեալ և զկին զանն այրի մի, զոր արկ անդր երկուս լումս։ Եւ ասէ, արդարեւ ասեմ ձեզ զի այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսին։ Ամենեքին նոքա 'ի մեծերից իւրեանց արկին ընծայսն աստուծոյ. Բայց նա 'ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր՝ զոր ունէր արկ։ Ղուկ. ԻԱ. 1—4։

(2) Ապրեցուցէք զաղքատն և զանանկն, 'ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա։ (Սաղմ. 82. 3.)

Այսպէս ասէ տէր, արարէք իրաւունս և արդարութիւն, փրկեցէք զյափշտակեալն 'ի ձեռաց զրկողին։ Երեմ։ ԻԲ. 3։

(3) Անողորմ դատաստան լինելոց է ոմեմ, որ ոչ առնիցէ ողորմութիւն։ Յակ. Բ. 15։

ինչ հատուցում պատրաստուած է։

Պ. Պատժոյ հատուցում, և սարսափելի Ընէծք (1)։

Յոր ինքզինքն անիծելու երդման ձեւով կը հանդիսացնէ իւր անգութ չքլլալն այսպէս (2)։

Հ. Աղքատին աղաղակը չի լսողին ինչ սպառնալիք կայ։

Պ. Նոյնպէս պիտի սպառահի իրեն ալ (3)։

(1) Որ տայ աղքատաց՝ ոչ կարօտանցի. իսկ որ դարձուցանէ զակն իւր 'ի նոցանէ, 'ի բազում կարօտութեան եղիցի։ (Առակ. ԻԸ. 27)։

(Քանզի) գրաւեցէք դու զի զբարս քո տարապարտուց, և զդրեստ մերկոց զերծեր, ջուր ծարաւեաց ոչ արբուցեր, և զհաց քաղցելոց հատեր, ալձակիցեր զայրիս ունայնս, և զերբս չարչարեցեր. Եւ արդ պատեսցին զքեզ օրոգայթք և տագնապեսցէ զքեզ պատերազմ անհնարին։ Յովբ. ԻԲ. 6—10։

(2) Իսկ տակաւին՝ որոց պակաս ինչ էին, ոչ արդեաք երբեք ծարեցին. զակն այրեաց ոչ կոդկոդեցուցի։ Եթէ կերայ սրբդեաք զպատառն իմ միայն, և որբոյն ոչ կարկառեցի, եթէ սրարի անտես զմերին կորուսեալ՝ և ոչ զգեցուցի, եթէ ոչ օրհնեցին զիս ակաւաք, և 'ի կտրոց խաչանց իմոց ոչ ջերմանեալ թիկունք նոցա, եթէ ձեռն փարացուցի ընդդէմ որբոյն։ յուսացեալ թէ բազում օգնականութիւն է իմ, ապա թաւիեսցէ յանդիսակ ուս իմ, և բազուկ իմ յարմիանէ իմմէ խորտակեսցի։ Յոբ. ԼԱ. 16—22։

(3) Որ խնամ զլսելիս իւր, զի մի լուիցէ տակաւաց, և նա կարդասցէ առ Տէր, և ոչ լուիցէ նմա Տէր։ Առակ. ԻԱ. 13։

Հ. Հապա աղքատներուն անիրաւութիւն ընողներուն ի՞նչ . . . . . .

Պ. Սոսկալի պատուհասներու սպառնալիք (1):

Հ. Աղքատներուն անիրաւութիւն ընելը ի՞նչ տեսակ մեղք կը համարուի:

Պ. Անոնց անիրաւութիւն ու զրկանք ընելը՝ զԱստուած անարգել է, զի (2):

Հ. Աղքատները ծաղր ընելը ծանր մեղք մը կը համարուի՞:

Պ. Թեթեւ մի կարծեր այս մեղքը:

Օ՜ անոնք ծաղր ընողը՝ անոնց ստեղծողը կը բարկացընէ իւր վրայ (3):

Հ. Աղքատները հարուստներու հետ սարապատիւ չի համարելով՝ կը մեղանչեմք:

(1) Փոխանակ զի կրփեկիք զաղքատս, և կաշառս ընդունաւ առնուիք 'ի նոցանէ, (Բէ՛ն) ապարատս զարդարեալս շինեսջիք, (Բայ) ոչ բնակիցիք 'ի նոսա: Այդիս ցանկալիս տնկեսջիք, (Բայ) զգինի նոցա ոչ արբջիք, զի գիտացի եմ զբազմաւորմ ամբարշտութիւնս ձեր, և սաստիկ են մեղք ձեր: Առ ոսն կոխեիք զարդարն, առնելով կաշառս, և խոտորեցուցանէիք զաղքատն 'ի դրունս: Ամոս. Ե. 11—12:

(2) Որ զրկէ զտնանկն արհամարհէ զԱրարիչ նորա: Առակ. ԺԴ. 31:

(3) Որ կատակէ զաղքատով, զարարիչ նորա բարկացուցանէ, և որ ոսն հարկանէ կործանելոյն, ոչ արդարացի: Առակ. ԺԷ. 5:

Պ. Հարուստները պատուելով՝ աղքատները անարգելու չեմք (1):

Հ. Աղքատէն գրաւ առնելը մեղք է:

Պ. Ոչ, բայց գրաւ մ'առներ անոր անանկ մէկ բանը, որով իւր ապրուստը կը հոգայ (2):

Հ. Աղքատին մէկ պիտանի բանը թէ որ գրաւ առած գտնուիմք, ի՞նչ ընել պարտիմք:

Պ. Երեւը մոռցին պէս եւ տալու եմք (3):

(1) Եթէ մոռնիցէ 'ի ժողովուրդ ձեր այր՝ որ ունիցի մատանի ոսկի և հանդերձս պայծառս, մոռնիցէ անդր և աղքատ ոք 'ի հանդերձս աղտեղս, հայիցիք ընդ այն՝ որ ունիցի հանդերձս պայծառս, և ասիցէք՝ Թէ դու նիստ առա պատուով, և ցաղքատն ասիցէք Թէ յոտն կաց դու այդր, կամ Թէ եկ նիստ առ պատուանդանիս իմում: Ո՞չ խղճիցէք թանձինս, և լինիցիք դատաւորք չարեացն խորհրդոց: Լուարուք ինձ ելդբարք իմ սիրելիք՝ ո՞չ ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս աշխարհիս, որք են մեծատունք հաւատովք, և ժառանգաւորք արքայութեանն, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց, և դուք անարգէք զաղքատն: Յակ. Բ. 2—3:

(2) Մի գրաւեսցէ ոք զվերին կամ զներքին երկանաքար (աղորձաքն), զի զկեանս (ընդերին) գրաւեսցէ այնպիսին: Բ. Օրէ. ԻԴ. 6:

(3) Եթէ պարտիցի (Բէ՛ղ) ընկեր քո զինչ և իցէ, մի մոռանիցես 'ի տուն նորա՝ գրաւել ինչ գրաւ. այլ արտաքոյ կացցես, և այրն՝ առ որում պահանջէն քո իցեն, հանցէ ընդ գրաւն արտաքս: Եւ եթէ աղքատ իցէ այրն, մի ագցիս ընդ գրաւաւ նորին, դարձուցանելով դարձուսցես զգրաւնորա ընդ մոռանալ արեւու, և ենդիանցես (նա) հանդերձիւն իւրով և օրհնեսցէ զքեզ, և եղիցի (այս) քեզ յողորմածութիւն առաջի Տեառն Աստուծոյ քո Բ. Օրէն. ԻԴ. 10—13:

Հ. Մեր աղքատ վարձկաններուն հետ ինչպէս պիտի վարուիմք։

Պ. Բնաւ զրկանք ընելու չեմք անոնց վարձուց կամ օրականին հատուցմանը վրայ յոյլ (1)։

(1) Մի զլաստիս զվարձս անանկին և զկարօտեալս յեղբարցդ կամ յեկաց քաղաքաց քոց։ Նոյն օրին հատուսցես զվարձս նորա, և մի մտանիցէ արեգակն 'ի վերայ այնորիկ զի անանկ է, և այն է յոյս նորա. և մի բողոքք հարկանիցէ զքէն առ Տէր և մի լիցի այն քեզ 'ի մեղս։ Բ. Օրէն. ԻԴ. 14—15։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՈՐԲ, ԱՅՐԻ, ՊԱՆԴՈՒԽՏ, ՕՏԱՐԱԿԱՆ

Որովհետեւ ասոնք ալ կարօտելոյ կալ-դէն են, վասնորոյ ասոնց ալ կարելիոյն ըլլալու պարտաւորութիւններ ունիմք աղքատասիրաբար։

Հ. Որբին և այրիին իրաւանցը վրայ ինչ հսկողութիւն ընել պարտիմք։

Պ. Ասոնց իրաւունքը և դատը պարտիմք պաշտպանել (2)։

Հ. Օտարականին որբին և այրիին իրա-

(2) Դատ արարէք որբոյն և այրւոյ, իրաւունս արարէք անանկին և խոնարհի։ Սաղմ. 82. 4։

Ուսարուք զբարիս գործել. խնդրեցէք զիրաւունս, փրկեցէք զզրկեալն. դատ արարէք որբոյն և առաք իրաւունս այրւոյն։ Եսայ. Ա. 17։

ւանցը վրայ ինչ զգուշութիւն ընելու եմք։

Պ. Աստոց իրաւունքը չափոյ ծառնք (1)։

Հ. Աստոց իրաւունքը ծառոյին դատապարտութիւնն ինչ է։

Պ. Ընդծք (2)։

Հ. Իւ աստոց զրկանք ընողը . . . . . ։

Պ. Իւր բաժինը վայ և յուսահատութիւն, և աննեղելի պատուհաս է (3)։

Հ. Օտարականին և պանդուխտին սիրոյ պարտաւորութիւն ունիմք։

(1) Մի խոտորիցես զիրաւունս զեկին և զորբոյ և զայրոյ և մի՞ դրաւեսցես զձորձս այրւոյն։ Բ. Օրէն. ԻԴ. 17։

(2) Ընդծա՛ր որ խոտորիցէ զիրաւունս եկին և որբոյ և այրւոյ։ Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն Ամէն, եղիցի։ Բ. Օրէն. ԻԵ. 17։

(3) Վա՛յ այնոցիկ՝ որ օրէնս անօրէնութեան սահմանեն և վայ գրագիր՝ զոր անիրաւութիւն գրեն, և զի խոտորեսցեն զդատաստանս աղքատաց, և զիրաւունս տնանկաց ժողովրդեան իմոյ յափշտակեսցեն. զի այրին լինիցի նոցա ի յափշտակութիւն, և որբն յաւար։ Եւ զի՞նչ գործեսցեն յաւուրն այցելութեան, զի նեղութիւն ձեր ի հեռաստանէ եկեսցէ, և ո՞ փախստեայ անկանիցիք յօգնականութիւն, և ո՞ր թողուցուք զփառս ձեր։ Եսայ. Ա. 1—3։

Զպանդուխտն մի՛ չարչարիցէք և մի՛ նեղէք զնա, ... զամենայն զայրի և զորբ մի՛ չարչարիցէք։ Ապա թէ չարչարելով չարչարէք զնոսա, և բողոք բարձեալ աղաղակեսցեն առ ինձ՝ լսելով լսեայց աղաղակի նոցա, և բարկացայց սրամտութեամբ և կոտորեցից զձեզ սրով, եղիցին կանայք ձեր՝ այրիք, և մանկունք ձեր որբք։ Եւէր. ԻԲ. 21—24։

Պ. Այո՝ պէտք է որ մեր հայրենակցայ պէս համարիմք զանոնք, գթութիւն ընեմք և մեր անձին պէս սիրեմք (1)։

Հ. Օտարականին որբին և այրիին խնամք տանողն ինչ վարձք կ'ընդունի։

Պ. Աստուծոյ օրհնութիւնը կը ժառանգէ (2)։

(1) Եթէ յարեսցի առ ձեզ եկ՝ յերկրին ձերում. մի՛ նեղէք զնա. իբրեւ զբնակն ձեր եղիցի ձեզ և եկն յարեալ ի ձեզ, և սիրեսցես զնա իբրեւ զանձն քո։ Ղեւտաց. ԺԹ. 33—34։

(2) Եկեսցեն՝ եկն և որբն և այրին քում, (զտաստանորդ արմատեացդ) կերիցեն և յագեսցին։ Եւ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն գործս քո զոր առնիցես.

(Բ. Օրէն. ԺԳ. 17)։

Եւ եթէ հնձեսցես զհունձս յանդի քում, և մոռասցի սրայ յանդի քում, մի դառնայցես անդրէն առնուլ զնա. աղքատին՝ և եկին՝ և այրւոյ՝ և որբոյ եղիցի այն, զի օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն գործս ձեռաց քոց։ Եւ եթէ կթեսցես զայգի քո, մի՛ ճռաքաղ առնիցես զկնի քո. եկին՝ և որբոյ՝ եղիցի այն։ Եւ եթէ կթեսցես ձէթ, մի դարձցիս անդրէն պտղաքաղ առնել զկնի քո, եկին՝ և որբոյ՝ և այրւոյ եղիցի այն։

Բ. Օրէն. ԻԴ. 19—21։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ԵՕԹՆԵՐՐՈՐԴ

Տիրասիրութիւն

Ո՛վ ԾՍՌԱՅ՝ տէրդ կամ բարի է՝ կամ չար, թէ որ բարի է, իրաւամբ արժանի է սիրոյ. իսկ թէ որ չար ու դաժան, դարձեալ պէտք է որ սիրես՝ քո և անոր օգտին համար. որպէս զի խոնարհ տիրասիրութեամբդ թերեւս ամաչեցընես զինքը. և իւր տմարդի վարմունքը մարդավարութեան փոխելուն պատճառ ըլլաս։

Բայց համարինք՝ թէ տէրդ սիրով ալ անողոքելի է, և քո հլու և հաւատարիմ ծառայութեանդ փոխարէն՝ իւր վայրագութեամբը միշտ գքեզ կը կշտամբէ, կը հայհոյէ, և խրոխտանօք կը վարի հետդ, դու

դարձեալ՝ սիրով ծառայելու ես իրեն, և հեզութեամբ ու համբերութեամբ պիտի տանիս այն թշնամանաց։ Օ՛ի թէ որ յանցանաց համար կշտամբիս ու անարգիս՝ այն ողէկ է. ան ատենը բնաւ տրտնջալու իրաւունք չունիս, վասն զի մեղադրելի գործոց ըզդ համար անշուշտ ամօթապարտ և անպատասխանելի ես տիրոջդ առջեւն։

Իսկ առաքինութիւնդ ան ատենը կը փայլի երբ որ անիրաւ տեղը չարչարուիս ու թշնամանիս, վասն որոյ սրբազան Առաքեալն Պետրոս գթալով և կարեկցելով ծառայիդ դժբաղդ վիճակին վրայ այս օգտակար խրատը կուտայ ձեզի (1)։

Հ. Տիրասիրութիւնն ի՞նչ պարտաւորութիւններ կը պարտադրէ իւր մէջը։

Պ. Տիրասիրութեան պարտաւորութիւնքն հետեւեալներն են։

Տիրասէր ծառան։

(3) Ծառայք հնազանդ լինիք յամենայնի երկիւղիւ տեառնից. ոչ միայն բարեբարոյսն և հեզոց, այլ և կամակորացն։ Զի այս շնորհք յԱստուծոյ են՝ եթէ ցաւս ինչ մնաց ոք վշտաց յանիրաւի։ Քանզի զի՞նչ երախտիք ի՝ցեն՝ եթէ յարժամ մեղանչիցէք՝ տանջիցիք և համբերիցիք. այլ եթէ զբարիս գործիցէք՝ չարչարիցիք և համբերիցիք, այն շնորհք յԱստուծոյ են։ Ա. Պետ. Բ. 18—20։

1. Միշտ իւր տէրը կը պատուէ, մանաւանդ թէ որ հաւատացեալ ըլլայ։

Ուրաբեալը՝ այս մտքով հեռեւեալ հրահանգը կուտայ Տիմոթէոսին՝ ըսելով (1)։

2. Սրտի մտօք հնազանդ կ'ըլլայ տիրոջը Ուրաբեալին հեռեւեալ հրահանգին համեմատ (2)։

3. Հաւատարիմ կ'ըլլայ տիրոջը (3)։

4. Կեղծաւորութեամբ աչքի երեւելու համար չծառայեր՝ Ուրաբեալին խրատին

(1) Որք միանգամ ընդ լծով ծառայութեան ներքեւ, զիւրաքանչիւր տէրս պատուոյ արժանի համարեսցին, զի մի անուն Աստուծոյ և վարդապետութիւնն հայհոյիցի։ Իսկ որք հաւատացեալ տէրս ունիցին, մի արհամարհեսցեն, զի եղբարք են։ այլ առաւել ծառայեսցեն, զի հաւատացեալք ըստն են և սիրելիք, որք զբարերարութիւնս յանձին ունիցին։ Զայս ուսուցանիցիր և մխիթարեսիր։ Ա. Տիմոթ. Զ. 1—2։

(2) Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց՝ ահիւ և դողութեամբ և միամտութեամբ սրտից ձերոց, որպէս և Քրիստոսի։ Մի առ ակնեն ծառայել, իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ։ Սրտի մտօք ծառայել իբրեւ Տեառնէն, և մի իբրեւ մարդկան։ Եփես. Զ. 5—7։

(3) Ծառայից՝ իւրեանց տերանց հնազանդ լինել և հաճոյս յամենայնի։ մի հակառակողք՝ մի հատուս, այլ զամենայն հաւատս ցուցանել բարութեամբ, զի զվարդապետութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի։ Տիտ. Բ. 9. 10։

համեմատ (1),

2. Տիրասէր ծառան ինչ համարում կըստանայ տիրոջմէն։

Պ. Տիրոջը հաւատարմութիւնը կ'աւելցնէ իւր վրայ, ինչպէս որ հաւատարիմ տիրասիրութեամբ ստացաւ Յովսէփ (2)։

Ու շատ անգամ կը բարձրանայ աստիճանաւ, ինչպէս որ յայտնի է հեռեւեալ պատմութենէն (3).

(1) Ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի։ մի առ ակնեն ծառայութիւն իբրեւ մարդահաճոյք։ այլ միամտութեամբ սրտի երկնչել 'ի տեառնէ։ Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրեւ տեառն։ և ոչ իբրեւ մարդկան։ Կողոս. Գ. 22—23։

(2) Եգիտ Յովսեփ շնորհս առաջի տեառն իւրոյ, զի հաճոյ էր նմա։ Եւ կացոյց (տէր իւր) 'ի վերայ տանն իւրոյ, և զամենայն ինչ՝ որ իւր էր ետ 'ի ձեռս Յովսեփայ։ . . . . . և Թող զամենայն որ ինչ իւր էր՝ 'ի ձեռս Յովսեփայ, և ոչ գիտէր զամենայն որ ինչ կայր 'ի տան իւրում, բայց միայն զՀացն զոր ուտէր։ Ծնն. Լթ. 4—6։

(3) Եւ ասէ Փարաւոն ցՅովսեփ, որովհետեւ եցոյց քեզ Աստուած զայդ ամենայն, չիք այր խմաստնագոյն և խորհրդական քան զքեզ։ Դու լիցիս 'ի վերայ տանն իմոյ, և բերանոյ քումդ հնազանդ լիցի ամենայն ժողովուրդ իմ. բայց միայն աթոռովս 'ի վերայ եղէց ես քան զքեզ . . . . . ահաւասիկ կացուցի զքեզ այսօր 'ի վերայ երկրին Եգիպտացւոց։ Եւ հանեալ Փառաւոնն զմատանին իւր 'ի ձեռանէ իւրմէ՝ եդ 'ի ձեռն Յովսեփայ, և զգեցոյց նմա պատմուճան բեհեղեայ, և արկ մանեակ ոսկի 'ի պարանոց նորա,

Հ. Խելացի ու հաւատարիմ ծառան ի՞նչ հատուցում կառնէ տիրոջմէն։

Պ. Իւր հանձարովը պատուոյ արժանի կ՚ըլլայ տիրոջը տանը մէջ. վասն զի՝ (1)

Հ. Ընհաւատարիմ ու չար ծառան ի՞նչ հատուցում կառնէ։

Պ. Իւր չարութեան համեմատ պատիժ կը պատժուի (2).

Հ. Օտարներն իրենց ծառայակիցներուն հետ ի՞նչպէս վարուելու են։

և Եհան ղնա յերկրորդ կառս իւր և քարոզ կարդայր [առաջի նորա և կացոյց զնա 'ի վերայ երկրին Եգիպտացւոց։ Եւ ասէ Փարաւօն ցՅովսէփ. ահաւասիկ ես Փարաւօն, առանց քո ոչ ոք համբարձցէ զձեռս իւր և զոտս իւր 'ի վերայ ամենայն երկրիս Եգիպտացւոց։ Եւ կոչեաց Փարաւօն զանուն Յովսեփայ՝ Փոտմիթոմիանէ։ Եւ եառ նմա զԱնասէթ դուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի Կնութեան։

Ծնն. Խա. 59—45։

(1) Ծառայ խմաստուն տիրեսցէ տերանց անմտաց, և ընդ եղբարս բաժանեսցի մասն (Ժառանգութեան)։ (Առակ. ԺԵ.2)։

Որ տնկէ թզենի՝ կերիցէ զպտուղ նորա. և որ պահէ զտէր իւր պատուեսցի։ (Առակ. ԻԵ. 18)։

Իսկ ոմն ի՞նչ հաւատարիմ ծառայ և խմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր 'ի ժամու։ Երանի է ծառայն այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս։ Ամէն ասեմ ձեզ. զի 'ի վերայ ամենայնի իւրոց կացուսցէ զնա։ Մատթ. ԻԴ. 45—47։

(2) Ապա թէ ասիցէ ծառայն չարն 'ի սրտի իւրում. Տէր իմ յամէ գալ, և սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր։

Պ. Սէր գութ և կարեկցութիւն ունենենալու են իրարու վրայ, որովհետեւ իրարու եղբայր կը համարուին։

Այս պարտաւորութեան զանցառութիւնը սաստկապէս դատապարտուած է Քրիստոսէն՝ հետեւեալ առակաւոր պատմութեամբ (1)։

ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս, գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր՝ յորում ոչ ակն ունիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ, և կտրեսցէ զնա ընդ ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ։ Անդ եղիցի լաւ և կրճել ատամանց։ Մատթ. ԻԴ. 48—51։

(1) Ցմահնեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ, և այլն։ (Տէ՛ն Էրէ՛ն 45)։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Ծառայասիրութիւն

ՏԵԱՐՔ Թէպէտ տիրական իրաւամբ արտօնութիւն ունին իրենց ծառաներէն հնազանդութիւն՝ ակնածութիւն՝ և հաւատարմութիւն պահանջելու, սակայն իրենք ալ փոխադարձաբար Սիրոյ պարտաւորութիւններ ունին ծառաներնուն. որովհետև թէ՛ ծառան և թէ՛ տէրը Քրիստոսով հաւասար են իրարու. և այս քրիստոնէական հաւասարութիւնը և անխտրութիւնը՝ հետևեալ խօսքերով կը հաստատէ Առաքեալը (1):

(1) Քանզի միով Հոգւով մեք ամենեքին 'ի մի մարմին մկրտեցաք, եթէ Հրեայք, եթէ հեթանոսք, եթէ ծառայք

Եւ զի Աստուած բնաւ աչառութիւն չընէր՝ այս ծառայ է՝ միւսը ազատ է ըսելով, հետևեալ պատուէրովը կ'ցցուցանէ Եփեսացիները նոյն Առաքեալը (1):

Քրիստոս սքանչելի օրինակ մը տուաւ տեարց, որուն մէջը կը բովանդակի տէրերուն բոլոր պարտաւորութիւնները, և ծառայից հետ վարուելու եղանակին հրահանգը:

Կարդա Յովհ. աւետարանչին հետևեալ պատմութիւնը (2).

եթէ ազատք, ամենեքին զմի Հոգի արբաք:
(Ա. Կորնթ. ԺԲ. 13):

Որք միանգամ 'ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր՝ ոչ Հրէի, և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի, և ոչ իգի. զի ամենեքին գուք մի էք 'ի Քրիստոս Յիսուս: Գաղատ. Գ. 27—28:

(1) Եւ դուք տեարք՝ զնոյն առնիջիք առ նոսա . . . . . դիտասջիք՝ զի և նոցա և ձեր Տէր գոյ յերկինս, և ակնաւութիւն ոչ գոյ առաջի նորա: Եփես. Զ. 9:

(2) Յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձսն, և առեալ զենջակ մի՝ ասիաձաւ: Եւ ապա առեալ ջուր՝ արկ 'ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբել զենջակաւն՝ զոր սփածեալ էր . . . . . Եւ յորժամ լուայց զոտս նոցա առ զհանդերձսն իւր, և դարձեալ բազմեցաւ՝ և ասէ ցնոսա. գիտէք զինչ արարի ձեզ. դուք կոչէք զիս վարդապետ և տեր, և բարւոք ասէք, քանզի եմ իսկ: Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ տէրս և վարդա-

Հ. Տեարք ինչ ինչ պարտաւորութիւններ ունին ծառաներուն նկատմամբ։

Պ. Տեարց պարտաւորութիւնները հետեւեալներն են։

Տեարք

1. Պարտին քաղցրութեամբ վարուիլ ծառայից հետ (1),

2. Ու չէ թէ խստութեամբ տիրապետելու են ծառայից վրայ (2)։

3. Վարձկանաց դրկանք չպիտի ընեն։

Օրկանք ընող տեարք թող լսեն, թէ Աստուած ինչ կշռամբանք կընէ իրենց (3)։

4. Վարձկան գործաւորաց օրականն իրենց քովը պահելու չեն, այլ առ օրին պարտ-

պետս, և գուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։ Զի օրինակ մի եւոտ ձեզ. զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք։ Յովհ. ԺԳ. 4—15։

(1) . . . . . Եւ գուք տեարք զնոյն առնիջիք առ նոսա, ներելով առնել զպատուհասն։ Եփես. Զ. 9։

(2) Եւ մի տառապեցուցէս զնա ընդ աշխատութեամբ և երկնչեցիս 'ի Տեառնէ Աստուծոյ քումմէ։ Ղեւտ. ԻԵ. 43։

(3) Վա՜յ՝ որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդարութեամբ, և զվերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբք. և 'ի մերձաւորսն իւրմէ գործի նմա գործ ձրի, և զվարձս նորա ոչ հատուցանէ նմա։ Երեմ. ԻԲ. 13։

տին հատուցանել (1)։

5. Իրաւունք ու արդարութիւն ընելու են ծառայից։

Յոր այս պարտաւորութիւնը լաւ կատարած ըլլալը երկիւղածութեամբ կը յայտնէ՝ ըսելով (2)։

Նաեւ Աբրահամն ալ գրեթէ իշխանաբար կը հրամայէ տերանց, որ իրենց այս պարտաւորութիւնը կատարելու զանցառութիւն չընեն (3)։

6. Հաւասարութեան մէջ ծառաներուն խնամ տանել պարտին տեարք։

Արդարեւ յիշատակաց արժանի է հե-

Ահաւասիկ վարձք մշակաց՝ որք գործեն զանդս ձեր. առ ձեզ են. զոկեալն 'ի ձենջ՝ աղաղակէ, և բողոքն հնձողացն ի հաս յականջս Տեառն զօրութեանց։ Յակ. Ե. 4։

(1) Մի՛ զոկեսցես զընկեր քո, և մի յափշտակեսցես։ Մի ապշին վարձք վարձկանին առ քեզ մինչեւ յառաւօտ։ Ղեւտ. ԺԹ. 13։

(2) Եթէ խոտեցի երբեք զիրաւունս ծառայի կամ աղախնոյ մատիցելոյ առ իս յատեան, և զի՞նչ գործեցից՝ և թէ հարցուփորձ արասցէ ինձ Տէր. և եթէ այցելութիւն զի՞նչ պատասխանի արարից։ Ոչ ապաքէն որպէս ես եղէ յարգանդի՝ և նոքա եղեն. 'ի նմին որովայնի եղաք։ Յոբ. ԼԱ. 13—15։

(3) Տեարք՝ զիրաւունս և զհաւասարութիւն ծառայից ձերոց շնորհեցէք, գիտասջիք՝ զի և ձեր Տէր գոյ յերկինս։ Կողոս. Դ. 1։

թանոս Հարիւրապետին այս ծառայական խը նամատարութիւնը՝ որ կը պատմուի սուրբ աւետարանին մէջ (1)։

(1) Հարիւրապետի սրտումն ծառայ շարաշար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախճանել. որ էր նմա պատուական։ Իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն 'ի Հրէից. աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուցցէ զծառայն իւր։

Ղուկ. է. 2—3։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Քահանայասիրութիւն

Սոյն հրահանգիս մէջ Քահանայ անուամբ պիտի իմանամք ամենայն Հայոց Սրբազան Կաթուղիկոսը, երկու Սրբազան Պատրիարքները, վիճակաւոր Եպիսկոպոսները. Եպիսկոպոսները, Վարդապետները, և ամուսնաւոր Քահանայները, թէպէտ ստուգանաւ մի քան զմի նախապատուեն ըստ Եկեղեցական կարգաւորութեան ըստ այնմ, թէ (1)։

Եր՝ պէտք է դիտնամք, որ յիշեալ սրբ-

(1) Իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ առեալ են շնորհք ըստ չափու պարգեւացն Քրիստոսի։ . . . . . Եւ նա եդ զմանս առաքեալս, զմանս մարգարէս, զմանս աւետարանիչս, զմանս հովիւս և վարդապետս՝ 'ի հաստատութիւն սրբոց՝ 'ի գործ պաշտաման՝ 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի։

(Եփես. դ. 7—12)։

բաղան Եկեղեցականները Աստուծոյ կողմնէ ժողովրդեան վրայ Հովիւ և Տեսուչ կարգեալ են. ինչպէս որ Տէրը Երեմիա մարգարէին բերնովը ըսած է (1):

Վանորոյ ասանք ինչ որ կը խօսին, չէ թէ յանձնէ կը խօսին, այլ Աստուծոյ կողմանէ պատգամաւորներ են մեզի՝ ըստ այնմ թէ (2):

Եւ որովհետեւ կը հսկեն մեր հոգւոյց վրայ, և մեզի համար Աստուծոյ պատասխանատու պիտի ըլլան, վասն որոյ Առաքեալը մեզի կը պատուիրէ՝ ըսելով (3):

Այս ալ պէտք է գիտնամք, որ հաւատոյ մէջ մեր յառաջադիմութեանը վրայ կ'ուրախանան, և մեր փրկութիւնը լրենց փառք պարծանք կը համարին՝ օրինակ առնելով սրբազան Առաքեալին՝ որ կըսէ (1):

Մանաւանդ զի որովհետեւ մեր հոգւոյց փրկութեան համար անձնուիրութեամբ պատրաստ են սրբազան Առաքելոյն հետ ըսելու, թէ (2):

Երդ ուրեմն մեր այս սրբազան բարեբարոյները՝ և զբանաւոր հօտքս'ի վայրի դալարաւոյ սրբոյ Եկեղեցւոյ արածող հօտասէր Հովիւները՝ և մեր հոգւոյց փրկութեան համար տքնող հոգեսէր Առաջնորդները՝ իրաւամբ արժանի են սիրոյ և յարգանաց. վասն զի թէ որ մեր մարմնական պիտոյքը և կարօտութիւնը հոգացող խնամածուները սիրելու

(1) Բաղում հոմարձակութիւն է ինձ առ ձեզ, բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ միխիթարութեամբ առաւելեալ եմ ուրախութեամբ յամենայն նեղութիւնս մեր: Բ. Կորնթ. Ը. 4:

Քանզի ով է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ՝ դուք 'ի Տէր առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի նորա գալստեանն. զի դուք էք փառք մեր և խնդութիւն: Ա. Թես. Բ. 19—21:

(2) Ոչ իւիք համարիմ զանձն իմ պատուական՝ որպէս զկատարել զընթացս իմ ուրախութեամբ, և զպաշտօնն՝ զոր առի 'ի Տեառնէ Յիսուսէ Գործ. Ի. 24:

Չի մի իւիք յամօթ եղէց, այլ ամենայն համարձակութեամբ՝ որպէս և յամենայն ժամ և այժմ մեծացսի Քրիստոս 'ի մարմնի իմում, եթէ կենաւք՝ և եթէ մահու:

Չի ինձ կեանք՝ Քրիստոս է, և մեռանել շահ: Փիլիպ. Ա. 20—21:

(1) Եւ յարուցից հովիւս՝ որ հովուեսցեն զնոսա. և ոչ ևս երկիցեն, և ոչ ևս զարհուրեսցին՝, և և ոչ լցին անառնս՝ ասէ Տէր: (Երեմ. ԼԳ. 4):

Եւ տայց ձեզ հովիւս ըստ սրտի իմում, և հովուեալք հովուեսցեն զձեզ իմաստութեամբ: (Երեմ. Գ. 15):

(2) Շրջուանք քահանային ղդուշացին գիտութեան, և օրէնս խնդրեսցեն (Ժողովուրդ) 'ի բերանոյ նորա, զի Հրեշտակ Տեառնն ամենակալի է: (Մաղաք. Բ. 7):

(3) Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա, զի նոքա աքնին վասն Հոգւոյց ձերոց, որպէս թէ համարս տալոց լցեն ընդ ձեր: Եբր. ԺԳ. 17:

պարտաւորեմք, որչափ եւս առաւել գոհ և շնորհակալու սրտիւ սիրել արժանի է մեր հոգւոյ բարեկամները՝ մեր հոգեւոր կենաց խնամակալները։

Աւաքեալը աղաչելով կը յորդորէ զմեզ այս երախտագիտութեան այսպէս (1)։

Հ. Ուրեմն ընդհանրապէս Քահանայից վրայ ինչ համարում ունենալու եմք։

Պ. Աւաքեալը կը պահանջէ մենէ, որ թէ զկրենք և թէ իրենց յաջորդող առաքելաշնորհ Եկեղեցականները՝ Աստուծոյ խորհուրդներուն տնտես և խորհրդական համարիմք կ'ըսէ (2)։

Հ. Այդ համարման նկատմամբ ինչ պարտաւորութիւն դրուած է մեր վրայ։

Պ. Պարտիմք պատուել և յարգել այս պրգաղան Եկեղեցականները. վասն զի (3)։

(1) Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր 'ի Տէր, և զխրատիչս ձեր, և համբերեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոց նոցա։ Ա. Թես. Ե. 12—15։

(2) Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ. իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի, և հաղարապետս խորհրդոցն Աստուծոյ։ Ա. Կորնթ. Դ. 1։

(3) Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որք աշխատիցեն բանիւ և վարդապետութեամբ։ Ա. Տիմոթ. Ե. 17։

Հ. Ինչով պիտի յայտնուի Թէ՝ կը պատուեմք Քահանաները։

Պ. Հնազանդելով անոնց՝ ըստ հրամանի Աւաքելոյն Թէ (1)։

Հ. Քահանայք և Հովիւք եկեղեցւոյ՝ ժողովրդեան համեմատութեամբ ինչ գերազանցութիւն ունին, և ինչ իրաւամբ հնազանդութիւն կը պահանջուի ժողովուրդէն։

Պ. Հոգեւորապէս իշխանութիւն ունին ժողովրդեան վրայ, ինչպէս որ յայտնի է Աւաքելոյն սա հետեւեալ խօսքերէն (2)։

Հ. Եւ ըստ պաշտաման ինչ կարգութեան տեր են։

(1) Ունկնդիր լերուք Առաջնորդաց ձերոց, և հպատակ վարեցէք նոցա, զի նոքա տքնին վասն հոգւոյց ձերոց, որպէս Թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն, և մի հոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ ձեր է։ Եբր. Ժգ. 17։

(2) Եթէ առաւել եւս պարծելոցս վասն իշխանութեանս մերոյ . . . . . ոչինչ ամաչելոցիս։ Բ. Կորնթ. Ժ. 8։

Վասն այսորիկ զայս 'ի հեռուստ գրեմ, զի մի յարժամ եկիս սաստկութեամբ վարեցայց ըստ իշխանութեանս։ Բ. Կորնթ. Ժգ. 10։

Զի Թէպէտ մարմնով գնամք, այլ ոչ Թէ ըստ մարմնոյ զինուորիմք. զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր այլ զօրաւոր Աստուծոյ՝ առ 'ի քակել զամուրս, զնորհուրդս քակեմք, և զամենայն բարձրութիւն հպարտացեալ 'ի վերայ գիտութեանն Աստուծոյ, և գերեմք զամենայն միտս

Պ. Դառ Քահանայից ընդհանրապէս Քրիստոսի Եկեղեցւոյն սրբազան Պաշտօնեաներն՝ և սուրբ Խորհրդոց մատակարարներն ըլլալով, հետևեալ տիրապարդև արտօնութիւններն ունին. այսինքն՝ (Քրիստոսէն)։

1. Կապելոյ և Արձակելոյ իշխանութիւն առած են առաքելական յաջորդութեան զօրութեամբ, որոյ ըսաւ՝ (1)

Հ. Քահանայք ե՞րբ 'ի գործ կը դնեն իրենց այս իշխանութիւնը։

Պ. Երբ որ զղջացեալ մեղաւորը իւր մեղքերը ցաւով խոստովանի և կ'ապաշխարէ, ան ատենը Քահանայն նոյն Քրիստոսաւանդ իշխանութեամբ՝ մեղայ Արձակոցն կուտայ անոր։

Նաև սուրբ Եկեղեցւոյ անհնազանդ և անզղջ անձն ալ կը բանադրէ նոյն Աստուածահրաման օրինօք, որով՝ բանադրեալը հոգեւոր դատապարտութեան ներքեւ կը մընայ, մինչեւ որ նորէն զղջայ և Արձակոցն ընդունի կամ՝ նոյն բանադրողէն՝ թէ որ ողջ

'ի հնազանդութիւն Քրիստոսի, և 'ի սրտաբաստի ունիմք խնդրել զքեզ ամենայն անհնազանդութեան . . . . . ։
Բ. Կորնթ. Գ. 3—6։

(1) Զոր կապեցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս։ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։
Մատթ. ԺԸ. 18

է, կամ եթէ վախճանած է կամ բացակայ, ուրիշ որ և է Եկեղեցականէ մը, ահաւասիկ Քրիստոսի բերանէն ելած պատգամը (1)։

2. Թէ աղայ և թէ չափահաս երախաները յանուն ամենասուրբը Երրորդութեան Մկրտելոյ հրամանը առած են, ինչպէս որ ըսաւ՝ (2)

3. Կենարար մարմնոյ և արեան անմահ Պատարագի սուրբ խորհուրդը կատարելու պատուէր առած են, ինչպէս որ յայտնի է հետեւեալ պատմութենէն՝ թէ (3)

4. Ամենանաւլու այրն ու կինն Պսակելոյ կարօղութիւն ստացած են հետեւեալ պատգամոյ զօրութեամբ (4)։

5. Եկեղեցւոյ Պաշտօնեաները Զեռնադրելոյ արժանապատուութիւն ընդունած են

(1) Եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. եթէ զսրբուք ունիցիք՝ կալեալ լիցի։ Յովհ. Ի. 23։

(2) Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Մատթ. ԻԸ. 19։

(3) Առեալ հաց՝ գոհացաւ եբեկ և եւ նոցա և ասէ, այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուելոյ. զայս արարէք առ իմոյ յիշատակի. նոյնպէս և զբաժակն յետ ընթրեցին առեալ ասէ. Այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ վասն ձեր հեղուլոյ։ Ղուկ. ԻԲ. 19։

(4) Թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զկնոջ կինսն իւրոյ. և եղիցին երկոքեան 'ի մարմին մի։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մի մեկնեսցէ։ Մատթ. Ժթ. 5—6։

նոյն Աստուածային հրամանաւ, որով ընդունեց Մովսէս՝ զԱհարոնը և անոր որդիքը քահանայ օրհնելու համար։

Ընհանրական Աստուածային հրամանն առ Մովսէս (1)։

Հ. Նոր Կտակարանին մէջ ալ կայ ձեռնադրութեան յիշատակութիւններ։

Պ. Առաքելոյ ժամանակը յաճախ ձեռնադրութիւններ կ՚ըլլային ըստ յարկին, ինչպէս [որ յայտնի է հետեւեալ յիշատակութիւններէն (2)։

Հ. Ընտիր ամեն քահանայ կամ վարդապետ կարող է ձեռնադրութիւն ընելու։

(1) Եւ զԱհարոն և զորդիս նորա մատուսցես ՚ի դուռն խորանին վկայութեան, և լուասցես զնոսա ջրով։ Եւ առեալ զպատմուճանն զդնցուսցես Ահարոնի եղբօր քումմ և զպարկեսցուն զգեստս սրբոյն ՚ի վերայ նորին, և զիւղն զօծանն զարկցես զգլուխն նորա, և զնոսա զարդարեսցես զնոսա։ Եւ զորդիսն նորա մատուսցես, և զգեցուսցես նոցա զպատմուճանս, և ածցես նոցա կամարս։ Ահարոնի և որդւոց նորա, և ածցես նոցա ապարօշս, և եղիցի նոցա այն ինձ՝ ՚ի քահանայութիւն յաւիտեանական։ Ելից. Լ. 4—9։

(2) Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ երիցունս, աղօթս արարեալ հանդերձ պահովք, յանձն տային զնոսա Տեառն յոր հաւատացեալն էին։ Գործ. Ժդ. 22։

Յանձնեսցուք զպահեալ և աղօթս արարեալ էդին ձեռն ՚ի վերայ նոցա և արձակեցին։ Գործ. Ժդ. 3։

Պ. Ձեռնադրութեան իշխանութիւնը՝ միայն Եպիսկոպոսներուն յանձնուած է՝ Եկեղեցւոյ աստիճանաւոր կարգադրութեան համեմատ (1)։

6. Սրբազան միւռոնաւ՝ քահանայ, կամ երանայ, կամ եկեղեցւոյ վերաբերեալ այլ և այլ նիւթեր՝ ինչպէս են խաչ, տէրունական կամ սրբոց պատկեր, վէմ, տաճար, և այլն Օծելոյ համարձակութիւն ստացած են, որոյ օրինակն էր հին օրինաց օծման սուրբ Իւղին բաղադրութիւնը, որով որ զԱհարոնը՝ և անոր որդիքը՝ և տաճարին կահ ու

Եւ ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատով և Հոգւով սրբով. և զՓիլիպպոս, և զՊրոքորոն, և զՆիկանովրա, և զՏիմոնիկոս, և զՊարմենաս, և զՆիկոդայոս զեկն անտիոքացի։ Զորս կացուցին առաջի Առաքելոցն, և աղօթս արարեալ եդին ՚ի վերայ նոցա ձեռս։ Գործ. Զ. 3—6։

Մի անփոյթ առներ զշնորհացդ՝ որ ՚ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռնադրութենէ երիցութեան։ Ա. Տիմոթ. Դ. 14։

Վառնորոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են ՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ իմմէ։ Բ. Տիմոթ. Ա. 6։

(1) Զորս եդ Աստուած յեկեղեցիսն այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց։ Ա. Կորնթ. ԺԲ. 28։

կարասիքը օծելու հրաման ըստ Աստուած Մովսէսին այսպէս (1)։

Հ. Յողովուրդը իւր Քահանայասիրութիւնը ինչպէս պէտք է 'ի գործ դնել։

Պ. Նախ՝ Քահանայից և ամենայն բարեկրօն Հողւոց սուրբ օրինակին հետեւելով, ինչպէս որ կը պահանջէ Աստուածը (2)։

(1) Եւ դու քեզ խունկս անուշաւնոյ, ծաղիկ ընտիր զմանանենեաց հինգ հարիւր սիկղ, և կինամոնն զանոյշ զկէս այն՝ երիկ երկերիւր յիսուն, և զլաւենկեղէնն զանոյշ երկերիւր յիսուն, և հիրիկ հինգ հարիւր սիկղ ըստ սրբութեան, և իւղ ձիթենեաց հիմնեաւ միով։ Եւ արասցես զայն իւղ յօծումն սրբութեան, իւղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց՝ իւղ յօծումն սրբութեան լինիցի։ Եւ օծցես 'ի նմանէ զխորանն վկայութեան, և զտապանակ վկայութեանն, և զսեղանն, և զամենայն կահ նորա, և զաշտանակն, և զամենայն կահ նորա, և զսեղանն խնկոց, և զսեղանն ողջակիզաց, և զամենայն զկահ նորա, և զաւազանն, և զյատակս նորա։ Եւ սրբեսցես զնոսա և եղիցի սրբութիւն սրբութեանց, ամենայն որ մերձենայ 'ի նոսա սրբեսցի։ Եւ զԱհարոն և զորդիս նորա օծցես, և սրբեսցես զնոսա լինել 'ի քահանայութիւն։ Եւ ընդ որդիսն Իսրայելի խօսեսցիս և ասասցես, իւղ յօծումն օծութեան սրբոյ եղիցի ձեզ յազգս իւր։ Ի մարմին մարդոյ ոչ օծանիցի, և ըստ այդմ հանդերձանի՝ ոչ առնիցէք ձեզ այդպիսի, զի սրբ է և 'ի սրբութի եղիցի ձեզ։ Որ որ առնիցէ այդպիսի, և որ որ տայցէ 'ի դմանէ այլազգւոյ, սատակեսցի 'ի ժողովրդենէ իւրմէ։ Ելէյ. Լ. 22—33։

(2) Նմանողք լինջ եղկիցք եղբարք՝ և գիտասցիք զայնպիսիսն՝ որք այնպեսն ընդնայցեն որպէս ունիմք զմեզ ձեզ օրինակ։ Փիլիպ. Գ. 17։

Հ. Ասոյց սուրբ օրինակին ըսելով՝ ինչ պիտի հասկընամք։

Պ. Ասոյց քարոզած եւ սովորեցուցած ուղղափառ հաւատքին հետեւիլ։

Ի հաւատիկ Առաքեալին մեզի տուած հրահանգը (1)։

Երկրորդ՝ մեր հոգեւոր Հովուաց համար աղօթք ընելով. ինչպէս որ կը յորդորէ զմեզ Առաքեալը (2)։

Հ. Մեք աշխարհական մարդիկ ըլլալով՝ արժանաւորութիւն ունիմք Եկեղեցականներու համար աղօթք ընելու։

Պ. Եկեղեցւոյ Հովիւներուն համար աղօթք ընելու արժանաւորութիւննիս՝ Առաքելոյն ստէպ պահանջումէն յայտնի է՝ որ կ'ըսէ (3)։

(1) Յիշեցէք զԱռաջնորդս ձեր՝ որք խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալ յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոյն։ Եբր. Ժ.Գ. 7։

Նմանողք լինջ եղերուք, որպէս և ես Քրիստոսի։ Ա. Կորնթ. Ժ.Ա. 1։

(2) Առեք զսաղաւարդն փրկութեան, և զսուսեր Հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ, ամենայն աղօթիւք և խնդրուածովք աղօթս առնել յամենայն ժամանակի հոգւով։ Եւ 'ի նոյն տքնիջիք ամենայն ժուժկալութեամբ և խնդրուածովք վասն ամենայն սրբոց, և վասն իմ, զի ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ իմոյ, համարձակութեամբ յուցանել զաւետարանին։ Եփես. Զ. 17—19։

(3) Աղաչեմ զձեզ եղբարք՝ 'ի ձեռն Տեառն մերոյ Յի-

Երրորդ՝ Եկեղեցականաց մարմնաւոր ապրուստը ժողովուրդը հոգալով, զոր արդար իրաւամբ սատակապէս կը պահանջէ Առաքեալը՝ այսպէս (1)։

սուսի Քրիստոսի և սիրով Հոգւոյն պատերազմակից լենել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած։ Հռովմ. ԺԵ. 30։

Աղօթս արարէք միանգամայն և վասն ձեր, զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին՝ խօսել զխորհուրդն Քրիստոսի։ Կողոս. Դ. 5։

Աղօթս արարէք վասն մեր, զի հաստատեալ գիտեմք՝ եթէ բարւոք միտս ունիմք. յամենայնի կամիմք բարւոք դնացս ցուցանել։ Եբր. ԺԳ. 18։

Քանզի յուսացեալ եմք՝ եթէ տակաւին փրկեսցէ (զմեզ) օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր։ Զի 'ի բազմագէմ շնորհացն՝ որ 'ի մեզ, բազմօք յաճախեսցեն գոհութիւնքն վասն մեր։ Բ. Կորնթ. Ա. 11։

(1) Ո՞ զբաղեալ զինուորիցի իւրովք թոշակօք. ո՞ զբաղեալ տնկիցէ այգի, և 'ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ զբաղեալ խաշէն և 'ի կաթանէ խաշենն ոչ ուտիցէ։ Մի թէ ըստ մարդկութեան՞ խօսիցիմ զայս, կամ թէ և օրէնքն զսոյն ոչ ասիցեն. 'ի Մովսիսի իսկ յօրէնսն գրեալէ, մի կապիցես զցուկ եղին կալոյս։ Մի թէ զե՞զանց ինչ փոյթ ի՞ր Աստուծոյ. ոչ ապաքէն վասն մեր ասէ. քանզի վասն մեր գրեցաւ. զի յուսով պարտի որ սերմանէն՝ սերմանել. և որ կալոյն՝ յուսով վայելել։ Եթէ մեք 'ի ձեզ զհոգեւորն սերմանեցաք, մի՞ ինչ է՝ եթէ 'ի ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք։ . . . . . Ոչ գիտէք՝ եթէ որ 'ի տաճարին գործեն. 'ի տաճարէ անտի ուտեն. և որ սեղանոյն պաշտօնեայք են՝ 'ի սեղանոյ անտի վայելեն։ Նոյնպէս և տէր հրաման ետ՝ զոր զաւետարանն աւետարանեն. յաւետարանէ անտի կեալց։ Ա. Կորնթ. Թ. 7—14։

Հ. Ուրբ որ ժողովրդեան բարեսիրութեանը համեմատութեամբ քիչ են Եկեղեցականք, ամ գոնուածներին ալ ոմանք անփոյթ են իրենց սուրբ պարտաւորութիւնը կատարելու, ժողովրդեան ինչ կրնայ ընել։

Պ. Քրիստոսի տեառն մերոյ պատուիրածին համեմատ ժողովուրդը աղաչելու է Աստուծոյ, որ իւր Եկեղեցւոյն Պաշտօնեաներ հասցընէ (1)։

(1) Յայնժամ ասէ (Յիսուս) ցոյակերատն իւր. Հունձքդ բազում են, և մշակք սակաւ։ Արդ աղաչեցէք զտէր հնձոցն, զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Մատթ. Թ. 37—38։

ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ

ՀՐԱՀԱՆԳ ՏԱՍՆԵՐՐՈՐԴ

Յոդուկրդասիրութիւն

ՄԵՐ այս Սիրոյ հրահանգը՝ զոր յաւէտ դեռաւարժ մանկանց համար պատրաստեցինք՝ քան թէ քահանայից եւ դիտնոց համար։ Քահանայները եւ հոգեւոր Հովիւները հրահանգելու զօրութիւնը եւ ձեռնհասութիւնը չունի. որովհետեւ որդին իւր հօրը՝ կամ լաւ եւս ըսեմք, հօտը իւր հովուին վարդապետ չի կրնար ըլլալ. մանաւանդ զի՝ ասոնք (Հովիւք եկեղեցւոյ) Աստուծոյ ի՛նդունին իրենց սրբազան պարտաւորութեանց հրահանգը՝ Հոգւոյն սրբոյ ներշնչմամբ՝ ձեռնադրութեան միջոցաւ, որով երէց մը թէ և դպրոցական բարձրագոյն դիտութեանց անտեղեակ ըլլայ, սակայն և այնպէս իւր սուրբ և Աստուածային կոչմանը պահանջմամբ, կարող է Աստուծոյ տանը մէջ պաշտօն վարելու, եւ իրեն յանձնուած բանաւոր ոչխարները հոգեւորապէս սիրելու՝ խնամելու՝ հոգալու և պաշտպանելու։

Այսու ամենայնիւ ըսել չեմք ուզեր, թէ Քահանային պէտք չէ դիտուն ըլլալ, կամ թէ բաւական է անոր՝ իւր քահանայական կարգը միայն՝ առանց հմտութեան պիտանի ուսմանց. վասն զի արդարեւ ամենայն անպատշաճութիւն մ՚է հոգեւոր Հովուի մը տգէտ ըլլալը՝ մանաւանդ եթէ ժողովուրդը դաստիարակեալ ըլլայ։

Յայտնի է թէ ոչչափ երկիւղալի բան է՝ եթէ ճանաչողներու առաջնորդողը երթալիք ճանբան չգիտնայ. ոչ ապաքէն թէ առաջնորդը և թէ ճանբորդը՝ ի միասին մոլորութեան մի և նոյն փոսանգին մէջը կը մնան։

Վասն որոյ մեք մեր նպատակին համեմատ՝ այս հրահանգնիս ալ առ մանկունս ուղղեմք, և Եկեղեցականք ալ դիտութեան հետեւելու պարտաւորութիւնին Աղաղքիա մարդարէին բերանէն թող լսեն, որ Աստուծոյ հրամանաւը կը հարկադրէ զիրենք

գիտուն ըլլալ. վասն զի ասանք (Քահանայք) Ամենակալին Աստուծոյ պատգամաւորներն ըլլալով. պէտք է որ ժողովուրդը ասոնցմէ ուսանի օրէնքն ու պատուիրանները։ Այսպէս կըսէ (1)։

Երդ որովհետեւ ժողովուրդք Քահանայապետութեան հրահանգ ընդունեցին, հետեւապէս իրաւունք ունին իրենք ալ Քահանայութեան Յողովրդապետութեան ապասելու. քանզի իբր հայր և որդի առնչակից են իրարու Քահանայք և Յողովուրդք, ինչպէս որ կը վկայէ Ժողովրդապետը Աւաքեանը, թէ (2)։

Վասնորոյ ահա Քահանապետութեան հրահանգէն ետքը՝ փոխադարձ Յողովրդապետութեան այս հրահանգն ալ աւանդել պատշաճ համարեցանք, Ժողովրդեան վրայ Քահանայից արդէն ունեցած Ամբարյաւէտ արծարծելու՝ քան թէ ուսուցանելու նպատակաւ, վասն զի մեք չէ թէ վարդապետ կը հանդիսանամք Վարդապետաց Եկեղեցւոյ, այլ

(1) Շրթունք քահանային զգուշացին գիտութեան՝ և. օրէնս խնդրեսցեն (Ժողովուրդք) ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն ամենակալի է։ Մաղաք. Բ. 7։

(2) . . . . . Որպէս և գիտէք իսկ՝ զի զիւրաքանչիւր ոք ի ձեզնէ իբրեւ հայր զորդիս՝ մխիթարեաք և սփոփեաք՝ . . . . . Ա. Թեսաղ. Բ. 11։

անոնց ուշադրութիւնը կը հրաւիրենք որ Աւաքեանց և նախնի արքաղան Հայոց Ժողովրդապետը բնաւորութեանը վրայ, և փատահ եմք, որ նոցին յաջորդներն ըլլալնուն համար նոցա սուրբ օրինակին հետեւելու պարտաւորութիւնն ալ քաջ գիտեն շնորհօք սուրբ Հոգւոյն։

Բայց մեք չմոռնալով մեր բուն նպատակը, այսինքն է՝ ի պէտս մանկանց պատրաստած եմք դասագիրքս, ահա այս վերջին հրահանգս ալ ուղղակի տղայոց կը մատակարարեմք. որք թէպէտ այսօր տղայ են, բայց ինչպէս որ օր մը Հայր կամ՝ թէր կամ ծառայ ըլլալնուն հաւանականութիւն՝ Որդեգրութիւն, Օտարայիրութիւն, Տիրայիրութիւն հրահանգներ աւանդեցան իրենց, նոյնպէս ալ օր մը Քահանայական սուրբ կարգի հասնելուն կարելիութեան պատճառաւ՝ Յողովրդապետութեան այս հրահանգն ալ այժմէն կ՚աւանդեմք անոնց. որպէս զի ի մանկութենէ լսեն և ուսանին, թէ հաւատացելոց վրայ հոգեւոր տեսչութիւն ունեցող Հոգւոյ եկեղեցւոյ ինչպէս պարտին սիրել իրենց խնամոցը յանձնեալ քանաւոր հօտը։

Ամենասուրբ Հոգւոյ Աստուա

Քրիստոս՝ որ կըսէր, թէ (1)

Արդարեւ անձամբ ալ կատարեց բանիւ ըսածը։

Իսկ Հովիւք եկեղեցւոյ թէեւ կարող չեն ժողովրդեան վրայ մեռնելու, եւ մանաւանդ այնպիսի հարկի մ՚ալ ներքեւը չեն, սակայն գոնէ այն քաջ Հովուին իւր արեամբ փրկած հօտը՝ ի վայրի դալարաւոյ սրբոյ Եկեղեցւոյ արածելու պարտաւոր ըլլալին մոքէ հանելու չեն։

Սրբազան Առաքեալն Պօղոս մեծ հոգ կը ցուցնէ այս ամենամխամուկ պաշտօնին վրայով. և Եփեսոսի եկեղեցւոյն երէցներուն կը պատուիրէ՝ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ իւր արեամբ փրկած հօտը զգուշութեամբ հովուել (2)։

Այս պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կատարելու պայմաններով Պետրոս առաքեալ իւր Վարդապետէն ընդունած հրամանին համեմատ՝ թէ «արածէ՛ զ ըն-

(1) Հովիւ քաջ զանձն իւր դնէ՚ի վերայ ոչխարաց։ Յոհ. ժ. 11։

(2) Զգոյշ կացէք (կրսէ) անձանց և ամենայն հոտիդ, յորում՚ եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով։ Գործ. Ի. 28։

ըս՝ իմոյ, ինքն ալ Եկեղեցւոյ Հովուաց այսպէս կը պատուիրէ (1)։

Վասն զի այլոց վարդապետ կարգեալ անձինք պարտին ոչ միայն բանիւ խրատել և ուսուցանել, այլ և գործքով ալ օրինակ ըլլալ անոնց։

Այս հրահանգը կուտայ Պօղոս առաքեալն ալ Տիմոթէոսին և Տիտոսին, և հեռուապէս առաքելական ամէն յաջորդաց (2)։

Նաեւ ինքն ալ երկիւղածութեամբ կ՚ըզգուշանայ իւր քարոզութիւնը վրայ, որ չըլլայ թէ ուրիշներուն ուսուցիչ եղած ատենը ինքը անպտուղ մնայ կրսէ (3)։

Եկեղեցականք՝ մանաւանդ կուսակրօնք

(1) Արածեցէք որ՚ի ձեզ Հօտդ է Աստուծոյ, վերակացու լինելով մի իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ աստուծոյ. մի ղօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի իբրեւ ախչելով վիճակացն, այլ լինելով օրինակ հօտին, զի յերեւիլ Հովուապետին՝ ընդունիցիք զանթառամ փառացն զպսակ։ Ա. Պետր. Ե.2—4։

(2) Օրինակ լինիցիք հաւատացելոց՝ բանիւք, դնացիւք, սիրովք, հաւատովք, սրբութեամբ։ Ա. Տիմոթ. Դ. 12։

Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն։ Տիտ. Բ. 7։

(3) Ճնշեմ զմարմին իմ և հնազանդեցուցանեմ, զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ, Ա. Կորնթ. Թ. 27։

երենց հովուական պաշտօնը անթերի կատարելու համար աշխարհային կամ ընտանեկան գործերէ բոլորովին ձեռք քաշելու են։

Յիշենք այն երկու մարդերը, որոնք իւրենց ընտանեկան հոգը նախամեծար բրնեելուն համար յանդիմանեցան Յիսուսէն(1)։

Վասնորոյ ով որ այս սուրբ պաշտօնը վարելու յանձնառու եղած է 'ի ձեռնադրութենէ, ալ անկէ ետքը աշխարհային ամէն հոգ և զբաղմունք բարձի թողի ընելով միայն իւր հովուական պարտաւորութիւնը կատարեալ բռնելու հոգ տանելու է, ինչպէս որ առաքեալը կը խրատէ զՏիմոթէոս, ըսէ (2)։

Հովուական պարտաւորութեան զանցառութիւնը այն քան ատելի է Աստուծոյ, որ Երեմիա մարգարէին բերնով վայ կը կար-

(1) Ասէ Յիսուս ցմիւս եւս, եկ զկնի իմ. և նա ասէ. Տէր՝ հրամայեա՝ ինձ երթալ նախ թաղել զհայր իմ։ Ասէ ցնա Յիսուս, թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, և դու՝ երթ պատմեա զաւրբայութիւնն Աստուծոյ։ Ասէ և այլ ոմն, Եկից զկնի քո Տէր՝ բայց նախ հրամայեա՝ ինձ հրաժարիլ 'ի տանէ իմմէ։ Ասէ ցնա Յիսուս, ոչ ոք արկանէ ձեռն զմանոմ և հայեցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ։ Ղուկ. Թ. 59—62։

(2) Զուարթ կաց յամենայնի, ճգնեա՝ զգործս ուսուցանելն դպրեալ, զպաշտօնդ քո կատարեալ կաց։ Տիմոթ. Դ. 5։

դայ անհոգ հովիւներուն՝ այսպէս (1)։

Եւ ոչ այսչափ միայն, այլ իրենց սրբազան պարտաւորութեան հակառակ՝ անարժան վարմունք ունեցող՝ այսինքն հօտը չի խնայող անձնասէր և շահասէր հովուաց համար ալ դառն կշտամբանք և դատապարտութեան սպառնալիք ըրած է Աստուած՝ Եզեկիել մարգարէին բերնով այսպէս (2),

(1) Վա՜յ հովուաց՝ որք կորուսին և ցրուեցին զխաշինս արօտի իմոյ, ասէ Տէր։ Երեմ. Իգ. 1։

(2) Եւ եղեւ բան Տեառն առ իս՝ և ասէ. Ո՛րդի մարդոյ մարգարէեաց 'ի վերայ հովուացդ Իսրայելի. մարգարէեաց և ասասցես ցհովիւսդ Այսպէս ասէ Տէր Տէր. Ո՛ հովիւք Իսրայելի՝ մի թէ հովիւք զանձինս արածեն. ոչ հովիւք ըզխաշինս արածեն։ Արդ ահաւասիկ զկաթն ուտէք. և զասորն ապանիք. զպարարան զենուք, զխաշն իմ ոչ արածէք. զլոկարացեալն ոչ զօրացուցանէք. զհիւանդացեալն ոչ բժշկէք. զջարշարեալն ոչ յանձանձեցիք. զբեկեալն ոչ պատուցիք. զմոլորեալն ոչ դարձուցիք. զկորուսեալն ոչ խնդրէք. ՀԱՍԱՍՀԱՐՈՒԱՆ աշխատ արարիք. և ցրուեցան խաշինք իմ, քանզի ոչ գոյին նոցա հովիւք. և եղեն կերակուր գազանաց անապատի. և ցրուեցան. և մոլորեցան խաշինք իմ ընդ ամենայն լերինս, և ընդ ամենայն բլուրս բարձունս. ընդ ամենայն երեսս երկրի ցրուեցան խաշինք իմ և ոչ ոք էր՝ որ խնդրէր, և ոչ այն որ դարձուցանէր։ Վասն այսորիկ հովիւք՝ լուարուք զբանս Տեառն. կենդանի եմ ես ասէ Ադոնայի Տէր Տէր. փոխանակ զի եղեն խաշինք իմ յաւար, և մատնեցան 'ի կերակուր գազանաց անապատի, վասն զի ոչ գոյին հովիւք, և ոչ խնդրէցին զխաշինս իմ. և բուսցին հովիւք զանձինս իւրեանց, և զխաշինս իմ ոչ ա-

Երդ հովուական պաշտման մէջ այդպիսի մեղադրելի ղեղծուածներէն զգուշացնելու նպատակաւ՝ սրբազան Առաքեալը քահանայապետել անպարսաւ վարուց բոլոր հանդամանքն 'ի մի բովանդակելով հետեւեալ հրահանգը կ'աւանդէ Եկեղեցւոյ Տեսուչ նեղուն՝ այսպէս (1)։

Այս մտօք՝ այսինքն թէ անարատ վարուք, և թէ ողջամիտ վարդապետութեան համար շգուշութիւն կը պատուիրէ իւր Տիմոթէոսին՝ այսպէս (2)։

Երդ ուրեմն Եկեղեցւոյ Պաշտօնեայք այս ամէն կատարելութեամբք զարդարեալ՝

բածէին, փոխանակ այնորիկ լուսաւուք հովիւք՝ զգաստամտ Տեառն. այսպէս ասէ Տէր Տէր, ահաւասիկ ես 'ի վերայ հովուացդ, և պահանջեցից զխաշնոն իմ 'ի ձեռաց դոցա. և դադարեցուցից զդոսա յարածելոյ զխաշնոն իմ, և ոչ ևս արածեսցեն զնոսա, և փրկեցից զխաշնոն իմ 'ի ձեռաց դոցա, և ոչ ևս եղէցին դոցա 'ի կերակուր։

Եզեկ. Լդ. 1—10։

(1) Պարտ է Եպիսկոպոսին անարատ լինել՝ որպէս և Աստուծոյ տնտեսի, մի յանդուգն, մի բարկացող, մի թըշնամանող, մի հարկանող, մի զօշաքաղ։

Այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ։ Տիտ. Ա. 7—8։

(2) Զգոյշ լինիցիր անձին և վարդապետութեանդ, և 'ի դմին յամենայնիցիր, զայդ եթէ առնիցես. և զանձն ապրեցուցես, և զլսնսիկ՝ որ քեզն լսիցեն։ Ա. Տիմոթ. Դ. 16։

իրենց նուիրական պաշտօնն այնպէս պարտին վարել, ինչպէս սրբազան Առաքեալը իւր ձեռնասուն հաւատարիմ Աշակերտէն կը պահանջէ՝ ասելով (1)։

Հ. Ի՞նչ է ժողովրդասիրութեան դորձադրութիւնը։

Պ. Ժողովրդեան վրայ գութ և գորով ունենալ՝ անձնուիրութեամբ հանդերձ. որոյ օրինակը կ'երեւի Պօղոս սրբազան Առաքելոյն վրայ, որ կ'ըսէր առ Թեսաղոնիկեցիս (2)։

Հ. Կրօնաւորներէն մանաւորապէս ինչ կը պահանջուի։

Պ. Ուրբոց և այրեաց վրայ հոգ և խնամ տանել, որովհետեւ ըստուած է (3)։

(1) Վշտակից լեր իրրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի։

Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կիւանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հաճոյ լինիցի։

Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ՝ մշակ առանց ամօթոյ, ուղիղ հատանուտել զբանն ճշմարտութեան . . . . . Բ. Տիմոթ. Բ. 3—5. 15։

(2) Որպէս դայեակ մի՝ որ մնուցանիցէ մանկունս, նոյնպէս և մեք զթացաք 'ի ձեզ։

Հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն զԱւետարանն Աստուծոյ, այլ և զանձինս մեր, քանզի սիրելիք մեր եղէք։ Ա. Թեսաղ. Բ. 7—8։

(3) Կրօնաւորութիւն սուրբ և անարատ՝ առ 'ի Աստուծ-

Հ. Հիւանդաց վերաբերեալ՝ ինչ պարտաւորութիւն ունին Քահանայք Եկեղեցւոյ։

Պ. Արմենոյ բժիշկներն հիւանդին մարմնաւոր ցաւը դարմանելու պաշտօնք ունին, իսկ Քահանայք իբրեւ բժիշկ հոգեւոր՝ պարտին առէպ այցելութիւն ընել հիւանդաց, և անոնց վրայ Աղօթք և տուրբ Աւետարան կարդալ՝ թէ՝ ի բժշկութիւն, և թէ՝ ի թողութիւն ներելի մեղաց։

Ու թէ որ վանդաւոր է հիւանդութիւնը, կենարար Արմենոյ և Աբեան մատակարարութեամբ միսիթարել, քաջալերել, և երջանիկ ժահուան պատրաստել զհիւանդը։

Այս առթիւ Յակոբոս առաքեալ կը պատուիրէ հաւատացեալ ժողովրդեան՝ թէ (1)

Հ. Աղին և ժողովրդեան տառապածոյ և՝ ի Հօրէ այս է. այցելու լինել որբոց և այրեաց՝ ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ։

Յակ. ա. 27։

(1) Հիւանդանայցէ ոք՝ ի ձէնջ. կոչեսցէ զերիցուսն եկեղեցւոյն, և արասցեն՝ ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն։ և աղօթքն հաւատովք՝ փրկեսցեն զպշտառեալն, և յարուցցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ գործեալ թողցի նմա։ Յակ. ե. 14—15։

նոյ ներեղութեան ժամանակին ինչ ընել կը պարտաւորին Քահանայք եկեղեցւոյ։

Պ. Յովել մարգարէն այնպիսի ներեղութեան և վշտոյ ժամանակի համար հրահանգ կուտայ Քահանայից, որ ջերմեռանդութեամբ Աստուծոյ աղաչեն, որպէս զի դթայ իւր ժողովրդեան վրայ։

Այսպէս կ՚ըսէ (1),

Հ. Հովիւք եկեղեցւոյ հաւատացելոյ հոգեւոր զարգացմանը վրայ ինչ գաղափարմին ունեցեալու են։

Պ. Հօտաւէր հովիւք տեսնելով ժողովրդեան հաւատոյ հաստատութիւնը՝ և շնորհաց առատութիւնը, կ՚ուրախանան և կը գոհանան զԱստուծոյ, և աղօթք կ՚ընեն անոնց հոգեւոր յառաջադիմութեանն ու յարատեւութեան համար։

Առաքեալը ջերմեռանդութեամբ կը կատարէր այս պարտաւորութիւնը, ինչպէս որ յայտնի է իւր հեռաւոր խօսքերէն, թէ (2)

(1) Քահանայք և Գաշտօնեայք Տեառն՝ ընդ դուռն ի ներսուստ ընդ սեղանն լացցեն և առասցեն, խնայեա Տէր՝ ի ժողովուրդս քոյ, և մի տար զժառանգութիւն քո՝ ի նախատինս՝ տիրել հեթանոսաց՝ ի վերայ նոցա. զի մի ասասցեն՝ թէ ուր է Աստուած նոցա։ Յոլէլ. բ. 17։

(2) Ոչ դադարիմ՝ ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ

Հ. Յողովուրդը քանի որ հաւատոյն վրայ հաստատուն է, Հովիւք եկեղեցւոյ ուրիշ ինչ խնամատարութիւն ընելու են անոնց վրայ։

Պ. Պարտին հոգ տանել՝ որ հաւատացեալք միայն լոկ անպտուղ հաւատով գոհ չըլլան, այլ բարեգործութեամբ ևս զարդարեն իրենց հաւատքը. վասնորոյ պէտք է որ խրատեն զանոնք Յակոբոս առաքելոյն յաղօթս . . . . . ։ Վասն այսորիկ գնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ուստի ամենայն նահապետութիւն յերկինս և յերկրի անուանի, զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց հաստատել զօրութեամբ ի ձեռն Հոգւոյն իւրոյ ի ներքին մարդն, բնակել Քրիստոսի հաւատովք ի սիրտս ձեր՝ սիրով արմատացեալք և հաստատեալք, զի կարող լինիջիք հասանել ընդ ամենայն սուրբս՝ զինչ է լայնութիւն և երկայնութիւն և բարձրութիւն և խորութիւն, ճանաչել զառաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի, զի լցիջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ։ Եփես. Ա. 16. Գ. 14—19։

Վասն այնորիկ և մեք յօրէ յորմէ լուաք, ոչ դադարեմք վասն ձեր աղօթս առնել, և խնդրուածս մատուցանել, զի լցուցուք զգիտութիւն կամայ նորա՝ ամենայն իմաստութիւն և հոգեւոր հանճարով, գնալ ձեզ արժանի տեառն յամենայնի՝ ճոխութեան՝ յամենայն գործս բարութեան պտղաբերք և աճեցուք գիտութեամբն Աստուծոյ. ամենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փառաց նորա՝ յամենայն համբերութիւն և երկայնմտութիւն ուրախութեամբ գոհանալ զԱստուծոյ Հօրէ, որ կոչեացն զձեզ ի մասն վիճակի արքայն ի լոյս։ Կողոս. Ա. 9—12։

բերնովը՝ որ կ'ըսէ (1)։

Հ. Բարեպաշտ և երկիւղած հաւատացելոց ինչ խրախոյս տալու են Հովիւք եկեղեցւոյ։

(1) Զինչ օգուտ իցէ եղբարք իմ՝ եթէ ասիցէ ոք հաւատս ունել, և գործս ոչ ունիցի. մի թէ կարիցէ՞ հաւատքն ապրեցուցանել զնա։

Եթէ եղբայր ոք կամ քոյր՝ իցեն մերկ կամ կարօտեալ աւուրն կերակրոյ, ասիցէ ոք ի ձենջ ցնոսա. երթայք խաղաղութեամբ. ջերմարուք և յագեցարուք, և տայցէ ոչ նոցա զպէտս մարմնոյն՝ զինչ օգուտ իցէ։

Այնպէս և հաւատք եթէ գործս ոչ ունիցի, մեռեալ է առանձինն։

Այլ թերեւս ասիցէ ոք. եթէ դու հաւատս ունիս. և ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն քո առանց գործոց. և ես ցուցից քեզ ի գործոց իմոց զհաւատս (իմ)։

Դու հաւատաս՝ զի մի է Աստուած. բարւոք առնես. և դեւք հաւատան և սարսին։

Կամիս գիտել ով մարդ անտի, զի հաւատք առանց գործոց դատարկ է։

Աբրահամ հայր մեր ոչ ապաքէն ի գործոց արդարացաւ հանեալ ի սեղան զորդին իւր դիտակ պատարագ՝ տեսանես՝ զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա և ի գործոց անտի հաւատքն կատարեցան. և կատարեցաւ գիրն՝ որ ասէ, Հաւատաց Աբրահամ Աստուած, և համարեցաւ նմա յարդարութիւն. և կոչեցաւ բարեկամ Աստուծոյ։

Տեսանէք՝ զի ի գործոց արդարանայ մարդ, և ոչ ի հաւատոց միայն։

Այնպէս և Բահաբ պոռնիկ՝ ոչ ապաքէն ի գործոց արդարացաւ՝ ընկալեալ զլրտեսան, և ընդ այլ ճանապարհ արձակեաց։

Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, այնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են։ Յակ. Բ. 14—15։

Պ. Քաջ հաւատարմացնելու են՝ թէ երկիւղած հաւատացեալները հզօր պաշտպանութեամբ կը պահպանէ Աստուած՝ ըստ այնմ, թէ (1)։

Հ. Խոստովանիլը ինչպէս արծարծելու են խոստովանութեան եկողներուն ջերմեռանդութիւնը։

Պ. Պարտին ցուցանել՝ թէ Աստուծոյ անհուն ողորմութեան առջեւ հոգ չէ, թէ որչափ մեծ մեղաւոր եմք, միայն թէ բաւական է որ ցաւօք խղճի զղջմամբ մեր մեղքերուն վրայ, և դարձի դամբ։

Ինչպիսի Աստուծոյ մարդասէր հրաւէրը (2)։

Հ. Քարոզիչ Աւարդապետը ինչպէս յորդորելու են ժողովուրդը 'ի բարեպաշտութիւն և 'ի բարեգործութիւն։

(1) Բանակիր հրեշտակայ Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք, և պահէ զնոսա։ Սաղ. ԼԴ. 8։

(2) Անօրէնն եթէ դարձցի յամենայն անօրէնութենից իւրոց զոր արար և պահեսցէ զամենայն պատուիրանս իմ, և արասցէ արդարութիւն և ողորմութիւն, կենդանի կեսցէ և մի մեռանիցի։ Ամենայն յանցանք նորա՝ զոր գործեալ է, և ամենայն անիրաւութիւնք նորա զոր անիրաւեալ է, մի յիշեսցին։ այլ արդարութեամբ իւրով զոր արար՝ կեսցէ։ Միթէ կամելով կամիցի՞մ զմահ մեղաւորին ասէ Տէր Տէր՝ որպէս զդառնալ նորա 'ի շար ճանապարհէն եւ զկեանն։ Եզեկ. ԺԸ. 21—23։

Պ. Աստահացնելու են զանոնք, որ Աստուած՝ բարեպաշտից և բարեգործաց հաւատարկեանք խոստացած է իւր անսուտ բերանով, թէ (1)։

Հ. Հապա մոլիներն զգաստացնելու համար ինչ ճարտարութիւն պարտին բանեցնել Քարոզիչք։

Պ. Պարտին բարձրաձայն քարոզել, որ ամբարիշտներու համար մահ սպառնացած է Աստուած։

Թո՛ղ լսեն այնպիսի մեղաւորք անձինք՝ Աստուծոյ ահեղ դատաստանքն իրենց վրայ (2)։

(1) Ա՛յլ մարդն՝ որ արդար իցէ և առնիցէ իրաւունս և արդարութիւն . . . . և ուստիք բուռն ոչ արասցէ, զդրաւ պարտապանին դարձուցանիցէ, յափշտակութիւն ոչ յափշտակիցէ, զհաց իւր տացէ քաղցելոց, և զմերկն զդիցուցանիցէ, զարծաթ իւր 'ի վարձու ոչ տացէ, և տոկոսիւք անդրէն ոչ պահանջիցէ, յանիրաւութենէ զձեռս իւր դարձուցանիցէ, դատաստան արդար առնիցէ ընդ այր և ընդ ընկեր իւր, ըստ հրամանաց իմոց գնացցէ, զիրաւունս իմ պահիցէ և առնիցէ զնոսա, Արդար է նա՝ կենդանի կեսցէ, ասէ Տէրն Տէր։ Եզեկ. ԺԸ. 5—9։

(2) Եւ եթէ ծնանիցի (նա) որդի խռնագնաց, արիւնահեղ, և առնիցէ մեզս, 'ի ճանապարհս հօրն իւրոյ սրդարոյ ոչ գնաց . . . . . զկին ընկերի իւրոյ պղծեաց, և զաղքատն և զանանկն յաղքատահարեաց, և յափշտակութիւն յափշտակեաց, և զդրաւն ոչ դարձոյց . . . . . զարծաթն իւր 'ի վարձու եառ, և վաշխիւ և տոկոսիւք պահանջեաց, նա մի կեցցէ, որ զայն ամենայն անօրէնութիւն արար, մահ նա մի կեցցէ, որ զայն ամենայն անօրէնութիւն արար, մա-

Հ. Կարող են Եկեղեցականք համարձակ կապէս խրատել զմեծատունս և զիշխանս։

Պ. Սարկաւագութիւն է Քահանայից՝ մեծատանց կամ իշխանաց հաճոյանալու նպաստակաւ վատաբար աչառութիւն ընել անոնց. այլ պարտին աղատաբար խրատել զանոնք, ինչպէս որ Պաւղոս Տիմոթէոսին կը պատուիրէր, թէ (1)։

Հ. Քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան հակառակորդներու դէմ ինչ զգուշաւորութիւն պէտք է։

Պ. Տեսուչք եկեղեցւոյ՝ այնպիսի ամբարիշտները պէտք է որ կշտամբեն, և յանդուգն բերանին գոցել տան, որպէս զի պարզամիտները չգայթակղին, և անոնք ալ թերեւս զղջանան (2)։

հրաւ մեռցի, և արիւն նորա 'ի վերայ նորին եղիցի։
Եղեկ. ԺԸ. 10—15։

(1) Մեծատանց՝ որ են յայսմ աշխարհի, պատուէր տաջիր մի հպարտանալ, և մի յուսալ 'ի մեծութիւն մնոտի, այլ Աստուած՝ որ տայ մեզ զամենայն առատապէս 'ի վայելել։ Զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան առատ՝ սիրունս՝ հաղորդս լինել, գանձել անձանց հիմն բարի 'ի հանդերձեալսն, զի բուռն հարկանիցեն զճշմարիտ կենացն։ Ա. Տիմոթ. Զ. 17—19։

(2) Զի պարտ է եպիսկոպոսին . . . . . վերակացու լինել, հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող

Հ. Մեղաւորաց դարձին համար Աստուած ինչ պահանջումն ըրած է Եկեղեցւոյ Հովիւներէն։

Պ. Աստուած՝ սաստկապահանջ հրամանաւ պարտք դրած է Եկեղեցւոյ Հովիւներուն վրայ, որ մեղաւորը զգուշացնեն իւր մոլար ճանապարհէն։

Իսկ այս անհրաժեշտ պարտաւորութիւնը կատարելու անփոյթ եղող Տեսուչներուն պատիժ սպառնացած է։

Ահաւասիկ պատգամը (1)։

լեկ և մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեանն, և զհակառակորդսն կշտամբել։ Քանզի բազումք են անհնազանդք՝ զրախօսք՝ և մոլախաբք. մանաւանդ որ 'ի թլփատութենէ անտի են. զորս պարտ է ըմբերանել. որք զամենայն տունս կործանեն, և ուսուցանեն՝ զոր չէ արժան, վասն կիզաշաղութեան . . . . . վասն որոյ կշտամբեսցես զնոսա խստագոյնս, զի առողջասցին 'ի հաւատս։
Տիտ. Ա. 7—15։

(1) Ո՛ղդի մարդոյ՝ դէտ կացուցի զքեզ տանն Իսրայելի. լուիցես յինէն զպատգամս (իմ), և սպառնասցիս նոցա ի բերանս։ Յորժամ ասիցեմ ցանօրէնն, թէ Մահու մեռանիցիս, և դու ոչ զգուշացուցանիցես նմա, և ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին և դառնալ 'ի չար ճանապարհաց իւրոց՝ և կեալ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից։ Իսկ եթէ դու զգուշացուցանիցես անօրինին, և նա ոչ դարձցի յանօրէնութենէ իւրմէ՝ և 'ի ճանապարհէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, և դու զանձն քո սպա-

Դարձեալ պատգամ Աստուածային (1)։

Հ. Քահանայք ինչպէս կրնան դարձի յորդորել յամառ մեղաւորները։

Պ. Քահանայք և քարոզիչ Աւետեաց, պէտք կրնան ըսել մեղաւորին, «Չէ թէ մեք, այլ Աստուած ինքնին ի դարձ կը հրաւիրէ զմեզ աւրա, և կեանք կը խոստանայ անոնց՝ այսպէս» (2)։

ընցուսցես։ Եւ յորժամ դարձցի արդարն յարդարութենէ իւրոյ՝ և արասցէ յանցանս, արկից տանջանս զգլխով նորա, ինքն մեռցի. քանզի ոչ եթէ յիշեցին արդարութիւնք նորա զոր արար բայց քանզի դու ոչ զգուշացար նմա, զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից։ Եզեկ. Գ. 17—20։

(1) Ո՛ երդի մարդոյ՝ խօսեաց ընդ որդիսդ Ժողովրդեան քո, և ասասցես ցնոսա, Երկիր մի՝ յորոյ վերայ ածիցեմ ես սուր, և առնուցուն ազգք երկրին այր մի յինքեանց, և կացուցանիցեն զնա դէտ. և տեսանիցէ (դէտն) զսուրն եկեալ յերկիրն, և փող հարկանիցէ և ազդ առնիցէ Ժողովրդեանն։

Եւ լսելով լուիցէ (Ժողովուրդն) զձայն փողոյն, և ոչ զգուշացի, և հասանիցէ սուրն և բմբռնեսցէ զնա, արիւն նորա՝ ի գլուխ նորին եսցի։ զի զձայն լուաւ զփողոյն, և ոչ զգուշացաւ, արիւն նորա՝ ի վերայ նորին եղիցի. և նա զի զգուշացոյց, զանձն իւր ապրեցոյց։

Եւ եթէ տեսանիցէ դէտն զսուրն եկեալ, և ոչ նշանակիցէ փողով, և ազգն ոչ զգուշանայցէ, և եկեալ սուրն բմբռնիցէ ի նոցանէ անձն մի, նա վասն անօրէնութեան իւրում բմբռնեցաւ, և զարիւնն նորա՝ ի ձեռաց դիտին խնդրեցից։ Եզեկ. ԼԳ. 2—6։

(2) . . . . . Դարձայք և դարձարուք յամենայն ամբարչութենէ ձերոյ, և ոչ լինիցի ձեզ ի տանջանս անիւ-

Հ. Մեզայ մէջ երբեմն ժամանակ անապաշխար մեղաւորները ինչպէս շահելու են խոստովանահարը։

Պ. Պարտին յիշեցնել այնպիսեաց, որ ապաշխարելու անհոգ մարդոցները պիտի պատուհասին անակնկալ ժամանակի մէջ։

Թոզ լսեն սպառնալիքը (1)։

Հ. Ընդապաշխարը թէ որ շղարշնուելու մահաւորի թմբուութենէն. խոստովանահայրն ուրիշ ինչ հնարիւք կրնայ զդաստացնել զանիկայ։

Պ. Ամեն ճիգն և ջանք ձեռք առնելով՝ դարձեալ հսամտելու է զանիկա, թէ քանի որ ժամանակ կայ պէտք է որ ապաշխարէ. ապա թէ ոչ՝ յաւիտենական կորստեան վտանգին մէջն է։

բաւութեան։ Ընկեցէք յանձանց ձերոյ զամենայն ամբարչութիւնս ձեր՝ զոր ամբարշտեցայք յիս, և արարէք ձեզ սիրտ նոր՝ և ոգի նոր. և արարէք զամենայն զպատուիրանս իմ։ Եւ ընդէր մեռանիցիք տունդ Իսրայելի՝ առ Տէր։ Զի ոչ կամիմ զմահ մեղուցելոյն՝ ասէ Ադոնայի Տէր. այլ զի դարձցի՝ ի ճանապարհաց իւրոց չարաց, և կեցուցցէ զանձն իւր։ Արդ՝ եկայք, դարձարուք և կեցէք։ Եզեկ. ԺԸ. 30—32։

(1) Ցիշեա այժմ ուստի անկար՝ և ապաշաւեա. և զառաջինն գործեա քո արա. ապա թէ ոչ՝ գամ ես վաղվաղակի և շարժեցից զաշտանակս քո՝ ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես։ Յայտն. Բ. 5։

Ահաւասիկ սպառնալիքը (1)։

Հ. Ընդեղջ մեղաւորին յամառութիւնք ներողութեան արժանի է։

Պ. Խոստովանահայրք կամ Քարոզիչք պարտին համարձակ յանդիմանել այնպիսիսները՝ բնաւ աչառութիւն չընելով. ինչպէս որ խստիւ կը պատուիրէ Աստուած (2)։

Հ. Քահանայք ինչպէս կը խրախուսեն կասկածոտ մեղաւորն՝ Աստուած ապաւինելու։

(1) Եւ եղաւ նոցա ժամանակ ապաշխարել զսրտնկութիւն իւրեանց՝ և ոչ ապաշխարեցին։ Ահաւասիկ ես արկանեմ զնա ի հնոց, և զգործակիցս իւր՝ ընդ որս շնացաւ, ի նեղութիւնս մեծամեծս. եթէ ոչ ապաշխարեսցեն ի գործոց իւրեանց։ Յայտն. Բ. 21—22։

Եկին ոմանք ի նմին ժամանակի, և պատմեցին նմա զՅիսուսի) վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա։ Պատասխանի եւ ասէ ցնոսա, համարիք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւոր քան զամենայն Գալիլեացիս. զի այնպիսի անցս կրեցին. ոչ՝ ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցիք, ամենեքեան նոյնպէս կորնչիցիք։ Զամ նոքա՝ ուր թուատասանքն յորոց վերայ աշտարակն անկաւ ի Սելոամ, և սպան զնոսա, համարիք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են Յերուսաղէմ. ոչ՝ ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցիք, ամենեքեան նոյնպէս կորնչիցիք։ Ղուկ. ԺԳ. 1—5։

(2) Զոչեա զբերանամբ՝ և մի խնայեր։ բարձրացս իբրեւ զփողոց զբարբառս քո։ պատմեա Ժողովրդեան իմում զմեղս նոցա, և տանն Յակոբայ զանօրէնութիւնս նոցա։ Եսայ. ԾԸ. 1։

Պ. Թոզ ծանուցանեն՝ թէ Աստուած ապաւինեալք երբեք չեն զրկուիր յողորմութենէ, այլ օրհնութիւն կընդունին Աստուծմէ (1)։

Հ. Յուսահատեալ մեղաւորին յուսահատութեանն ինչ դարման տանել պարտին խոստովանահայր Եղբայրունք։

Պ. Աստուծոյ անհուն ողորմութիւնն յիշելով՝ պէտք է քաջալերեն յուսահատեալը, վստահացընեն իւր փրկութեանը վրայ՝ Աստուծոյ անկեղծասաձիր խոստումներովը. զոր խօսած է Եղեկիէլ մարգարէին բերնովը՝ թէ (2)։

(1) Օրհնեալ լեսցի մարդն՝ որ յուսացաւ ի Տէր. և եղիցի Տէր յոյս նորա։ Եւ եղեսցի իբրև ծառ զուարճացեալ ի գնացս ջուրց. և ընդ գնացս ջուրց ձգտեցուսցէ զարմատս իւր, և մի երկիցէ յորժամ հասանիցէ ասօղ։ Եւ եղեսցի սաեղն նորա անտառացեալ շուրջ զնովաւ. յամէ երաշտութեան մի երկիցէ և մի կասեսցէ ի տալոյ զպտուղս։ Երէմ. ԺԷ. 7—8։

(2) Ցասել խնամ ցամքարիշան՝ թէ Մահու մեռջիր, և դարձցի (նա) ի մեղայ իւրոց, և արասցէ իրաւունս արդարութիւն, և զգրաւ պարտապանին ի բաց տացէ, և զյափշտակութիւնն դարձուցանիցէ. ի հրամանս կենաց գնասցէ՝ շառնել անիրաւութիւն, կերսցէ կերսցէ, և մի մեռցի։ Ամենայն մեղք իւր՝ զոր մեղաւ, մի յիշեսցին, զի իրաւունս և արդարութիւն արար. նոքիմբք կեցցէ։ Կենդանի եմ ես ասէ Ադոնայի Տէր, ոչ կամիմ զմահ ամբարշտին՝ որպէս զի դառնալ նորա ի չար ճանապարհէն իւրմէ զկեալն։ Դառ-

Հ. Քահանայք ինչպէս կրնան քաջալերել այնպիսի մեղաւորները, որք թէպէտ յուսահատ չեն, բայց ապահով ալ չեն ի ընենց փրկութեանը վրայ։

Պ. Դաւթի խրատը ուան այնպիսիներուն, որ Աստուած ապաւինին հանդերձ բարեպաշտութեամբ (1)։

Հ. Հովիւք եկեղեցւոյ քաղաքականութեան վերաբերեալ պարտաւորութիւններ ալ ունին։

Պ. Պարտին հովիւք միշտ խրատել դժողովուրդը, որ Թագաւորի և իշխանութեան հնազանդ ըլլան։

Պօղոս առաքեալ այս նպատակաւ հետեւեալ պատուէրը կը դրէ Տիտոսին (2)։

Պօղոս ինքնին ուղղակի ալ կը պատուիրէ Հռովմայեցի հաւատացելոց թէ (1)։

Պետրոս ալ այս հնազանդութեան կը յորդորէ հաւատացեալները՝ այսպէս (2)։

Դարձեալ պարտաւոր են Հովիւք յորդորել զժողովուրդը, որ իշխանութեան պահանջած տուրքերը անտրտունջ վճարեն։

Այսպէս կը յորդորէր Առաքեալը զՀռովմայեցիս (3)։

Նաեւ ժողովրդեան պարտին յիշեցնել Տէառն մերոյ այն Աստուածային հրահանգը, թէ (4)։

Հ. Թէ որ Եկեղեցականներէն մէկը յանցաւոր գտնուի, ով կը դատէ զանիկայ։

(1) Ամենայն անձն՝ որ ընդ իշխանութեամբ իցէ, 'ի հընազանդութեան կացցէ, քանզի ոչ ուստեք է իշխանութիւն եթէ ոչ յԱստուծոյ. և որ են, յԱստուծոյ կարգեալ են։ Այսուհետեւ որ հակառակ կայ իշխանութեան, Աստուծոյ հրամանին հակառակ կայ, և որք հակառակին կան. անձանց դատաստան ընդունին։ Հռովմ. ԺԳ. 1—2։

(2) Հնազանդ լիցուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն տեառն. եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել ումեքն, և թէ դատաւորաց՝ իբրեւ 'ի նմանէ առաքելոց 'ի վրէժխնդրութիւն չարագործաց, և 'ի գովութիւն բարեգործացն։ Ա. Պետր. Բ. 13—14։

(3) Վասն այնորիկ և հարկս հարկանիք, զի Աստուծոյ սպասաւորք են 'ի նոյն կանխեալք։ Արդ՝ հատուցէք իւրաքանչիւր զպարտս, որում զհարկ՝ զհարկն, որում՝ զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն. որում զպատիւ՝ զպատիւն։ Հռովմ. ԺԳ. 6—7։

(4) Տուք զկայսերն՝ կայսերս, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Մատթ. ԻԲ. 21։

Պ. Յանցանքը թէ որ լոկ կրօնական է, պէտք է որ եկեղեցւոյ հոգեւոր վարչութիւնը դատէ յանդիմանէ զյանցաւորը 'ի ներկայութեան պաշտօնակցաց՝ 'ի խրատ և 'ի զգուշութիւն այլոց։

Առաքեալը այս բանին վրայ սատակապէս պատուէր կուտայ իւր աշակերտին՝ ըսելով (1)։

Հ. Վարդապետք եկեղեցւոյ վարձուց ակնկալութեամբ պիտի քարոզեն Քրիստոսի աւետարանը՝ ժողովրդեան։

Պ. Քարոզչաց անհրաժեշտ պարտաւորութիւնն է ձրի աւետարանել ժողովրդեան, վասն զի իրենց մարմնաւոր ապրուստը ժողովրդէն իրը նուէր պիտի ընդունին, և չէ թէ իրը դին քարոզութեան։

Առաքեալը իւրին հաւատարմութեամբ այս հարկին ներքեւ կը ճանաչէ ինքզինքը՝ ու կըսէ (2)։

(1) Զերիցուէ չարախօսութիւն մի ընդունիցիս, բայց եթէ երիւք և երիւք վկայիւք։ Իսկ զոք մեղանչէնն առաջի ամենեցուն յանդիմանեա, զի և այլն երկիցեն։ Վկայութիւն գնեմ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի և ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես առանց մեծահաճութեան, մի ինչ առնել աչառութեամբ։ Ա. Տիմոթ. Ե. 19—21

(2) Եթէ աւետարանեմ, ոչինչ են ինձ պարծանք, քանզի հարկ 'ի վերայ կայ։ բայց վայ է ինձ՝ եթէ ոչ աւետարանեմ։ Եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ և եթէ ակամայ՝ անտեսութիւն յանձն է ինձ։ Եւ արդ՝ զի՞նչ վարձք իցեն ինձ, (բայց) եթէ յաւետարանին ձրի տայց զաւետարանն, զի մի զգործիցեմ ինչ իշխանութեամբս իմով յաւետարանի մեջ։ Ա. Կորնթ. Թ. 16—18։

ՅՈՐԴՈՐԱԿ ԱՌ ԱԶԳԱՑԻՆ ՄԱՆԿՈՒՆՑ

ԵՒ

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի՛րդեակ՝

ԻՐԱՒԱՆԳԻՍ բովանդակութիւնը ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ կ'առաջնորդէ զքեզ. որովհետեւ Ազգիդ անհատները կամ ծնողք են կամ Որդիք, կամ Եղբարք ու Քոյրք, կամ Ազգատք և Հարուստք, կամ Տիրաք և Ծառայք. կամ Եկեղեցականք և Աշխարհականք, և այլն, որոց մէկն ալ հարկաւոր է, կամ պիտի ըլլայ, վասնորոյ դու այս փոքրիկ գրքուկիս միջոցաւ եթէ արժանապէս հրահանգին Աստուածասիրութեամբ հանդերձ սիրել այս քանի մի տեսակ անձերը՝ իրը մասունք բոլորի մը, ահա ամբողջ Ազգդ սիրած կ'ըլլաս, և այն ատեն ոչ միայն ծնողասէր՝ Եղբայրասէր, Ազգատասէր, Տիրասէր՝ Բարեհանդասէր, և այլն՝ կը հաստատիս, այլ և Ազգասէր պանծալի անուն ալ իրաւամբ ժառանգելու արժանաւորուս

թիւնը կ'ունենաս, որ շողոքորդութիւնը շատ անգամ ոմանց անարժան անձանց ալ կնծայէ այս պատուական տիտղոսը։

Փափաքելի է ինձ՝ որ դու ալ ես ալ մեր բոլոր Աղգայնոց հետ՝ ըլլամք Ճշմարիտ Աղբարսէր և Աղգասէր, որով միայն վաստահ կրնամք ըլլալ, թէ եմք և Աստուածասէր վասն զի (1)։

(1) Աստուած ուրուք երբէք չէք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս, Աստուած 'ի մեզ բնակէ և սէր նորա 'ի մեզ կատարեալ է։ Աստուած սէր է, և որ կայ 'ի սէրն բնակեալ է Աստուած, և Աստուած 'ի նմա բնակէ։
Ա. Յովհ. Դ. 12—16։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
Յառաջաբան	3
Հրահանգ Առաջին Աստուածսիրութիւն	7
Հրահանգ Երկրորդ Ընկերսիրութիւն	27
Հրահանգ Երրորդ Եղբայրսիրութիւն	39
Յաւելուած. Անձնասիրութիւն	49
Հրահանգ Չորրորդ Որդեսիրութիւն	55
Հրահանգ Հինգերրորդ Ծնողասիրութիւն	60
Հրահանգ Վեցերրորդ Աղքատասիրութիւն	65
Յաւելուած. Որբ. Այրի. Օտարական	79
Հրահանգ Եօթներրորդ Տիրասիրութիւն	82
Հրահանգ Ութերրորդ Ծառայասիրութիւն	88
Հրահանգ Իններրորդ Քահանայասիրութիւն	93
Հրահանգ Տասներրորդ Ժողովրդասիրութիւն	106
Յորդորակ առ Ազգային Մանկունս, եւ Վերջաբանութիւն	131

ՎՐԻՊԱԿՔ

ԵՐԵՍ	ՏՈՂ.	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
9	24	սիրեսցես,	սիրեսցես.
10	24	որ ինչ,	որ ինչ.
24	17	կամին,	կամքին.
24	22	Ա՛յ,	Ա՛յ.
25	23	սգ տանիցեն,	սուգ տանիցեն.
42	24	պարսպարեսցես,	պատսպարեսցես.
48	8	մարդասպան,	մարդասպան է.
66	7	ջնջին,	հնչին.
72	8	Հ մեղաւոր,	Հ. մեղաւոր.
73	24	ձեռն հասցես,	ձեռնհաս իցես.
83	20	(3)	(1)
86	16—17	զԱնասէթ,	զԱսանէթ.
97	18	հոգւոց,	յոգւոց.
104	22	Ա՛յ.	Ա՛յ.
105	3	ամ,	կամ.
108	25	մխիթարեաք,	մխիթարէաք.
112	6	Յիսուէն,	Յիսուսէն.
116	16	առթիւ,	առթիւ.
117	25	մի ասասցեն,	ասասցեն.
118	29—30	որբոյն,	սրբոյն.
119	34	44	14
128	19	(2)	(1)
128	26	(Ժողովրդոց)	(Ժողովրդոյ)

ՀՀ Ազգային գրադարան
NL0338541